

Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). ծրագրի նախագծման վերաբերյալ Հայաստանի զեկուլյց 2018–2020

Տաթևիկ Մարգարյան, անկախ հետազոտող

Բովանդակություն

I. Ներածություն	7
II. Բաց կառավարման համատեքստը Հայաստանում	8
III. Գործընթացի ղեկավարում և շահագրգիռ կողմերի ներգրավում	17
IV. Հանձնառությունների նկարագիրը	29
1. «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում	32
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն	37
3. Իրական սեփականատերերի գրանցամատյան	41
4. Համայնքային կայքերի արդիականացում	46
5. Ջրային ռեսուրսների պետական կադաստր	51
6. Հողային կադաստր	54
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն	57
8. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ	60
9. Առողջապահական աջակցության ծրագիր	64
10. Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակ	68
11. Հանրային ծառայությունների հետադարձ կապ	71
V. Հիմնական առաջարկներ	75
VI. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները	88
Հավելված I. Գործողությունների ծրագրի մշակման գործընթացում Հայաստանի կատարողականի ամփոփ նկարագիր	91



Զեկույցի սեղմագիր. Հայաստան

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրն արտացոլում է նոր կառավարության ստանձնած՝ բարեփոխումների և թափանցիկության բարելավման խոստումը: Առավել նշանակալի հանձնառությունները վերաբերում են ընկերությունների իրական սեփականատերերի թափանցիկությանը, հողային և ջրային ռեսուրսների կադաստրների բարելավմանը և էլեկտրոնային հանրագրերին: Գործողությունների ծրագրի իրականացման համար կառավարության կողմից հետևողականություն և ջանքերի համակարգում կպահանջվի:

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) միջազգային նախաձեռնություն է, որտեղ պետական բարեփոխումները ստանձնած պաշտոնյաներն ու քաղաքացիական հասարակության առաջնորդները համատեղ ջանքերով գործողությունների ծրագիր են մշակում՝ կառավարությունն ավելի մասնակցային, պատասխանատու և հաշվետու դարձնելու նպատակով: Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ուսումնասիրում է գործողությունների բոլոր ծրագրերը՝ համոզվելու, որ կառավարությունները հետևում են ստանձնած հանձնառություններին: Հայաստանը ԲԿԳ-ին միացել է 2011 թ.: Այդ պահից ի վեր գործողությունների երեք ծրագիր է իրականացվել: Այս զեկույցն ուսումնասիրում է Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի նախագծումը:

Գործողությունների ծրագրի ամփոփ նկարագիր

Հայաստանը 2018 թվականին քաղաքական զգալի փոփոխություններ է վերապրել, որոնց արդյունքում ձևավորված նոր կառավարությունն ավելի մեծ պատրաստակամություն է հայտնել թափանցիկության բարելավման և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով բարեփոխումներ ձեռնարկելու ուղղությամբ:

Աղյուսակ 1. Ամփոփ տվյալներ

Ուսումնասիրվող գործողությունների ծրագիր՝ 4-րդ
Զեկույցի տեսակ՝ Նախագծման զեկույց
Հանձնառությունների քանակը՝ 11

Գործողությունների ծրագրի մշակում

Արդյոք առկա՞ է բազմաշահառու խումբ՝ Այո
Հանրային ազդեցության մակարդակ՝
Համագործակցություն
Հակասություններ ԲԿԳ գործընթացին՝ Ոչ

Գործողությունների ծրագրի նախագծում

ԲԿԳ արժեքներին համապատասխանող հանձնառություններ՝ 11 (100%)
Փոխակերպող հանձնառություններ՝ 2 (18%)
Պոտենցիալ աստղանշված հանձնառություններ՝ 2 (18%)

Գործողությունների ծրագրի իրականացում

Աստղանշված հանձնառություններ՝ Կիրառելի չէ
Ավարտված հանձնառություններ՝ Կիրառելի չէ
ԲԱԲԿ* «զգալի» գնահատականով հանձնառություններ՝ Կիրառելի չէ
ԲԱԲԿ* «ակնառու» գնահատականով հանձնառություններ՝ Կիրառելի չէ

*ԲԱԲԿ՝ Բերե՞լ է արդյոք բաց կառավարման



Հանրային քննարկման համար

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը նշանակալի բարելավում է արձանագրել համատեղ մշակման գործընթացի ընթացքում քննարկումների և հանձնառությունների հավակնոտության տեսանկյունից:

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակումը գործողությունների նախորդ ծրագրի համեմատ իրականացվել է հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության ներգրավվածության ավելի բարձր մակարդակով: Առաջին անգամ հանրային խորհրդատվություններ են անցկացվել երկրի բոլոր տասը մարզերում՝ որպես թիրախային խմբեր ներառելով նաև քաղաքացիական ծառայողներին և երիտասարդներին: Ընդհանուր առմամբ, երկրի ողջ տարածքում անցկացվող խորհրդակցությունները հանգեցրին ծրագրի մշակման ավելի համագործակցված գործընթացին, իսկ օրենսդրական փոփոխությունների պատրաստակամությունն օգնեց ստեղծելու նախորդ փուլի համեմատ ավելի հավակնոտ ծրագիր:

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրն ուղղված է կառավարության ունեցած տեղեկատվության մատչելիության բարձրացմանը և հանրության մասնակցության խթանմանը: Հանձնառությունները ներառում են այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են պետական պաշտոնյաների ակտիվների հայտարարագրումը, իրական սեփականատերերի թափանցիկությունը, բյուջեի թափանցիկությունը, բնական ռեսուրսները, առողջապահությունը և կրթությունը: Մի շարք հանձնառություններ հանրության կողմից հետադարձ կապի մեխանիզմներ են ներառում: Գործողությունների չորրորդ ծրագիրն առաջին անգամ ներառում էր օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ:

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրում ուշադրության արժանի հանձնառություններից է իրական սեփականատերերի գրանցամատյանի ստեղծումը, որի պիլոտային գործարկումը կներառի հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունները: Գործողությունների ծրագիրը ներառում է նաև հողային և ջրային ռեսուրսների կադաստրների բարելավման հանձնառություններ:

Աղյուսակ 2. Ակնառու հանձնառություններ

Հանձնառության նկարագիր	Հետագա քայլեր	Կարգավիճակը իրականացման փուլի ավարտին
3. Իրական սեփականատերերի գրանցամատյան Ստեղծել և գործարկել ընկերությունների իրական սեփականատերերի համապարփակ և բաց գրանցամատյան, որը կփորձարկվի հանքարդյունաբերական ոլորտում:	Կառավարությունը կարող է է՛լ ավելի բարելավել իրական սեփականատերերի թափանցիկությունը՝ իրական սեփականատերերի գրանցամատյանում պարտադիր հիմքով ընկերությունների ավելի լայն շրջանակ ներառելու միջոցով: Մասնավորապես, կառավարությունը կարող է իրական սեփականատերերի պարտադիր հրապարակման պահանջ սահմանել լրատվական ընկերությունների համար: Իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները ստուգելու նպատակով կառավարությունը կարող է	Նշում՝ գնահատվելու է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:

Հանրային քննարկման համար

	միջազգային համագործակցություն ձևավորել և տեղեկություններ ձեռք բերել տեղական ու օտարերկրյա գրանցամատյաններից: Ընկերությունների կողմից կեղծ տեղեկատվության ներկայացման համար պետք է ծանրակշիռ պատժամիջոցներ սահմանել:	
5. Ջրային ռեսուրսների պետական կադաստր Ստեղծել տեղեկատվական բազա, որը կամփոփի Հայաստանի ջրային բոլոր ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները և հնարավորություն կտա ստուգելու ջրօգտագործման թույլտվությունները:	Կառավարությունը պետք է կազմի ջրային ռեսուրսների շտեմարանը և մեխանիզմներ մշակի տվյալների բազայի շարունակական թարմացման համար: Կառավարությունն ու քաղաքացիական հասարակության շահագրգիռ կազմակերպությունները կարող են տեղեկատվական բազայի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ իրականացնել այն համայնքներում, որտեղ ջրային ռեսուրսների օգտագործումը խնդրահարույց է:	Նշում՝ գնահատվելու է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:
6. Հողային կադաստր Ապահովել հողային բազայի հասանելիությունը հանրությանը քարտեզի ձևաչափով, ըստ տեղանքի որոնելու հնարավորությամբ:	Հանձնառությունն իրականացնելու համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխություններ ընդունել, որպեսզի հողատարածքների սեփականատերերի մասին տեղեկությունը տրամադրվի անվճար:	Նշում՝ գնահատվելու է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:

Առաջարկներ

ԱՀՄ առաջարկները նախատեսված են գործողությունների հաջորդ ծրագրի մշակման գործընթացում ներառելու և ընթացիկ ծրագիրն իրականացնելիս հաշվի առնելու համար:

Աղյուսակ 3. ԱՀՄ հինգ առանցքային առաջարկ

1. Բարելավել բազմաշահառու աշխատանքային խմբի արդյունավետությունը. • մշակել աշխատանքային խմբի գրավոր ընթացակարգ, որը կկանոնակարգի խմբի կազմը և կապահովի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արդար և թափանցիկ ընտրություն, • որպես պետական մարմինների ներկայացուցիչ ներգրավել համապատասխան որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող անձանց, • ԲԿԳ գործընթացներում օրենսդրի մասնակցությունն ապահովելու նպատակով աշխատանքային խմբում ներառել խորհրդարանի ներկայացուցիչներին:
2. Բարելավել ծրագրի համատեղ մշակման գործընթացը՝ հանձնառությունների համար առաջարկների հավաքագրման, գտման, վերլուծության և ձևակերպման մեթոդներ մշակելով և հանրությանը հատակ հիմնավորումներ ներկայացնելով առաջարկված հանձնառությունների ներառման կամ մերժման վերաբերյալ:
3. Շարունակել ջանքեր գործադրել ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ընդլայնման, ինչպես նաև իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների մոնիթորինգի և ստուգման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:
4. Դատական համակարգում թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանն ուղղված հանձնառություններ նախատեսել, օրինակ՝ դատական բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման արդյունքների հրապարակում, դատավորների նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում, դատական խորհուրդների թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդում:
5. Շարունակել ջանքերը կրթության և առողջապահության ոլորտներում տեղեկատվության մատչելիության, հանրային կարծիքի հավաքագրման և մոնիթորինգի մեխանիզմների բարելավման ուղղությամբ:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Տաթևիկ Մարգարյանն անկախ հետազոտող է, մասնագիտությամբ՝ սոցիոլոգ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունների փորձառությամբ: Նա աշխատել է մի շարք հասարակական կազմակերպություններում, իսկ ներկայումս խորհրդատվություն, դասընթացներ, հետազոտական ու վերլուծական ծառայություններ է տրամադրում մի շարք տեղական ու միջազգային կազմակերպությունների:

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) նպատակը նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից կոնկրետ հանձնառությունների ստանձնումն է թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների



Հանրային քննարկման համար

օգտագործման ուղղությամբ: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ)
գնահատում է գործողությունների ազգային ծրագրերի մշակման և իրականացման
գործընթացը՝ շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը խթանելու և
հաշվետվողականությունը բարելավելու նպատակով:

I. Ներածություն

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) միջազգային նախաձեռնություն է, որտեղ պետական բարեփոխումները ստանձնած պաշտոնյաներն ու քաղաքացիական հասարակության առաջնորդները համատեղ ջանքերով գործողությունների ծրագիր են մշակում՝ կառավարությունն ավելի մասնակցային, պատասխանատու և հաշվետու դարձնելու նպատակով: Գործողությունների ծրագրի հանձնառությունները կարող են բխել ինչպես արդեն իսկ առկա գործընթացներից կամ սահմանել իրականացվող բարեփոխումներին նպաստող նոր միջոցառումներ, այնպես էլ գործողություններ նախատեսել բոլորովին նոր ոլորտներում: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ուսումնասիրում է գործողությունների բոլոր ծրագրերը՝ համոզվելու, որ կառավարությունները հետևում են ստանձնած հանձնառություններին: Քաղաքացիական հասարակության և կառավարության ղեկավարներն օգտագործում են ուսումնասիրությունը՝ իրենց առաջընթացը վերլուծելու և որոշելու համար, թե արդյոք կատարված գործողությունները փոփոխություն բերել են մարդկանց կյանքում:

Հայաստանը ԲԿԳ-ին միացել է 2011 թ.: Այս զեկույցն ուսումնասիրում է Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացը և Հայաստանի գործողությունների չորրորդ՝ 2018-2020 թթ. ծրագրի բովանդակությունը:

ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) համագործակցել է անկախ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի հետ, որն իրականացրել է այս ուսումնասիրությունը: ԱՀՄ նպատակն է՝ աջակցել հետագա հանձնառությունների մշակման և իրականացման շուրջ երկխոսության ծավալմանը: ԱՀՄ մեթոդոլոգիային ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք

<https://www.opengovpartnership.org/about/independent-reporting-mechanism>:

II. Բաց կառավարման համատեքստը Հայաստանում

2018 թվականին Հայաստանն անցել է հեղափոխական քաղաքական փոփոխությունների միջով, իսկ նոր իշխանությունը հայտարարել է կոռուպցիայի դեմ պայքարելու և քաղաքացիներին որոշումների կայացման կենտրոնում պահելու իր պատրաստակամության մասին: Նոր ղեկավարությունը բարեփոխումների նկատմամբ ավելի մեծ հակվածություն է դրսևորել, ինչը դրական նշան է Հայաստանում բաց կառավարման գերակայությունների, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարի և թափանցիկության բարելավման համար: Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրն արտացոլում է այդ առաջնահերթություններից մի քանիսը, սակայն ծրագրի իրականացման համար կառավարության կողմից հետևողական քաղաքական կամք և ջանքերի համակարգում կպահանջվի:

2018 թ. Հայաստանն անցավ քաղաքական նշանակալի փոփոխությունների միջով, որոնք լայնորեն հայտնի են որպես «թավշյա հեղափոխություն»: 2018 թ. գարնանը տեղի ունեցան զանգվածային բողոքի ակցիաներ: Յուրեքը կազմակերպվել էին ի պատասխան 2008 թվականից երկրի նախագահ Սերժ Սարգսյանի՝ վարչապետի պաշտոնին անցնելու միջոցով իշխանության ղեկավար մնալու փորձի: Սա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո երկրի քաղաքական համակարգը կիսանախագահականից դարձավ խորհրդարանական: Բողոքի շարժումը ղեկավարում էր նախկին լրագրող, ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: Շարժումն ավելի մեծ թափ ստացավ 2018 թվականի ապրիլի 17-ից հետո, երբ խորհրդարանը վարչապետի պաշտոնում ընտրեց Սարգսյանին:

Երկրի ողջ տարածքով օրեր շարունակ տևած քաղաքացիական անհնազանդության ակցիաներից և զանգվածային ցույցերից հետո ապրիլի 23-ին Սարգսյանը հրաժարական տվեց: Յուրեքը շարունակվեցին՝ իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) կողմից նոր նշանակում թույլ չտալու նպատակով, մինչև 2018 թ. մայիսի 8-ը, երբ խորհրդարանը Փաշինյանին ընտրեց վարչապետ:

Հաջորդ ամիսների ընթացքում Փաշինյանի ղեկավարությամբ գործող կառավարության կազմը ձևավորվեց ընդդիմադիր կուսակցություններից, իսկ ՀՀԿ-ն շարունակում էր գերիշխել խորհրդարանում: Դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններին Փաշինյանի «Իմ քայլը» դաշինքը հաղթեց ավելի քան 70% ձայնով: Նախկին իշխող կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, չհաղթահարեց խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ նվազագույն շեմը¹:

Դեկտեմբերի ընտրությունները տարբեր զեկույցներում գնահատվել են որպես ավելի ազատ և արդար², քան Հայաստանի նախորդ ընտրությունները: Նախորդ զեկույցներում արձանագրվել են ընտրողների նկատմամբ ճնշումների, ընտրակաշառքի և վարչական ռեսուրսների չարաշահման դեպքեր³: Ի տարբերություն 2017 թ. խորհրդարանական ընտրությունների, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) առաքելությունը ձայների գնման և այլ ընտրակեղծիքների համակարգային ջանքեր չի արձանագրել⁴: Բացի այդ, վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ ընտրությունների արդյունքները չեն վիճարկվել Սահմանադրական դատարանում⁵:

Խորհրդարանական ընտրություններից հետո նոր կառավարությունը հինգ տարվա ծրագիր ներկայացրեց: Ծրագրում մասնավորապես ընդգծվել են երկրի ներքին և արտաքին անվտանգությունը, հակակոռուպցիոն միջոցառումները, մարդու իրավունքների պաշտպանությունը և մրցունակ, մասնակցային ու ներառական տնտեսության համար նախապայմանների ստեղծումը⁶: Ծրագիրը քննադատության արժանացավ ընդդիմության կողմից կոնկրետ սոցիալ-տնտեսական թիրախների բացակայության համար, սակայն ի վերջո հաստատվեց խորհրդարանում՝ իշխող դաշինքի ձայների մեծամասնության շնորհիվ⁷:

«Ֆրիդմ Հաուսի» կողմից Հայաստանը բնորոշվել է որպես «մասամբ ազատ» երկիր: «Ազատությունն աշխարհում» վերջին՝ 2019 թվականի զեկույցում բարելավումներ են արձանագրվել մի շարք ոլորտներում, այդ թվում՝ ընտրական գործընթացներ, քաղաքական բազմակարծություն ու մասնակցություն և հավաքների ազատություն⁸: Ըստ «Էքոնոմիստ ինթելիջենս յունիթի» 2018 թվականի Ժողովրդավարության ինդեքսի՝ Հայաստանը 111-րդ հորիզոնականից տեղափոխվել է 103-րդ հորիզոնական: Որպես «հիբրիդային ռեժիմով» երկիր, Հայաստանն առավել մեծ առաջընթաց է գրանցել Արևելյան Եվրոպայի «հիբրիդային ռեժիմի» երկրների շարքում՝ 2017 թվականի 4,11-ից 2018 թվականին իր վարկանիշը բարձրացնելով 4,79-ի: Մասնավորապես, բարելավվել են կառավարության հաշվետվողականության և թափանցիկության, ինչպես նաև կառավարության նկատմամբ հանրային վստահության գնահատականները⁹:

Կոռուպցիայի դեմ պայքար և հաշվետվողականություն

Կոռուպցիան Հայաստանում պրոբլեմատիկ խնդիր է եղել և հանդիսացել է 2018-ի ապրիլյան ցույցերի հիմնական դրդապատճառներից մեկը: Կոռուպցիայի դեմ պայքարը կարևորվել է նոր կառավարության կողմից հայտարարված գերակայություններում: «Թրանսփարենսի Ինթերնեշնլի» կոռուպցիայի ընկալման ինդեքսում Հայաստանի գնահատականը չի փոխվել, իսկ վարկանիշը (180 երկրների շարքում) 2017-ի 107-ից 110 տեղերի համեմատ 2018-ին զբաղեցրել է 105-113 տեղերը¹⁰:

Սկսած 2003 թվականից՝ Հայաստանը մի շարք հակակոռուպցիոն օրինագծեր և ինստիտուտներ է մշակել, ներառյալ 2017 և 2018 թթ. օրենսդրական փոփոխությունները, որոնք ուղղված էին շահերի բախման վերահսկմանը, ազդարարման մեխանիզմների ներդնմանը և պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի բովանդակության ընդլայնմանը¹¹: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակությունը և հանրությունը կառավարության հակակոռուպցիոն ջանքերը հաճախ անբավարար և ձևական են համարել¹²: Կոռուպցիան շարունակում էր լուրջ խնդիր մնալ պետական կառավարման կարևորագույն ոլորտներում, ինչը մասամբ պայմանավորված էր մոնոպոլացված տնտեսության և պետական պաշտոնյաների շրջանում համատարած շահերի բախման իրավիճակում հակակոռուպցիոն օրենքների կիրառման բացակայությամբ¹³: 2018 թվականի մայիսից հետո նոր կառավարությունը քաղաքական կամք դրսևորեց կոռուպցիայի դեմ պայքարի հարցում և գործնական քայլեր ձեռնարկեց նախկին կոռումպացված պաշտոնյաների դեմ գործ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: ՀՀ գլխավոր դատախազության հաշվետվության համաձայն՝ 2018 թ. կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված նյութերի թիվը գրեթե չորս անգամ գերազանցել է 2017 թ. գործերի թվին, իսկ հարուցված քրեական գործերի թիվը նախորդ տարվա համեմատ 3,6 անգամ ավելացել է¹⁴:

Հակակոռուպցիոն նոր անկախ մարմինը՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, դեռ չի ստեղծվել: Այս հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ օրենքն ընդունվել է 2017 թ. հունիսին: Ըստ օրենքի, 2018 թ. ապրիլին սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ

մտնելուց հետո այս հանձնաժողովը պետք է դառնար Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավահաջորդը¹⁵: Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան մտահոգություն էր հայտնել հանձնաժողովի մասին օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ, որը քննարկվում էր 2019թ. հունիսին, մասնավորապես հանրային քննարկումների բացակայության և հանձնաժողովի անդամների նշանակման հիմնավորման հարցերի կապակցությամբ¹⁶:

2018 թ. դեկտեմբերին կառավարությունը հրապարակեց 2019-2022 թվականների հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը: Այն ներառում էր կոռուպցիայի կանխարգելման, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ հետագա քաղաքականությունները¹⁷: Սակայն հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները հայտարարեցին, որ փաստաթուղթը հավակնոտ չէ, մոնիթորինգի և իրազեկման մեխանիզմներ չի ներառում և չի անցել անհրաժեշտ հանրային քննարկումներ՝ քաղաքացիական հասարակության կարծիքները ներառելու համար¹⁸: 2019 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը վերանայեց ռազմավարությունը և ներառեց ՔՀԿ-ների կողմից ներկայացված բազմաթիվ առաջարկներ: Վերանայված ռազմավարության նախագիծը 2019 թ. հունիսին հրապարակվեց Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում¹⁹:

Կոռուպցիայի և անկախության պակասի խնդիրները պահպանվում են նաև Հայաստանի դատական համակարգում: «Ֆրիդոմ Հաուսի» 2019 թ. զեկույցի համաձայն՝ դատարանները համակարգային քաղաքական ազդեցության են ենթարկվում, իսկ դատական մարմինները կոռուպցիայի մեջ են թաթախված²⁰: Ըստ «Կովկասյան բարոմետր 2017» հետազոտության արդյունքների՝ դատարանները Հայաստանի ամենաքիչ վստահությունը վայելող հաստատություններից են²¹: 2018 թ. ընդունվել է նոր դատական օրենսգրքը, որտեղ հատուկ ուշադրություն է հատկացվել դատական ինքնակառավարմանը: Օրենսգրքի համաձայն, ստեղծվել է նոր անկախ մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդ, որն իրականացնում է դատավորների նշանակումը, առաջխաղացումը և ազատումը, ինչպես նաև կարգապահական գործողությունների նախաձեռնումը²²: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ընդգծել են Խորհրդի անկախության, ինչպես նաև թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը՝ դատավորների անկախությունը հնարավոր ճնշումներից պաշտպանելու համար²³: ՔՀԿ-ի զեկույցներում կարևորվել են նաև դատական համակարգի այլ խնդիրներ, ինչպիսիք են դատավորների ընտրության չափանիշների հստակության պակասը, դատական գործերում շահերի բախման կանխարգելման թույլ մեխանիզմները և կարգապահական տույժերի կիրառման թափանցիկության բացակայությունը²⁴:

Տեղեկատվության մատչելիություն

Ընդհանուր առմամբ, 2003 թվականին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ազատական և առաջադեմ է համարվում: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները և լրագրողները նշում են սահմանված ժամանակահատվածում տեղեկություններ չտրամադրելու, ինչպես նաև թերի կամ խուսափողական պատասխանների կամ չհիմնավորված մերժումների դեպքերի մասին²⁵:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է տեղեկատվություն տնօրինող անձանց պարտականությունները և տեղեկություններ ստանալու կարգը, ձևը և պայմանները²⁶: 2015 թվականին կառավարությունը որոշում ընդունեց, որով սահմանվեց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու

կազմակերպությունների կողմից տեղեկությունների գրանցման, դասակարգման, պահպանման և տրամադրման կարգը²⁷: Այդ կարգը մշակվել էր «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» և այլ ՔՀԿ-ների հետ համատեղ²⁸: Այն հնարավորություն տվեց հարցումներն ուղարկել էլեկտրոնային եղանակով և սահմանեց տեղեկատվության հարցումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվությունները: 2018 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը գործարկեց e-request.am նոր հարթակը, որտեղ օգտվողները կարող են առցանց ուղարկել իրենց դիմումները, բողոքները և տեղեկությունները և հետևել դրանց ընթացքին²⁹:

2017 թվականի մարտին կառավարությունը տեղեկատվության ազատության (SU) նոր օրենքի նախագիծ էր հրապարակել հանրային քննարկման համար³⁰, սակայն ՔՀԿ-ների կողմից նախագիծը քննադատվեց սահմանափակող դրույթների համար³¹: Արդյունքում փոփոխությունը կասեցվեց: Նոր կառավարության ձևավորումից հետո մի շարք ՔՀԿ-ներ մտահոգություն են հայտնել քաղաքական գործիչների և պետական ծառայողների աշխատանքի համակարգվածության և SU կանոնակարգերի վերաբերյալ գիտելիքների պակասի մասին: Օրինակ, նորությունները տեղադրվում էին սոցիալական ցանցերում, այլ ոչ պաշտոնական կայքերում, իսկ անհիմն մերժման կամ ուշացած պատասխանների դեպքերն ավելացան³²: Պետական մարմինների և համայնքների կայքերը կանոնավոր հիմքով չեն թարմացվում և օրենքով պահանջվող լիարժեք տեղեկություններ չեն տրամադրում³³: ՔՀԿ-ները նաև մտահոգված են հեռարձակվող ՁԼՄ-ների համար «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով տրամադրված անհավասար հնարավորությունների և հանրային օպերատորի կողմից ոլորտի մոնոպոլիզացման խնդիրներով և բարեփոխումներ են պահանջում հեռարձակվող ՁԼՄ-ների ոլորտում³⁴: ԲԿԳ ներկայիս գործողությունների ծրագիրը SU դրույթների կամ լրատվամիջոցների կանոնակարգման հետ կապված հարցեր չի ներառում:

Քաղաքացիական մասնակցություն

Քաղաքացիական ազատությունները, ինչպիսիք են խոսքի, հավաքների և միավորումների ազատությունը, երաշխավորվում են ՀՀ Սահմանադրությամբ: Հայաստանի օրենսդրությունն ապահովում է մասնակցության հնարավորությունների լայն շրջանակ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրական նախագծերը ենթակա են հանրային քննարկումների, իսկ այլ իրավական ակտերի նախագծերը կարող են քննարկվել նախագծի մշակման պատասխանատու մարմնի նախաձեռնությամբ³⁵:

Գործողությունների երկրորդ ծրագրի արդյունքում ստեղծված e-draft.am առցանց հարթակը գործում է 2017 թվականից: Պետական մարմինները հարթակում հրապարակում են իրավական ակտերի նախագծերը՝ որպես կանոն, երկու շաբաթվա ժամկետ տրամադրելով հանրային քննարկման համար: Գրանցված օգտատերերը կարող են նախագծին կողմ կամ դեմ քվեարկել և առաջարկություններ ներկայացնել, որոնք հետագայում ներառվում են ամփոփաթեթում՝ յուրաքանչյուր առաջարկի պատասխաններով³⁶: ՔՀԿ-ները և անհատ քաղաքացիները կարող են մասնակցել նախարարություններին կից հասարակական խորհուրդների աշխատանքին, որոնք ստեղծվել են 2016 թ. կառավարության որոշմամբ՝ կանոնավոր հանդիպումների և քննարկումների միջոցով նախարարությունների գործառնություններին և խնդիրներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով: Գործնականում, սակայն, ՔՀԿ-ները նշում են, որ մասնակցությունը միշտ չէ, որ արդյունավետ է. մասնակցության մեխանիզմները և արդյունքները երբեմն թափանցիկ

չեն, իսկ որոշ օրինագծեր ընդունվում են հապշտապ՝ առանց համապատասխան հանրային քննարկման³⁷:

2011 թ. ընդունված «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսվում են հավաքների կազմակերպման ազատական կարգավորումներ՝ որոշ սահմանափակումներով: Ըստ օրենքի, անհրաժեշտ է հավաքի վերաբերյալ նախնական ծանուցում ուղարկել համայնքային իշխանություններին, եթե մասնակիցների ակնկալվող քանակը գերազանցում է հարյուրը: Միննույն ժամանակ, ինքնաբուխ և հրատապ հավաքները կարող են կազմակերպվել առանց նախնական ծանուցման³⁸: Գործնական մակարդակում խաղաղ հավաքների իրավունքի ոլորտում Հայաստանը մարտահրավերներ է ունեցել, այդ թվում՝ խաղաղ ցուցարարների և լրատվամիջոցների նկատմամբ ոստիկանական բռնության դեպքեր, ճնշումներ, հավաքների մասնակիցների նկատմամբ քրեական և վարչական վարույթներ և ոստիկանության խախտումների պատշաճ հետաքննության բացակայություն: Բռնությունների և անհիմն ձեռքավորությունների վերջին դեպքերը արձանագրվել են 2018 թ. գարնան հեղափոխության խաղաղ ցույցերի ընթացքում³⁹:

Ըստ վկայությունների՝ հեղափոխությունից հետո Հայաստանում խոսքի ազատությունը բարելավվել է, իսկ լրատվամիջոցների և լրագրողների իրավունքների խախտումների թիվը՝ զգալիորեն նվազել⁴⁰: Միննույն ժամանակ, լրատվամիջոցների ազատության հետ կապված մարտահրավերները նույնն են մնացել: «Ֆրիդոմ Հաուսի» զեկույցի համաձայն՝ ՋԼՄ-ները դիտարկվում են որպես քաղաքական տարբեր ճամբարների միջև բաժանված, իսկ մասնավորապես հեռարձակվող և տպագիր լրատվամիջոցները՝ քաղաքական շահերի հետ փոխկապակցված⁴¹: Համացանցի ազատության մասին զեկույցում առցանց լրատվամիջոցների գնահատականը բարելավվել է՝ «մասամբ ազատից» դառնալով «ազատ»: Զեկույցում նշվել է, որ «2018 թ. ապրիլին քաղաքական փոփոխություններն իրականացնելու համար քաղաքացիներն արդյունավետորեն օգտվեցին սոցիալական մեդիա պլատֆորմներից, հաղորդակցության հավելվածներից և ուղիղ եթերի հնարավորությունից», և որ կառավարությունը չի սահմանափակում առցանց բովանդակությունը և սոցիալական ցանցերի հավելվածները⁴²:

Ոչ առևտրային կազմակերպությունները չափավոր կարգավորումների են ենթարկվում՝ զրանցման և հաշվետվության ոչ խիստ պահանջներով: Ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության փոփոխությունները ուժի մեջ են մտել 2017 թվականին: «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքով, մասնավորապես, հեռացվեց ձեռնարկատիրական գործունեության արգելքը, կառավարման կառույցներին ավելի մեծ ճկունություն տրվեց, կարգավորվեց կամավորական ռեսուրսների օգտագործման հարցը և կազմակերպություններին թույլ տրվեց դատարանում ներկայացնել իրենց անդամների շահերը բնապահպանական հարցերի շուրջ⁴³: ՔՀԿ-ները և ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերն ակտիվ էին 2018 թվականի ցույցերին՝ իրականացնելով հավաքների մոնիթորինգ և իրավական օգնություն ցուցաբերելով կալանավորվածներին: Քաղաքացիական հասարակության շատ ակտիվիստներ հետագայում ընդգրկվեցին նոր կառավարության կազմում կամ պատգամավոր ընտրվեցին:

Ֆինանսական կայունությունը ՔՀԿ-ների համար կարևոր մարտահրավեր է: Տեղական ֆինանսավորումը և համապատասխան իրավական խթանները բավարար չեն, և շատ կազմակերպություններ մեծապես կախված են միջազգային դոնորների ֆինանսավորումից⁴⁴: Գործողությունների երրորդ ծրագիրն անդրադարձել է պետական ֆինանսավորման թափանցիկության բացակայության խնդրին՝ պետական կառույցներից պահանջելով առցանց հրապարակել դրամաշնորհային մրցույթների արդյունքները և

դրամաշնորհային հաշվետվությունները (Հանձնառություն 2): Գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտին հանձնառությունը լիարժեք չէր իրականացվել: Բացի այդ, այդ հանձնառության հնարավոր ազդեցությունը ցածր է գնահատվել, քանի դեռ չկա դրամաշնորհների մրցակցային բաշխման մեխանիզմ, իսկ ՔՀԿ ֆինանսավորման այլ տեսակների թափանցիկությունը չի ներառվել⁴⁵:

Գործողությունների չորրորդ ծրագիրը ներառում է ՔՀԿ-ների ֆինանսավորման մրցութային համակարգ ստեղծելու հանձնառություն (Հանձնառություն 2):

Բյուջեի թափանցիկություն

Հայաստանում բյուջեի վերաբերյալ հիմնական փաստաթղթերը հանրության համար հասանելի են և հրապարակվում են ՀՀ կառավարության և ֆինանսների նախարարության կայքերում: Գործողությունների երրորդ ծրագրի ընթացքում կառավարությունն ավարտին է հասցրել բյուջեի թափանցիկության հանձնառությունը: Այդ հանձնառության արդյունքում պետական բյուջեն հասանելի է դարձնել ինտերակտիվ էլեկտրոնային հարթակում, որը տեղեկատվության ներբեռնման և մշակման հնարավորություն է տալիս (Հանձնառություն 3):

Պետական բյուջեի մշակման գործընթացին մասնակցելու սակավաթիվ հնարավորություններ կան: Բյուջեի մասին օրենքի նախագիծը տեղադրվում է Իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում, սակայն բյուջետային գործընթացի ժամանակ հանրային լսումներ չեն անցկացվում: Հայաստանը չի մասնակցում Միջազգային բյուջետային գործընկերության «Բաց բյուջեի հետազոտություն» նախաձեռնությանը:

Գնումների պլանները, հայտարարությունները և հաշվետվությունները հասանելի են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի (www.procurement.am) կայքում: Բացի դրանից, 2015 թ. կեսերից գնումների բողոքարկման խորհրդի նիստերը հեռարձակվում են առցանց՝ e-gov.am պորտալում: Այս գործողությունն իրականացվել է ԲԿԳ գործողությունների երկրորդ ծրագրի ընթացքում (Հանձնառություն 5):

Գործողությունների երկրորդ ծրագրում «Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովման» հանձնառությունը (Հանձնառություն 2) ստանձնելուց հետո 2017 թվականին Հայաստանը որպես թեկնածու երկիր միացավ «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը» (ԱՃԹՆ): Պետական պայմանագրերը և բնական պաշարների արդյունահանման նպատակով տրամադրված լիցենզիաները հասանելի են համացանցում⁴⁶: Հայաստանի ԱՃԹՆ աշխատանքային պլանը ներառում է միջոցառումներ, որոնք մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետք է ապահովեն արդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումը: Գործողությունների չորրորդ ծրագրում կառավարությունը պարտավորվել է մեխանիզմներ ստեղծել ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման համար (Հանձնառություն 3):

Գործողությունների այս ծրագրի մշակման ընթացքում կառավարությունն առաջին անգամ ներառեց օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ, ըստ կառավարության ներկայացուցչի՝ խորհրդարանական կառավարման ձևին անցնելու շնորհիվ՝ Դա նպաստեց նախորդ ծրագրերի համեմատ գործողությունների չորրորդ ծրագրի շրջանակների ընդլայնմանը և հավակնոտության բարելավմանը:

⁴⁵ Փաշինյանի դաշինքը «հեղափոխական մեծամասնություն» է ստանում՝ ջախջախիչ հաղթանակ տանելով Հայաստանում, Radio Free Europe/Radio Liberty, 10.12.2018, <https://www.rferl.org/a/armenian-elections-pashinian-my-step-sarkisian-hhk/29645721.html>

² Ազատությունն աշխարհում 2019, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>

³ ՀՀ Ազգային ժողովի 2018 թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ դիտորդական առաքելության միջանկյալ զեկույց (սեյմի 5 - դեկտեմբերի 5, 2018 թ.), «Ականատես» դիտորդական նախաձեռնություն, <https://transparency.am/files/publications/1544210211-0-857134.pdf>; պատվիրակության նախագահ Սաջադ Քարիմի հայտարարությունը Հայաստանում խորհրդարանական ընտրությունների մասին, Եվրոպական խորհրդարան, http://www.europarl.europa.eu/cmsdata/158480/S%20KARIM_statement_DSCA_Parliamentary%20elections%20in%20Armenia.pdf

⁴ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն, Հայաստանի Հանրապետություն – Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 2018 թ. դեկտեմբերի 9, Հայտարարություն նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/405962?download=true>

⁵ Առաջին անգամ խորհրդարանական ընտրությունների արդյունքները չեն վիճարկվելու ՄԴ-ում. Նիկոլ Փաշինյան, Արմենպրես, 24.12.2018, <https://armenpress.am/arm/news/959213.html>

⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2019 թվականի փետրվար, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

⁷ Կառավարության ծրագիրն արժանացավ Ազգային ժողովի հավանությանը, Ազատություն ռադիոկայան, 14.02.2019, <https://www.azatutyun.am/a/29770326.html>

⁸ Ազատությունն աշխարհում 2019, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>

⁹ Ժողովրդավարության ցուցանիշ 2018, Էքոնոմիստ ինթելիջենս յունիթ, <https://www.eiu.com/topic/democracy-index>, Հայաստանը բարելավել է իր դիրքերը 2018 թ. ժողովրդավարության ցուցանիշում, ԱՌԿԱ լրատվական գործակալություն, 09.01.2019, http://arka.am/en/news/politics/armenia_sees_most_improvement_in_democracy_index_2018/

¹⁰ ԿՀՀ 2018 թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, https://transparency.am/storage/CPI2018_results_am.pdf

¹¹ ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», 23.03.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120832>, ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», 09.06.2017, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114355>, ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364>

¹² Կոռուպցիան մնում է Հայաստանի տնտեսության անհաջողության արմատական պատճառը, Anti Corruption Digest, 09.01.2018, <https://anticorruptiondigest.com/anti-corruption-news/2018/01/09/corruption-remains-a-root-cause-for-deplorable-armenian-economy/>; Եվրամիությունը հստակ հայտարարեց՝ պետք է վերջ տալ խաղերին, դադարեցնել ձևական պայքարը կոռուպցիայի դեմ և անցնել իրական գործողությունների. քաղաքագետ, Թերթ.am, 03.06.2017, <https://www.tert.am/am/news/2017/06/03/badalyan/2390895>; Կոռուպցիայի դեմ պայքար՝ իրականություն, թե՞ իմիտացիա, Մեդիա կենտրոն, 02.06.2016, <http://www.media-center.am/en/1464956130>

¹³ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում, Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլ, 2018 թ. հուլիս, <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

¹⁴ 2018 թ. 3,6 անգամ ավելացել են կոռուպցիոն հանցագործության դեպքերով հարուցված քրեական գործերը, Lragir.am, 06.03.2019, <https://www.lragir.am/2019/03/06/423366/>

¹⁵ ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», 09.06.2017, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114355>

¹⁶ Այս տեղեկատվությունը ԱՀՄ-ը ստացել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից՝ հաշվետվության նախահրապարակման փուլում:

¹⁷ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/en/projects/1439>

¹⁸ Հայտարարություն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 08.01.2019, <https://transparency.am/en/statements/view/313>

¹⁹ «Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/1733>

²⁰ Ազատությունն աշխարհում 2019, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>

²¹ Ըստ հարցման արդյունքների, մարդկանց 53 տոկոսն ավելի շուտ չի վստահում կամ բոլորովին չի վստահում, իսկ 16 տոկոսն ավելի շուտ վստահում է կամ լիովին վստահում է դատական համակարգին, աղբյուր՝ Կովկասյան բարոմետր (ԿԲ) 2017, Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և

- տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017 թ. նոյեմբերի դրությամբ), 19 դեկտեմբերի, 2017 թ., https://www.crrc.am/wp-content/themes/crrc/barometer_files_hy/նեղակայացումներ-2017.pdf
- ²² ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119531>
- ²³ Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգը (ճանապարհային քարտեզ), Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Հայաստանի հեղինակյա կոմիտե, Հեղինակյա քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2018 թ. դեկտեմբեր, <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/ArmRefConcept-9.12.2018.pdf>
- ²⁴ «Դատաիրավական բարեփոխումները Հայաստանում. Համակարգային խնդիրներ և նոր մարտահրավերներ», Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստան, 2017 թ. հոկտեմբերի 3, <http://www.osce.org/odihr/349776?download=true>, Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգը (ճանապարհային քարտեզ), Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Հայաստանի հեղինակյա կոմիտե, Հեղինակյա քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2018 թ. դեկտեմբեր, <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/ArmRefConcept-9.12.2018.pdf>
- ²⁵ ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻՋԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈՒ-ilovepdf-compressed.pdf>
- ²⁶ ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 29.09.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372>
- ²⁷ ՀՀ կառավարության N 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=101115>
- ²⁸ Բարեփոխումներ տեղեկատվության ազատության ոլորտում, 15.10.2015, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, <http://www.foi.am/hy/news/item/1494/>
- ²⁹ Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ, <https://www.e-request.am>
- ³⁰ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/en/projects/151/about>
- ³¹ Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋՄ-ների իրավունքների խախտումների մասին 2017 թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 17. 01. 2018, <http://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-13/>
- ³² Տեղի ունեցավ «Ոսկե բանալի, Ժանգոտ կողպեք» ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությունը, 29.09.2018, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, <http://www.foi.am/hy/news/item/1687/>; Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋՄ-ների իրավունքների խախտումների մասին 2018 թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 30.01.2019, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-17/>
- ³³ ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻՋԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈՒ-ilovepdf-compressed.pdf>
- ³⁴ Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 08.01.2019, <http://khosq.am/2019/01/08/հայտարարություն-33/>
- ³⁵ ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.18, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123348>
- ³⁶ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am>
- ³⁷ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017 թ. ՔՀԿ կայունության ինդեքս, ԱՄՆ ՄԶԳ, 2018 թ. սեպտեմբեր, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CSO_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf; •ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻՋԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈՒ-ilovepdf-compressed.pdf>; •Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի զեկույց, ՀԿ կենտրոն, Արագա ՀԿ, 2017, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/07/Հայաստանում-քաղաքականության-մշակման-միասնական-կառավարման-մոդելի-մոնիթորինգի-զեկույց.pdf>
- ³⁸ ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117173>
- ³⁹ Հաշվետվություն 2018 թվականի ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների մասին, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, <http://prwb.am/new/hy/2018/04/20/հաշվետվություն-2018-թվականի-ապրիլի-13-20-ը-խաղ>

⁴⁰ Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին ԽԱՊԿ-ի 2018 թ. երրորդ եռամսյակային զեկույց (հուլիս-սեպտեմբեր), Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 19.10.2018, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-16/>

⁴¹ Ազատությունն աշխարհում 2019, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>

⁴² Համացանցի ազատությունը 2018 թվականին, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-net/2018/armenia>

⁴³ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119456>

⁴⁴ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017 թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018 թ. սեպտեմբեր,

https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CS0_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf

⁴⁵ ԱՀՄ Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, 2017 թ., http://live-ogp.pantheonsite.io/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

⁴⁶ Տե՛ս Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն Հայաստան, www.eiti.am

III. Գործընթացի ղեկավարում և շահագրգիռ կողմերի ներգրավում

Գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացում Հայաստանը նշանակալի բարելավում է արձանագրել հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության մասնակցության առումով: Առաջին անգամ հանրային քննարկումներ են իրականացվել Հայաստանի բոլոր 10 մարզերում, ինչպես նաև առանձին քննարկումներ պետական ծառայողների ու երիտասարդների համար: Օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ ներառելու պատրաստակամությունը հնարավորություն տվեց նախորդ ծրագրերի համեմատ ավելի հավակնոտ ծրագիր կազմել:

3.1 Գործընթացի ղեկավարում

Այս ենթաբաժնում նկարագրված են Հայաստանում ԲԿԳ գործընթացների ղեկավարման կառուցվածքը և ինստիտուցիոնալ համատեքստը:

ԲԿԳ գործընթացում Հայաստանի մասնակցության և ստանձնած հանձնառությունների կատարման համար պատասխանատու հիմնական մարմինը վարչապետի աշխատակազմն է: Աշխատակազմի երկու ներկայացուցիչներ վարում են գործողությունների ծրագրի մշակման ընթացքը, կազմակերպում բազմաշահառու աշխատանքային խմբի հանդիպումները և վերահսկում հանձնառությունների կատարումը: Նրանցից մեկը կառավարության ԲԿԳ կոնտակտային անձն է և ԲԿԳ աշխատանքային խմբի (ԱԽ) քարտուղարը, իսկ մյուսը՝ ԲԿԳ համակարգողը և ԱԽ ղեկավարը: 2018 թ. հունիսին ԲԿԳ-ի համակարգողի դերը կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վահե Զիլավյանից փոխանցվեց ՀՀ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանին: 2018 թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններին Արարատ Միրզոյանն ընտրվեց պատգամավոր, և ԲԿԳ գործընթացի պաշտոնական ղեկավար չկար մինչև 2019 թ. փետրվարի կեսը: Այնուհետև ԲԿԳ համակարգողի դերը ստանձնեց վարչապետի աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանը, թեև դրա վերաբերյալ պաշտոնական որոշումը դեռևս առկա չէ:

Գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատվել է 2018 թ. նոյեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության կառավարության N1307-L որոշմամբ¹:

Կառավարությունը բյուջեից գումար է հատկացնում ԲԿԳ անդամավճարի համար: Սակայն ԲԿԳ գործընթացի, մասնավորապես՝ գործողությունների ծրագրի մշակման, հանրային իրազեկման կամ աշխատանքային խմբի հանդիպումների համար հատկացված հատուկ բյուջե չկա: Կառավարությունն անհրաժեշտության դեպքում շրջաբերականներ է ուղարկում պետական մարմիններին՝ հանդիպումներին մասնակցելու, առաջարկներ ուղարկելու կամ գործողությունների ծրագրի իրականացմանն աջակցելու վերաբերյալ: Ինչպես նշվեց, ԲԿԳ գործընթացի շրջանակներում պարտականություններ են ստանձնել վարչապետի աշխատակազմի երկու աշխատակիցներ, բացի այդ, կառավարության աշխատակազմի ևս երկու աշխատակից ներգրավվել են գործողությունների երրորդ ծրագրի իրականացման

աշխատանքային խմբում: Ներկայումս ԱԽ նոր կազմ դեռևս չի ձևավորվել, սակայն ակնկալվում է, որ բացի կառավարության կոնտակտային անձից և համակարգողից կառավարության առնվազն ևս մեկ ներկայացուցիչ (աշխատակազմի ղեկավարի տեղակալը), որպես 11-րդ հանձնառության պատասխանատու անձ, կընդգրկվի ԱԽ-ում:

Առաջին փոխվարչապետի, իսկ հետագայում՝ աշխատակազմի ղեկավարի ներգրավվածությունը ցույց է տալիս, որ նոր կառավարությունը կարևորում է ԲԿԳ նախաձեռնությունը: ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների ժամանակ Արարատ Միրզոյանն ընդգծում էր, որ կառավարությունը շահագրգռված է աջակցել ԲԿԳ արժեքներին և պատրաստ է գործողությունների հավակնոտ ծրագիր իրականացնել:

3.2 Շահագրգիռ կողմերի ներգրավումը գործողությունների ծրագրի մշակման գործընթացում

2017 թվականին ընդունվեցին ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափորոշիչներ, որոնք ուղղված են աջակցելու ԲԿԳ գործընթացի բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության մասնակցությանը և համատեղ աշխատանքին: Ակնկալվում է, որ ԲԿԳ մասնակից բոլոր երկրները պետք է համապատասխանեն այդ չափորոշիչներին: Չափորոշիչները նպատակ ունեն բարելավելու մասնակցության մակարդակը և որակը ԲԿԳ գործողությունների ծրագրերի մշակման, իրականացման և վերանայման ժամանակ:

ԲԿԳ կառավարման դրույթները սահմանում են նաև մասնակցության և համատեղ մշակման պահանջները, որոնք ԲԿԳ գործընթացին համապատասխանելու համար պետք է պահպանվեն տվյալ երկրի կամ աշխարհագրական միավորի կողմից գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքում: Հայաստանի գործելակերպը **չի հակասել** ԲԿԳ գործընթացին²:

Գործողությունների ծրագրի մշակման գործընթացում համատեղ մշակման և մասնակցության չափանիշներին հետևելու տեսանկյունից Հայաստանի կատարողականի վերաբերյալ ակնարկը տե՛ս հավելված 1-ում:

Աղյուսակ 3.1: Հանրային ազդեցության մակարդակը

ԱՀՄ-ն օգտագործում է «Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի» (IAP2) հանրային մասնակցության գնահատման սանդղակը³: Այս սանդղակը ցույց է տալիս գործողությունների ծրագրի բովանդակության վրա հանրության ազդեցության հնարավոր մակարդակը: ԲԿԳ-ի սկզբունքներին հավաստարիմ լինելով՝ երկրները պետք է ձգտեն հասնել «համագործակցություն» մակարդակի:

Հանրային ազդեցության մակարդակը		Ծրագրի մշակման ընթացքում
Լիազորում	Կառավարությունը որոշումներն ընդունելու լիազորությունը փոխանցել էր հանրության ներկայացուցիչներին	
Համագործակցություն	Առկա էր շարունակական երկխոսություն, ԵՎ հանրությունը մասնակցել է օրակարգի սահմանմանը	✓
Ներգրավում	Կառավարությունն արձագանքում էր հանրության տրամադրած առաջարկներին	
Խորհրդակցում	Հանրությունը կարող էր մասնակցություն ունենալ:	
Տեղեկացում	Կառավարությունը տեղեկացրել է հանրությանը գործողությունների ծրագրի մասին	
Առկա չէ	Քննարկում չի եղել	

Բազմաշահառու խումբ

Գործողությունների չորրորդ ծրագրի մշակումը ղեկավարում էր բազմաշահառու աշխատանքային խումբը: Այն բաղկացած էր 26 անդամներից, այդ թվում՝ 15 ներկայացուցիչ կառավարությունից, 10-ը՝ քաղաքացիական հասարակությունից և մեկը՝ մասնավոր հատվածից: Այս խումբը ստեղծվել էր գործողությունների նախորդ (երրորդ) ծրագրի իրականացումը վերահսկելու համար⁴ և մասնակցում էր նաև չորրորդ ծրագրի մշակմանը: Գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումներին մասնակցում էին գործող աշխատանքային խմբի անդամները և քննարկվող ոլորտներին առնչվող պետական գերատեսչությունների ներկայացուցիչները: Ակնկալվում է, որ գործողությունների չորրորդ ծրագրում ստանձնած հանձնառությունների համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչները ներառվելու են աշխատանքային խմբի նոր կազմի մեջ, իսկ ներկայումս նրանք ընդգրկված են ԲԿԳ գործընթացի վերաբերյալ էլեկտրոնային նամակագրության մեջ⁵: Ձեկույցը գրելու պահին աշխատանքային խմբի նոր կազմի վերաբերյալ որոշում չի կայացվել: 2019-ի ապրիլի 1-ին տեղի ունեցավ հանդիպում շահագրգիռ կողմերի հետ (գործողությունների երրորդ ծրագրի աշխատանքային խմբի անդամների և կառավարության այն ներկայացուցիչների, որոնք պատասխանատու են չորրորդ ծրագրով ստանձնած պարտավորությունների համար): Հանդիպումը նպատակ ուներ քննարկել աշխատանքային խմբում ոչ պետական հատվածը ներկայացնող նոր անդամների ներգրավման հնարավոր մեխանիզմները⁶:

Աշխատանքային խմբի առաքելությունը ԲԿԳ գործընթացում խորհրդատվական դերի կատարումն է: Գործողությունների ծրագրի մշակման ժամանակահատվածում աշխատանքային խումբն կանոնավոր հանդիպումներ էր ունենում, քննարկում հանրությունից և պետական մարմիններից ստացած առաջարկությունները, ստուգում դրանց համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին և այլ չափորոշիչներին, սահմանում առաջնայնություններն ու ձևակերպում հանձնառությունները:

Մասնակցությունն աշխատանքային խմբում բաց է բոլոր ՔՀԿ-ների համար և իրականացվում է նրանց դիմումի հիման վրա: Ցանկացած ՔՀԿ, որը տեղյակ էր ԱԽ-ում մասնակցելու հնարավորության մասին, կարող էր դիմել, և բոլոր դիմողներին դրական

պատասխան է տրվել: Ընտրության համար որևէ ընթացակարգ չի եղել: Միևնույն ժամանակ, հայտերի հավաքագրման բաց հայտարարություն կամ խմբում ներգրավվելու հնարավորության մասին հստակ տեղեկություն կառավարության կողմից չի հրապարակվել: Որպես կանոն, աշխատանքային խմբում նույն ՔՀԿ-ներն են մնացել: Երկրորդից երրորդ գործողությունների ծրագրերի ընթացքում միայն երկու ՔՀԿ և մեկ մասնավոր ընկերություն են ավելացել: Աշխատանքային խմբում ներգրավված ՔՀԿ-ները գործունեություն են ծավալում մարդու իրավունքների, հակակոռուպցիոն, սոցիալական քաղաքականության և տեղեկատվության ազատության ոլորտներում: Աշխատանքային խմբի երկու անդամ մարզային ՔՀԿ-ների ղեկավարներ են, իսկ մյուսները՝ երևանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբի անդամներից ինը կանայք են, ընդ որում կանայք գրեթե հավասար են ներկայացված պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շարքում⁷:

Գործողությունների չորրորդ ծրագրի մշակման ընթացքում, ինչպես և գործողությունների նախորդ ծրագրերի ընթացքում, աշխատանքային խումբը որևէ ներքին ընթացակարգ չի ունեցել: Կառավարության կոնտակտային անձը՝ ԱԽ քարտուղարը, ԱԽ անդամներին օրակարգի նախագծի հետ միասին հրավերներ է ուղարկել՝ նշելով, որ օրակարգը բաց է առաջարկությունների համար: Հանդիպումները վարել է ԲԿԳ ԱԽ ղեկավարը, իսկ արձանագրությունները պատրաստվել են ԱԽ քարտուղարի կողմից, ապա ուղարկվել ԱԽ անդամների վերանայման: Գործողությունների չորրորդ ծրագրի մշակման ժամանակահատվածում աշխատանքային խմբերի հանդիպումները տեղի են ունեցել 2018 թվականի փետրվարի 19-ին, հունիսի 29-ին⁸ և հոկտեմբերի 23-ին⁹: Հանդիպման ծանուցումն ուղարկվել է աշխատանքային խմբի անդամներին: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները և ԱՀՄ հետազոտողը նույնպես հրավիրվել են դիտորդի կարգավիճակով մասնակցելու համար: Հանդիպման մասին տեղեկությունը նախապես չի հրապարակվել, սակայն աշխատանքային խմբի հանդիպումների արձանագրությունները և կամ արդյունքները հրապարակվել են www.ogp.am կայքի «Նորություններ» բաժնում, և ցանկացած ոք կարող է մեկնաբանություն ավելացնել կայքում: Աշխատանքային խմբի նիստերից գատ, մի շարք հանդիպումներ են կազմակերպվել ավելի լայն լսարանի մասնակցությամբ՝ գործողությունների ծրագրի չորրորդ հանձնառությունները քննարկելու նպատակով (մանրամասները՝ հաջորդիվ):

Մասնակցություն և ներգրավում գործողությունների ծրագրի մշակմանը

Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել բազմաշահառու խմբի կազմի և մասնակցության, ինչպես նաև գործողությունների ծրագրի մշակման գործընթացում հանրային իրազեկման առումով: ԱԽ անդամների ակտիվ աշխատանքի և դոնորների ֆինանսավորման առկայության շնորհիվ գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացն աննախադեպ էր և ընդգրկեց Հայաստանի բոլոր մարզերը և գրեթե բոլոր պետական մարմինները: Google-ի առցանց հարցման գործիքն օգնեց գաղափարներ հավաքագրել գործընթացում հետաքրքրված բոլոր անձանցից: Բազմաթիվ քննարկումները հանձնառությունների հղկման և ԱԽ անդամների միջև համաձայնության հասնելու հնարավորություն ստեղծեցին: Առանձին թեմաների շուրջ խմբերի ձևավորումը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց ավելի խորքային և արդյունավետ աշխատանք կատարել հանձնառությունների մշակման ուղղությամբ:

Կառավարության ԲԿԳ թիմը 2018 թ. փետրվարի 19-ի աշխատանքային խմբի նիստին ներկայացրեց գործողությունների չորրորդ ծրագրի ժամանակացույցը¹⁰: Ըստ այդ ժամանակացույցի՝ գործողությունների չորրորդ ծրագրի համար առաջարկությունների հավաքագրումը պետք է իրականացվեր մինչև ապրիլի 30-ը, իսկ գործողությունների ծրագիրը կազմվեր մինչև հունիսի վերջ: Կառավարությունը հրապարակեց նաև գործողությունների չորրորդ ծրագրի հանձնառությունների հիմնական չափանիշները,

ուղեցույցը և ձևաչափը: Ցանկացած ոք էլեկտրոնային փոստով կարող էր հանձնառության առաջարկ ներկայացնել՝ պայմանով, որ այն համապատասխանում է սահմանված չափանիշներին և տրամադրվում տվյալ ձևաչափով: Առաջարկների հավաքագրման հրավերը տարածվել է պետական մարմինների կողմից և հրապարակվել «ԲԿԳ Հայաստան» կայքում և ֆեյսբուքյան էջում¹¹:

2018 թ. մարտին կառավարության աշխատակազմն այցելեց մարզային քաղաքներ՝ իրազեկման բարձրացման և տեղական քաղաքացիական հասարակության և քաղաքացիների կողմից առաջարկությունների ներկայացումը խրախուսելու համար: Այս հանդիպումները տեղի են ունեցել Արմավիրում, Գյումրիում, Իջևանում, Լեռնապատում և Վանաձորում, իսկ մասնակիցների թվում էին ՔՀԿ-ներ, ուսանողներ և լրատվամիջոցների ներկայացուցիչներ¹²: Հանդիպումները կազմակերպվել էին տեղական ՀԿ-ների և մարզային կառավարման մարմինների համագործակցությամբ, որոշ հանդիպումներ լուսաբանվել են տեղական ՋԼՄ-ներում¹³:

2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների և հետագա քաղաքական փոփոխությունների արդյունքում գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացը կանգ առավ մինչև 2018 թ. հունիսի վերջ: Հունիսին վարչապետի աշխատակազմից աշխատանքային խմբի նոր համակարգող նշանակվեց, և աշխատանքային խմբի հերթական հանդիպում կազմակերպվեց՝ հետագա գործընթացները քննարկելու և գործողությունների ծրագրի մշակման ժամանակացույցը վերանայելու նպատակով:

2018 թվականի մայիս-օգոստոս ամիսներին «Թայդս կենտրոնի» (Tides Center) և ԲԿԳ դոնորների թրաստ հիմնադրամի (MDTF) աջակցությամբ ԱԽ անդամ ՔՀԿ-ները՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» (ԻԱԿ) և Արմավիրի զարգացման կենտրոնը (ԱԶԿ), մի շարք հանդիպումներ կազմակերպեցին մարզերում և Երևանում ուսանողների, ՔՀԿ-ների և պետական ծառայողների՝ նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ¹⁴: Հանդիպումների նպատակն էր ԲԿԳ գործընթացի վերաբերյալ իրազեկումը և գործողությունների չորրորդ ծրագրի համար առաջարկությունների հավաքագրումը¹⁵: Սա առաջին անգամն էր Հայաստանում, երբ ԲԿԳ քննարկումներ կազմակերպվեցին երկրի բոլոր մարզերում և դեմատղեմ հանդիպումներ տեղի ունեցան բազմաթիվ պետական մարմինների հետ:

Հանդիպումների ընթացքում մասնակիցները ծանոթացան ԲԿԳ նախաձեռնությանը, ինչպես նաև Հայաստանի գործողությունների նախորդ ծրագրերի ընթացքում իրականացված որոշ հանձնառություններին: Կազմակերպիչները ներկայացրել են նաև չորրորդ ծրագրի համար առաջարկությունների ձևաչափը: Ինչպես գործողությունների նախորդ ծրագրում, 2018 թվականի օգոստոսին գործարկվեց գաղափարների հավաքագրման՝ քրաուդսորսինգի առցանց գործիքը, Google-ի ձևաչափի միջոցով հանրության առաջարկները ստանալու նպատակով¹⁶: Հանդիպումների և գաղափարների հավաքագրման հայտարարության տարածման արդյունքում 42 առաջարկ հավաքագրվել է ԱԽ անդամների և պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներից, ևս 47-ը՝ քրաուդսորսինգի գործիքի միջոցով: Այդ առաջարկներից հետագայում ընտրվեցին գործողությունների ծրագրի հանձնառությունները¹⁷:

Քրաուդսորսինգի գործիքի միջոցով ստացված բազմաթիվ գաղափարներ ներկայացվել էին իրազեկման հանդիպումների մասնակիցների, այդ թվում՝ պետական ծառայողների կողմից: Այս գաղափարները ներառում էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կրթությունը, պետական կառավարումը և էլեկտրոնային կառավարումը, ինչպես նաև հարկային, առողջապահության, գյուղատնտեսության, բնապահպանության և զբոսաշրջության ոլորտները: Միևնույն ժամանակ, քրաուդսորսինգի գործիքի միջոցով հավաքագրված

գաղափարները միշտ չէ, որ համապատասխանում էին ԲԿԳ ձևաչափին, հետևաբար չեն ներառվել գործողությունների ծրագրում¹⁸: Գործողությունների ծրագրում ընդգրկված երկու հանձնառություններ (5-րդ և 9-րդ հանձնառությունները) առաջարկվել են բազմաշահառու աշխատանքային խմբի կազմում չներառված պետական մարմինների կողմից: Ենթադրվում է, որ նրանք ԲԿԳ նախաձեռնությամբ են հետաքրքրվել հանրային իրազեկման հանդիպումների շնորհիվ:

ԱԶԿ-ի և վարչապետի աշխատակազմի համատեղ ջանքերով՝ ներկայացված առաջարկների վերաբերյալ ԱԽ անդամների և շահագրգիռ անձանց մասնակցությամբ մի շարք վալիդացիոն հանդիպումներ են կազմակերպվել 2018 թ. սեպտեմբերի առաջին կեսին: Դրանք կազմակերպվել են MDTF-ի ֆինանսավորմամբ: Վալիդացիոն հանդիպումներին մասնակցելու հրավերն ուղարկվել է ԱԽ անդամներին և քննարկվող հանձնառությունների հետ առնչություն ունեցող պետական մարմիններին: Մի շարք թեմատիկ հանդիպումներ են անցկացվել նաև առանձին թեմաների շուրջ խմբավորված հանձնառությունների քննարկման և ձևակերպման նպատակով: Արդյունքում քննարկվել է առաջարկների մեծ մասը և դուրս են բերվել այն հանձնառությունները, որոնք համապատասխանում էին ԲԿԳ արժեքներին և հավակնոտ էին: Որոշ առաջարկներ խմբավորվել կամ փոփոխվել են¹⁹:

2018 թ. սեպտեմբերին ԲԿԳ-ի Աջակցության թիմի հետ հանդիպման ժամանակ մասնակիցներն առաջնահերթ համարեցին 2018 թ. հունիսին ընդունված կառավարության ծրագրում ներառված քաղաքականության որոշակի ոլորտներ²⁰: Այս առաջնահերթություններից են կոռուպցիայի դեմ պայքարը, ջրային ռեսուրսների կայուն կառավարումը և կրթական ու առողջապահական համակարգերի թափանցիկ կառավարումը: Այս թեմաները քննարկվեցին 2018 թ. սեպտեմբերի 17-ի «Թաունհոլ» քննարկմանը, որին ներկա էին Հայաստանի չորս մարզերի (Արագածոտն, Արարատ, Արմավիր և Կոտայք) և Երևան քաղաքի ՔՀԿ-ների ու պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև քաղաքացիներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Այս քննարկումը ևս կազմակերպվել էր MDTF-ի ֆինանսավորմամբ: Քննարկման կազմակերպիչները նպատակ ունեին բարելավելու մասնակիցների իրազեկվածությունը և հետադարձ կապ հավաքագրել ջրային ռեսուրսների կառավարման, կրթության ու առողջապահության թափանցիկ կառավարման և տեղական կառավարման մարմինների հաշվետվողականության համապատասխան հանձնառությունների վերաբերյալ: Քննարկման մասնակիցները վերահաստատել են ընտրված առաջնությունները և կարևորել վերը նշված ոլորտներում լուծում պահանջող մի շարք հարցեր²¹: Ծրագրի շրջանակներում պլանավորվում է անցկացնել հետագա մարզային քննարկումներ՝ գործողությունների ծրագրի իրականացման փուլում հանրային իրազեկման և ընթացիկ հանձնառությունների վերաբերյալ շահագրգիռ կողմերի արձագանքը հավաքագրելու նպատակով:

2018 թ. սեպտեմբերի 18-19-ին Ադվերանում պետական մարմինների և ՔՀԿ-ների ավելի քան 40 ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպում կազմակերպվեց՝ վարչապետի աշխատակազմի և ԻԱԿ-ի համատեղ ջանքերով, «Թայդս» կենտրոնի ֆինանսավորմամբ: Հանդիպման հիմնական նպատակը գործողությունների չորրորդ ծրագրի հանձնառությունների համատեղ մշակումն էր՝ նախորդ հանդիպումների արդյունքների հիման վրա, որոնց ընթացքում իրականացվել էր առաջարկված հանձնառությունների նախնական ընտրություն²²:

Քննարկումների ընթացքում կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հավասար մասնակցություն ունեին առաջարկված հանձնառությունների իրականացման նպատակահարմարության և հնարավորության

վերաբերյալ կարծիք հայտնելու առումով: Ըստ հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերի և ԱՀՄ հետազոտողի դիտարկումների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շատ ակտիվ էին քննարկումների ընթացքում, իսկ առաջարկված հանձնառություններից շատերը ներկայացվել են հենց աշխատանքային խմբի անդամ ՔՀԿ-ների կողմից: Կառավարության ներկայացուցիչները բաց էին ՔՀԿ-ների առաջարկների համար, ընդունում էին դրանք կամ հակափաստարկներ ներկայացնում, եթե համարում էին, որ առաջարկն իրատեսական չէ կամ արդեն ներառված է (կամ ներառվելու է) այլ ծրագրերում և ռազմավարություններում:

«ԲԿԳ Հայաստան» կայքում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար հրապարակվել են գործողությունների ծրագրի մշակման և քննարկումների վերաբերյալ նորությունները: Գործողությունների ծրագրի նախագիծը հրապարակվել է 2018 թ. հոկտեմբերի 19-ին և նկատառումների համար բաց է եղել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 30-ը²³: Սակայն կառավարությունը որևէ նկատառում չի ստացել:

Գործողությունների չորրորդ ծրագիրը քննարկվել և ավարտուն տեսքի է բերվել հոկտեմբերի 23-ին ԲԿԳ աշխատանքային խմբի նիստում, որտեղ ընտրվել են գործողությունների ծրագրի հրապարակված նախագծի 15 հանձնառություններից 12-ը²⁴: Ինչպես նշվեց, գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատվել է նոյեմբերի 15-ին և ներառել է 11 հանձնառություն: Գործողությունների վերջնական ծրագրում ընդգրկված 11 հանձնառություններից վեցը ներկայացվել են ՔՀԿ-ների կողմից, իսկ մնացածը պետական մարմինների կողմից: Ըստ կառավարության կոնտակտային անձի, մեկ հանձնառություն հանվել է՝ առկա իրավիճակում առաջարկվող գործողությունների արդիականության բացակայության նկատառումներով: Հեռացված հանձնառությունը նպատակ ուներ տեղեկատվություն հրապարակել գործընկեր երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից կառավարությանը տրամադրված վարկերի և դրամաշնորհային ծրագրերի մասին, ներառյալ տոկոսադրույքները, ժամկետները, ծրագրերի շրջանակներում ձեռնարկված միջոցառումները և այլն:

Համատեղ մշակման գործընթացում առկա ձեռքբերումներն արձանագրելով հանդերձ՝ առանձնացնենք մի շարք հարցեր, որոնք հետագա ուշադրության կարիք ունեն:

ԱԽ մանդատը: Աշխատանքային խմբի կազմի և գործունեության վերաբերյալ որևէ գրավոր կարգավորում չկա: Աշխատանքային խմբի կազմը սահմանվել է վարչապետի հրամանով, ԲԿԳ աշխատանքային թիմի առաջարկությամբ: Խմբի լիազորությունների շրջանակը հստակ սահմանված չէ: Պաշտոնապես դա գործողությունների ծրագրի ընթացիկ իրականացման աշխատանքային խումբ է, սակայն փաստացի ԱԽ-ը պատասխանատու է նաև հաջորդ ծրագրի մշակման համար: Ոչ պետական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը նույնպես չի կարգավորվում: ԱԽ ներկայիս կազմում ՔՀԿ-ների մեծ մասն անդամակցում է դեռևս գործողությունների նախորդ ծրագրերից, ներգրավվել են նաև դիմող այլ ՔՀԿ-ներ: Այնուամենայնիվ, շատ ՔՀԿ-ներ տեղյակ չեն մասնակցելու հնարավորության մասին, իսկ ընտրության կամ մասնակցության չափանիշները բացակայում են: Բացի այդ, աշխատանքային խմբի հանդիպումները կանոնավոր բնույթ չեն կրում:

Առաջարկությունների հետադարձ կապ: Չնայած համատեղ մշակման գործընթացի վերաբերյալ լայն հանրային իրազեկման գործընթացին՝ գործողությունների չորրորդ ծրագրի վերաբերյալ առաջարկների բազմաթիվ հեղինակներ որևէ արձագանք չեն ստացել կառավարության կողմից: Թեև հանրային ազդեցության մակարդակը գնահատվել է «համագործակցային», հետադարձ կապի տրամադրումն այս ծրագրի մշակման փուլում ավելի թույլ էր, քան գործողությունների նախորդ ծրագրում: ԱԽ անդամ չհանդիսացող՝ առաջարկներ ներկայացրած ՔՀԿ-ները և անհատները գրավոր

ձևաչափով հանդիպումների հրավերներ և/կամ Google-ի միջոցով ներկայացված առաջարկների պատասխան, ինչպես նաև ԲԿԳ գործընթացի վերաբերյալ այլ տեղեկություններ չեն ստացել (բացի ԲԿԳ Հայաստանի կայքում առկա տեղեկությունից)²⁵: Գործողությունների ծրագրի հաստատումից հետո՝ 2019 թվականի մարտ ամսվա դրությամբ, կառավարությունը ներկայացված առաջարկների վերաբերյալ մերժման հիմնավորմամբ պաշտոնական արձագանք կամ ամփոփաթեթ չի հրապարակել: Այս գործելակերպը չի համապատասխանում ԲԿԳ ստանդարտներին և հետագայում կարող է ԲԿԳ գործընթացներում հանրային մասնակցության մոտիվացիայի նվազման պատճառ դառնալ:

Քննարկված հանձնառությունների համապատասխանությունը: ԱՀՄ հետազոտողի դիտարկումների համաձայն, ինչպես նաև որոշ շահագրգիռ կողմերի կարծիքով՝ գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումների ընթացքում ԲԿԳ արժեքներին հանձնառությունների համապատասխանության վերաբերյալ ընդհանուր տեսլականի բացակայություն էր նկատվում: Պետական մարմինների ներկայացուցիչներից ոմանք նոր էին ԲԿԳ գործընթացում, և անգամ աշխատանքային խմբի «հնաբնակ» անդամները երբեմն համաձայնության չէին գալիս ԲԿԳ չափանիշներին առաջարկների համապատասխանության վերաբերյալ: Այսպիսով, անհրաժեշտ է ապահովել, որ նախքան հանձնառությունների առաջարկությունները քննարկելը բոլոր մասնակիցները ԲԿԳ արժեքների ընդհանուր ընկալում ունենան: Նման ներածական մաս էր տրամադրվել ՔՀԿ-ների հետ մարզային հանդիպումների ժամանակ, ինչպես նաև Աղվերանում կայացած համատեղ քննարկման ժամանակ ԲԿԳ Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գրասենյակի ներկայացուցիչների կողմից: Այլ երկրների լավագույն փորձի ուսումնասիրումը նույնպես օգտակար կլինի ավելի լավ ձևակերպված և հավակնոտ առաջարկներ ստանալու համար:

Հանձնառությունների ընտրություն: Խրախուսելի է, որ աշխատանքային խումբը փորձեց քննարկել բոլոր առաջարկները և համաձայնության գալ ամբողջ խմբով: Այնուամենայնիվ, քանի որ ավելի քան 90 առաջարկ էր ներկայացվել, գործնականում անհնար էր (և ոչ արդյունավետ) բոլոր առաջարկները հատ առ հատ քննարկել ԱԽ անդամների հետ: Քննարկման ընթացքում պարզվեց, որ որոշ առաջարկներ չէին համապատասխանում ԲԿԳ հայեցակարգին, իսկ մյուսները կրկնվում էին: Google հարթակի միջոցով ուղարկված բազմաթիվ առաջարկներ մանրամասն չքննարկվեցին: Հանձնառությունների վերջնական ընտրության չափանիշները հստակ չէին, պարզ չէր, թե որոշում ընդունելու համար արդյո՞ք քվեարկություն պետք է կիրառվի, թե ոչ, իսկ համընդհանուր համաձայնության հասնելը դժվար էր:

Ամփոփելով, կարելի է նշել, որ գործողությունների չորրորդ ծրագրի համատեղ մշակման գործընթացում ԲԿԳ-ի վերաբերյալ իրազեկվածության բարելավում արձանագրվեց մայրաքաղաքից դուրս: Ավելի մեծ թվով քաղաքացիներ տեղեկացան գործընթացին իրենց առաջարկների միջոցով մասնակցելու հնարավորության մասին: Տարբեր պետական կառույցների հետ հանդիպումները նպաստեցին ԲԿԳ գործընթացի նկատմամբ պետական ծառայողների շրջանում հետաքրքրության աճին, քանի որ այն կապված էր նրանց աշխատանքի հետ: Նրանցից շատերը հետագայում առաջարկներ ներկայացրին: Ինտենսիվ խորհրդակցությունները և հանձնառությունների առաջարկների քննարկման նպատակով ձևավորված թեմատիկ փորձագիտական խմբերը նպաստեցին համատեղ մշակման գործընթացում ավելի որակյալ հանձնառությունների ձևավորմանը: Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ սահմանափակումների վերացման հետ մեկտեղ, այս գործընթացը հանգեցրեց նախորդ ծրագրի համեմատ ավելի հավակնոտ ծրագրի ստեղծմանը:

Մինևույն ժամանակ, կարելի է ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք համատեղ մշակման գործընթացն ավելի ներառական կդարձնեն աշխատանքային խմբից դուրս գտնվող դերակատարների համար: Օրինակ, կարելի է նախաձեռնել փորձագետների խմբի կողմից քաղաքացիների ներկայացրած գաղափարների ու թեմաների մշակումը, հետադարձ կապ տրամադրել առաջարկներ ներկայացրած բոլոր շահագրգիռ կողմերին և ավելի համակարգված մոտեցում կիրառել հանձնառությունների ընտրության արդյունավետ և թափանցիկ գործընթացի համար:

Առաջարկություններ մշակման գործընթացում համատեղ մշակման և մասնակցության վերաբերյալ

Ինչպես նշվեց, Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի համատեղ մշակման գործընթացի ուժեղ կողմերն էին բազմաշահառու խմբի մասնակցությունը և հանրային իրազեկումը: Հատկանշական է, որ գործողությունների չորրորդ ծրագրում առաջին անգամ ներառվեցին օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ: Հիմնվելով ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափորոշիչների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի դիտարկումների և առաջարկությունների վրա՝ ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հետևյալ գործողությունները, որոնք կօգնեն բարելավել բազմաշահառու խմբի աշխատանքը և, ընդհանուր առմամբ, համատեղ մշակման գործընթացը.

- Սահմանել ԲԿԳ **աշխատանքային խմբի գրավոր ընթացակարգ** և խմբի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն տալ բոլոր, այդ թվում մարզային ՔՀԿ-ներին: Կառավարությունը կարող է, օրինակ, հրավիրել ՔՀԿ-ների ցանցերի ու կոալիցիաների ներկայացուցիչներին, որոնք կարող են ներկայացնել սովյալ ոլորտում գործող ՔՀԿ-ների տեսակետները, տեղեկություն տարածել և անհրաժեշտության դեպքում կազմակերպել ներքին քննարկումներ: Կառավարությունը պետք է սահմանի մեխանիզմներ ոչ պետական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին արդար և թափանցիկ գործընթացի միջոցով ընտրելու համար և հրապարակայնորեն հայտարարի ներգրավման հնարավորության մասին:
- Կիրառել առաջարկվող հանձնառությունների **ընտրության և քննարկման ավելի համակարգված մեխանիզմներ**: Կառավարության ԲԿԳ աշխատանքային թիմը կարող է հանձնառությունների նախնական գտում կատարել և դրանք դասակարգել ըստ թեմատիկ ոլորտների, որպեսզի յուրաքանչյուր քննարկում իրականացվի կոնկրետ թեմայի շուրջ՝ համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (ներգրավելով առաջարկների հեղինակներին): Քննարկումների մասին պետք է ծանուցում հրապարակել, որպեսզի համապատասխան ոլորտում հետաքրքրված անձինք մասնակցելու հնարավորություն ունենան: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել համապատասխան պետական ներկայացուցիչների մասնակցությունը: Գործողությունների նախորդ ծրագրի մշակման գործընթացում կառավարությունը գտել էր առաջարկները և ԲԿԳ-ին համապատասխանող առաջարկների հեղինակներին հրավիրել առանձին հանդիպումների՝ համապատասխան պետական գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս պրակտիկան կարող է ավելի ծախսարդյունավետ լինել և մասնակցության ավելի մեծ հնարավորություն ապահովել: Համապատասխան պետական մարմինների ներկայությունը նույնպես կարևոր է քննարկման արդյունավետության համար: Գործողությունների չորրորդ ծրագրում որոշ հանձնառությունների շուրջ ձևավորված թեմատիկ խմբերը ցույց տվեցին, որ քաղաքականության առանձին ոլորտներում փորձառու շահագրգիռ կողմերի մասնակցությամբ փոքր քննարկումները կարող են ավելի արդյունավետ լինել շոշափելի արդյունք ստանալու տեսանկյունից:

- Իրականացնել **իրազեկման միջոցառումներ** ոչ միայն մշակման, այլև իրականացման փուլում: ԲԿԳ լավագույն ստանդարտներին համապատասխան գործելու համար անհրաժեշտ է օգտվել ավանդական և առցանց լրատվամիջոցներից, ինչպես նաև վիզուալիզացիաներ, ինֆոգրաֆիկա, տեսանյութեր պատրաստել՝ ոչ փորձագիտական լսարանին գործընթացի և դրա արդյունքների մասին համապատասխան տեղեկություններ և նորություններ տրամադրելու համար²⁶: Աշխատանքային խմբի հանդիպումները հետաքրքրված անձանց մասնակցության համար բաց դարձնելը (այդ մասին ժամանակին և լայնորեն տեղեկացնելու պայմանով) և/կամ քաղաքացիական հասարակության ու ԶԼՄ-ների համար կանոնավոր հաշվետու հանդիպումներ կազմակերպելը կարող է խթանել հանրության մասնակցությունը և հետաքրքրությունը:
- Ապահովել գործողությունների ծրագրի մշակման և իրականացման գործընթացի մասին **տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը** ինչպես ԲԿԳ կայքում, այնպես էլ ֆեյսբուքյան էջում: Անհրաժեշտ է համապատասխան նյութերը և **փաստաթղթերը տրամադրել նախապես**: Օրինակ, շահագրգիռ կողմերին մասնակցելու հնարավորություն ընձեռնելու համար կառավարությունը կարող է տեղեկություն տեղադրել առաջիկա ԱԽ հանդիպման կամ համատեղ մշակման հանդիպումների վերաբերյալ: Այն կարող է նաև հաշվետվություններ ներկայացնել հանրության կողմից տրամադրված առաջարկների և հանձնառությունների կատարման ընթացքի մասին: Բացի այդ, անհրաժեշտ է **ժամանակին արձագանքել** հանձնառությունների առաջարկներ ներկայացրած բոլոր շահագրգիռ կողմերին և տեղեկատվություն տարածել գործողությունների ծրագրի մշակման գործընթացի վերաբերյալ:
- Կառավարության ԲԿԳ աշխատանքային թիմում ներգրավել **տարբեր դերակատարում ունեցող աշխատակիցների**՝ առանձնացնելով նրանց աշխատանքի հիմնական բնագավառները: Այդ բնագավառները կարող են վերաբերել արտաքին հաղորդակցությանը, մոնիթորինգի իրականացմանն ու հաշվետվությունների մշակմանը, գործընթացի ընդհանուր համակարգմանը: Պարտականությունների նման բաշխումը կօգնի ժամանակին և արդյունավետ գործունեություն ծավալել՝ սկսած իրազեկման և առաջարկների հավաքագրման փուլից մինչև գործողությունների պլանի մոնիթորինգի իրականացում և հաշվետվությունների ներկայացում: Շահագրգիռ կողմերը նշում են, որ գործողությունների ծրագրի մշակման ընթացքում կառավարության կոնսուլտային անձը միայնակ պատասխանատու էր կառավարության կողմից կազմակերպված բոլոր միջոցառումների, ինչպես նաև ԲԿԳ աջակցության բաժնի, աշխատանքային խմբի, համապատասխան պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության համար: Այնուամենայնիվ, ավելի արդյունավետ աշխատանքի համար մասնագետների թիմ է անհրաժեշտ:
- **Վերանայել ԱԽ-ում պետական պաշտոնյաների նշանակման չափորոշիչները**՝ ապահովելու համար որոշումների կայացման ավելի մեծ լիազորություններ և/կամ համակարգելու իրավասություններ ունեցող պաշտոնյաների ներառումը, ինչպես նաև ԲԿԳ հասկացությունների և գործընթացի վերաբերյալ նրանց իմացությունը: Որպես կանոն, աշխատանքային խմբում ընդգրկված են կոնկրետ հանձնառությունների պատասխանատուները (օրինակ, որևէ նախարարության որևէ բաժնի ղեկավար), քանի որ հանդիպումների ժամանակ նրանք պարբերաբար զեկուցում են հանձնառությունների կատարման ընթացքի վերաբերյալ: Այնուամենայնիվ, գործողությունների ծրագրի մյուս հանձնառությունները, ԲԿԳ ընդհանուր գործընթացները կամ գործողությունների

նոր ծրագիրը քննարկելիս պետական հատվածի ներկայացուցիչներից շատերը լիազորված չեն ներկայացնելու տվյալ պետական մարմնի տեսակետը և/կամ եզրակացությունը: Բացի այդ, գործողությունների յուրաքանչյուր ծրագրի ընթացքում ԱԽ-ում պետական մարմինների ներկայացուցիչների փոփոխությունը թույլ չի տալիս նրանց խորքային փորձագիտություն ձեռք բերել ԲԿԳ վերաբերյալ ի տարբերություն ՔՀԿ ներկայացուցիչների: Վերջիններս տարիներ շարունակ ԱԽ-ում մասնակցելու արդյունքում գիտելիք և սեփականության զգացում են կուտակում: Անհրաժեշտ է, որ աշխատանքային խմբի մեջ ներգրավված պետական պաշտոնյաները հաղորդակցվեն տվյալ գործակալության բոլոր ստորաբաժանումների հետ և որոշումներ կայացնելու ավելի մեծ լիազորություն ունենան: Հանձնառությունների համար պատասխանատու պաշտոնյաները կարող են պարզապես ներկա գտնվել հանդիպումներին՝ պարտադիր չէ, որ որպես աշխատանքային խմբի անդամ: Նախնական հանդիպումները և գործընթացի վերաբերյալ ներածական ներկայացումները կօգնեն հետագայում ավելի լավ հասկանալ ԲԿԳ գործընթացները:

- Բարելավել **աշխատանքային խմբի ընդգրկվածությունը**: Խորհրդարանի ներկայացուցիչների ներգրավումը կարող է նպաստել խորհրդարանի հետ գործողությունների համակարգման բարելավմանը, մասնավորապես օրենսդրական հարցերում: Մասնավոր հատվածը նույնպես ներկայումս բավարար ներկայացված չէ աշխատանքային խմբում, ուստի պետք է ջանքեր գործադրել շահագրգիռ խմբեր կամ ասոցիացիաներ ներգրավելու համար: Լրատվամիջոցների ներկայացուցիչներին ևս կարելի է ներգրավել գործընթացում, ինչը կարող է նպաստել լրատվամիջոցների աջակցությանը գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ավելի լայն տարածման հարցում:

¹ ՀՀ կառավարության N1307-L որոշումը «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին», 15 նոյեմբերի 2018, <https://www.e-gov.am/gov-decrees/item/31081/>

² ԲԿԳ գործընթացին հակասող գործելակերպ՝ (1) գործողությունների ծրագրի մշակման փուլում երկիրը չի համապատասխանում առնվազն «ներգրավում», կամ իրականացման փուլում՝ «տեղեկացում» մակարդակին, (2) կառավարությունը չի հավաքագրում, փաստաթղթավորում և ԲԿԳ կայքում կամ կայքէջում հրապարակում շտեմարանը՝ ԱՀՄ ուղեցույցին համապատասխան:

³ IAP2 հանրային մասնակցության գնահատման սանդղակ, IAP2, 2014, http://cymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/foundations_course/IAP2_P2_Spectrum_FINAL.pdf

⁴ ՀՀ վարչապետի 1206-Ա որոշումը «Համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին», 16 դեկտեմբերի 2016, <https://www.e-gov.am/decrees/item/16513/>

⁵ Լիլիա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

⁶ ԲԿԳ շահագրգիռ անդամների հանդիպում, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 01.04.2019, <http://ogp.am/hy/news/item/2019/04/01/NGOs/>

⁷ ԲԿԳ հայաստանյան երրորդ գործողությունների ծրագրի աշխատանքները կանոնակարգող աշխատանքային խումբ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <http://ogp.am/hy/working-group/>

⁸ Նոր կառավարության ԲԿԳ աշխատանքային խմբի առաջին նիստը, 30.06.2018, http://ogp.am/hy/news/item/2018/06/30/OGP_WGnew/

⁹ Բաց կառավարման գործընկերության հայաստանյան գործողությունների չորրորդ ծրագրի նախագծի քննարկում, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 24.10.2018, http://ogp.am/hy/news/item/2018/10/24/WG_October/

¹⁰ Տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի նիստը, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 28.02.2018, http://www.ogp.am/hy/news/item/2018/02/28/WG_2018/

¹¹ ԲԿԳ - Հայաստան. Չորրորդ գործողությունների ծրագրի մեկնարկ, 26.02.2018, <http://www.ogp.am/hy/news/item/2018/02/26/4rd/>; ԲԿԳ - Հայաստան, Ֆեյսբուք, https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/1276956362407168?_tn=-R

¹² «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

¹³ Բաց կառավարման գործընկերության իրազեկման արշավը Գյումրուց, Tsayg.am, 30.03.2018, <https://youtu.be/S7AGo9Da3Qs>

¹⁴ Հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ, իրականացվել են երկկողմ խորհրդատվություններ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, Քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հետ: Աղբյուր՝ Հանդիպումներ նախարարությունների հետ «Աջակցություն բաց կառավարման գործընկերությանը» ծրագրի շրջանակներում, Արմավիրի զարգացման կենտրոն, 31.08.2018, <http://infotun.armavirdc.org/1286.html>;

¹⁵ Բաց կառավարման շաբաթ. հայաստանյան գործընթացները ներկայացվեցին ուսանողներին, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 11.05.2018, http://www.ogp.am/hy/news/item/2018/05/11/opengovweek_university/; Գործողությունների 4-րդ ծրագրին ընդառաջ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 22.06.2018,

http://www.ogp.am/hy/news/item/2018/06/22/CSOMeeting_2018/; Իրազեկման հանդիպումներ են իրականացվել մարզային մասնակցությունն ապահովելու նպատակով, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 31.07.2018, http://www.ogp.am/en/news/item/2018/07/31/outreach_FOICA/; Հանդիպումներ նախարարությունների հետ «Աջակցություն բաց կառավարման գործընկերությանը» ծրագրի շրջանակներում, Արմավիրի զարգացման կենտրոն, 31.08.2018, <http://infotun.armavirdc.org/1286.html>; Հանրային մասնակցության հանդիպումներ, Արմավիրի զարգացման կենտրոն, 25.09.2018, <http://infotun.armavirdc.org/1303.html>; Հանրային մասնակցության հանդիպումներ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 15.09.2018, http://www.ogp.am/hy/news/item/2018/09/15/ADC_2018/

¹⁶ Առաջարկների հարթակ ԲԿԳ հայաստանյան Գործողությունների 4-րդ ծրագրի համար, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 01.08.2018, http://ogp.am/hy/news/item/2018/08/01/OnLine_4th/

¹⁷ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

¹⁸ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

¹⁹ Տեղեկությունը հիմնված է ԲԿԳ կոնտակտային անձի և աշխատանքային խմբի անդամ ՔՀԿ-ների հետ հարցազրույցների, ինչպես նաև վալիդացիոն հանդիպումների ընթացքում ԱՀՄ հետազոտողի դիտարկումների վրա:

²⁰ Լիլիա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

²¹ Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) ծրագրի 2018-2020 ռազմավարության հանրային լուծ, Արմավիրի զարգացման կենտրոն, 19.09.2018, <http://infotun.armavirdc.org/1302.html>

²² ԲԿԳ Գործողությունների 4-րդ ծրագրի համատեղ մշակում, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 19.09.2018, http://www.ogp.am/hy/news/item/2018/09/19/AP_coCreation/

²³ Հայաստանի ԲԿԳ չորրորդ Գործողությունների ծրագրի նախագիծը, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, 19.10.2018, http://ogp.am/hy/news/item/2018/10/19/AP4th_draft/

²⁴ Լիլիա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

²⁵ ԱՀՄ հետազոտողի հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցություն գործողությունների չորրորդ ծրագրի վերաբերյալ Google ձևաչափով առաջարկներ տրամադրած չորս ՔՀԿ-ների ներկայացուցիչների և անհատների հետ, 2019 թ. փետրվար

²⁶ ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափորոշիչներ, Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/ogp-participation-co-creation-standards>

IV. Հանձնառությունների նկարագիրը

ԲԿԳ մասնակից պետությունները պետք է ԲԿԳ գործողությունների ծրագիր մշակեն, որը կոնկրետ հանձնառություններ է ներառում առաջիկա երկու տարվա համար: ԲԿԳ շրջանակներում գործողությունների իրենց ծրագրի մշակման գործընթացը պետությունները սկսում են բաց կառավարման բնագավառում առկա գործընթացների վերաբերյալ տեղեկությունների, ներառյալ՝ ռազմավարությունների ու ընթացիկ ծրագրերի հրապարակումից:

Հանձնառությունները պետք է արտացոլեն տվյալ երկրի կամ աշխարհագրական միավորի առանձնահատկությունները և խնդիրները: ԲԿԳ հանձնառությունները պետք է նաև համապատասխանեն ԲԿԳ արժեքներին, որոնք ամրագրված են ԲԿԳ կանոնադրության հիմնադրույթներում և ԲԿԳ-ին միացած բոլոր երկրների ստորագրած Բաց կառավարման հայտարարությունում՝

ԱՀՄ ուսումնասիրության ընթացքում օգտագործվող չափանիշները և մեթոդները կարելի է գտնել ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկում²: Գնահատման հիմնական չափանիշների ամփոփ նկարագիրը ներկայացված է ստորև՝

- **Չափելիություն.**
 - **Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ.** հանձնառության տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող գործողությունները բավականաչափ հստակ և կոնկրետ չեն, որպեսզի հնարավոր լինի հետագա գնահատման գործընթացի միջոցով օբյեկտիվորեն ստուգել դրանց կատարումը:
 - **Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է.** հանձնառության տեքստում սահմանված նպատակները և առաջարկվող գործողությունները բավականաչափ հստակ և կոնկրետ են, որպեսզի հնարավոր լինի հետագա գնահատման գործընթացի միջոցով օբյեկտիվորեն ստուգել դրանց կատարումը:
- **Համապատասխանություն.** այս չափանիշով գնահատվում է հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին: Հիմք ընդունելով հանձնառության տեքստը, որը շարադրված է գործողությունների ծրագրում, համապատասխանությունը սահմանվում է հետևյալ ուղենիշների օգնությամբ.
 - **Տեղեկատվության մատչելիություն.** արդյո՞ք կառավարությունը լրացուցիչ տեղեկություն է բացահայտում կամ բարելավում հանրությանը հասանելի տեղեկությո՞ւյթի որակը:
 - **Հանրային մասնակցություն.** արդյո՞ք կառավարությունը ստեղծում կամ բարելավում է հանրության կողմից որոշումների կայացմանը մասնակցելու կամ ներագրելու հնարավորությունները կամ կարողությունները:
 - **Հանրության առջև հաշվետվողականություն.** արդյո՞ք կառավարությունը հանրությանը տեսանելի նոր հնարավորություններ է ստեղծում կամ բարելավում առկա հնարավորությունները՝ պաշտոնյաներին իրենց գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու համար:
 - **Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության.** արդյո՞ք ԲԿԳ մյուս երեք արժեքներից որևէ մեկի հետ օգտագործվում է տեխնոլոգիական նորարարություն՝ թափանցիկությունը կամ հաշվետվողականությունը բարելավելու նպատակով:

- **Պոտենցիալ ազդեցություն.** այս չափանիշով գնահատվում է հանձնառության *պոտենցիալ ազդեցությունը*՝ ըստ շարադրվածի իրականացման դեպքում: ԱՀՄ հետազոտողն ուսումնասիրում է գործողությունների ծրագրի տեքստը, որպեսզի կարողանա՝
 - հասկանալ, թե որն է այն սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ բնապահպանական խնդիրը, որն ընկած է հանձնառության հիմքում,
 - սահմանել ստատուս քվոն գործողությունների ծրագրի մեկնարկի դրությամբ և
 - գնահատել, թե իրագործման դեպքում հանձնառությունն ինչպիսի ազդեցություն կունենա իրավիճակի վրա և ինչ չափով կլուծի վերոնշյալ խնդիրը:
- **Իրականացում.** այս չափանիշով գնահատվում է հանձնառության իրականացումը և կատարված աշխատանքը: Այս չափանիշը գնահատվում է գործողությունների իրականացման փուլի ավարտին, *ԱՀՄ իրականացման զեկույցում*:
- **Բերե՞լ է դա բաց կառավարմանը.** այս չափանիշով փորձ է արվում ավելի հեռուն գնալ, քան կատարված աշխատանքի և ստացած արդյունքների գնահատումը, և տեսնել, թե հանձնառության իրականացման արդյունքում ինչպես է փոփոխվել կառավարության գործելակերպը ԲԿԳ արժեքներին համապատասխանող ոլորտներում: Այս չափանիշը գնահատվում է գործողությունների իրականացման փուլի ավարտին, *ԱՀՄ իրականացման զեկույցում*:

Ինչպես է որոշվում պոտենցիալ աստղանշված հանձնառությունը

Հնարավոր աստղանշված հանձնառությունը հավակնոտության ու իրականացման ավելի մեծ պոտենցիալ ունի: Լավ հանձնառությունը պետք է հստակ ներկայացնի.

1. **Խնդիրը.** որն է սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ բնապահպանական խնդիրը, այլ ոչ թե որևէ ադմինիստրատիվ խնդրի կամ գործիքի նկարագիր (օրինակ, «նպաստների համար նախատեսված գումարների ոչ ճիշտ բաշխումը» ավելի կարևոր է, քան «վերկայքի բացակայությունը»):
2. **Ստատուս քվոն.** որն է քաղաքականության տվյալ խնդրի ստատուս քվոն գործողությունների ծրագրի մեկնարկի դրությամբ (օրինակ, «դատական կոռուպցիայի վերաբերյալ բողոքների 26 տոկոսը ներկայումս ընթացք չեն ստանում»):
3. **Փոփոխությունը.** անմիջական արդյունքները ներկայացնելու փոխարեն, որն է հանձնառության իրականացման արդյունքում ակնկալվող գործելակերպի փոփոխությունը (օրինակ, «տեղեկատվության հարցումներին պատասխան ստանալու ցուցանիշը երկու անգամ կավելանա» նպատակն ավելի ազդեցիկ է, քան «հրապարակել պատասխանների արձանագրությունը»):

Այս չափանիշներից ելնելով՝ Հայաստանի գործողությունների ծրագիրը երկու հնարավոր աստղանշված հանձնառություն ունի՝

- Հանձնառություն 3՝ Իրական սեփականատերերի գրանցամատյան
- Հանձնառություն 5՝ Ջրային ռեսուրսների պետական կադաստր

Աստղանշված հանձնառություններ

Ցուցանիշներից մեկը՝ «աստղանշված հանձնառությունը» (☼), լրացուցիչ բացատրության կարիք ունի, քանի որ այն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցողների համար և խթանում է մրցակցությունը ԲԿԳ մասնակից երկրների միջև: Աստղանշված հանձնառությունները համարվում են ԲԿԳ օրինակելի

հանձնառություններ: Աստղ ստանալու համար հանձնառությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների.

- Հնարավոր աստղ. հանձնառության տեքստը պետք է լինի չափելի, համապատասխանի բաց կառավարման արժեքներին և ունենա «փոխակերպող» պոտենցիալ ազդեցություն:
- Գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածում պետությունը պետք է զգալի առաջընթաց գրանցի այս հանձնառության իրականացման գործում՝ ստանալով կատարման «զգալի» կամ «ամբողջովին» գնահատական:

Այս չափանիշը գնահատվում է գործողությունների իրականացման փուլի ավարտին, *ԱՀՄ իրականացման զեկույցում*:

Հանձնառությունների ամփոփ նկարագիր

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը բաղկացած է երեք հիմնական բաժիններից՝ թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, տեղեկատվության մատչելիության խթանում և հանրային մասնակցության խթանում: Հանձնառությունները ներառում են բաց կառավարման այնպիսի թեմաներ, ինչպիսիք են գույքի և եկամուտների հայտարարագրումը, իրական սեփականատիրությունը, բյուջեի թափանցիկությունը, բնական ռեսուրսները, սոցիալական հարցերը, առողջապահությունը, կրթությունը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Գործողություններից շատերը նպատակ ունեն նպաստել տեղեկատվության և հանրային ծառայությունների մատչելիության ապահովմանը, իսկ մի քանիսը նաև հանրության համար հետադարձ կապի մեխանիզմներ են ապահովում:

¹ Բաց կառավարման գործընկերություն. կառավարման կանոնադրություն, 2012 թ. հունիս (վերանայված 2014 թ. մարտին և 2015 թ. ապրիլին), https://www.opengovpartnership.org/sites/default/files/attachments/OGP_Articles-Gov_Apr-21-2015.pdf

² ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ,ԲԿԳ, <https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual>

1. «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

1. Հայտարարատուների շրջանակի շարունակական ընդլայնում (15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներ և աշխատակազմերի քարտուղարներ)։
2. Հայտարարագրերի բովանդակության վերանայում, այդ թվում՝ հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմի նվազեցման և հայտարարատու պաշտոնատար անձի հետ նվիրատուների նույնականացման (հայտարարատուի հետ կապի բացահայտման) առումներով։
3. Հայտարարագրերի՝ հրապարակման ենթակա տվյալների ցանկի ընդլայնում։

Հանձնառության կատարման չափանիշներ

- 1.1 2017-2020թթ. հայտարարագիր չներկայացրած և սահմանված ժամկետից ուշ ներկայացրած հայտարարատու անձանց նկատմամբ Հանձնաժողովի կողմից կիրառված վարչական պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում Հանձնաժողովի կայքում։
- 1.2 «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ՝ հայտարարատուների շրջանակի ընդլայնման, հայտարարագրերի բովանդակության վերանայման, այդ թվում՝ հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմի նվազեցման և նվիրատուների նույնականացման (հայտարարատուի հետ կապի բացահայտման) համատեքստում։
- 1.3 ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ։
- 1.4 Հանձնաժողովի www.ethics.am կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնողական համակարգի զարգացում, դրա՝ օգտվողի համար ինտերակտիվ հասանելիության ապահովում, ծրագրային ապահովման մշակում և ներդնում։

Մեկնարկ՝ 2018թ. դեկտեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը	Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)	Պոտենցիալ ազդեցու-թյունը	Կատարման աստիճանը	Բերե՞լ է դա բաց կառավարմանը
----------------------	---------------------	---	-----------------------------	----------------------	--------------------------------

	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարություններ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ակնառու
1. «Բաց տվյալներ» պաշտոնակա ն հայտարարա գրերում		✓	✓		✓	✓			✓		Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն-ների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

2014 թվականից ի վեր բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը հրապարակվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կայքում²: Սկսած 2015 թվականից Հայաստանը մի շարք միջոցառումներ է իրականացրել այդ հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության շրջանակն ընդլայնելու ուղղությամբ³: 2017 թվականի օրենսդրական փոփոխություններով ընդլայնվեց նաև գույքի և եկամուտների հայտարարագրման ենթակա պաշտոնատար անձանց շրջանակը՝ ընդգրկելով ոչ միայն բարձրաստիճան պաշտոնյաների, այլ նաև բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև 15,000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարներին⁴:

Տվյալ հանձնառության մեջ ՔՀԿ-ներն առաջարկել են է՛լ ավելի ընդլայնել հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով խոշոր համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին և ավագանու անդամներին: Սրա անհրաժեշտությունը հիմնավորվում է շահերի բախման հնարավոր իրավիճակով, քանի որ աշխատակազմի քարտուղարը և ավագանու անդամները տարբեր խողովակներով կարող են դրամական միջոցներ կամ խրախուսանք ստանալ, այդ թվում՝ համայնքի ղեկավարի կողմից, կամ աշխատանքի տեղավորել իրենց մերձավոր ազգականներին⁵: Օրենքի համաձայն՝ ավագանու անդամը չվճարվող պաշտոն է, սակայն գործնականում ավագանու անդամները կարող են որոշակի ակնկալիքներ ունենալ կոնկրետ որոշումների օգտին քվեարկելու համար:

Այս հանձնառությունը կոչված է նաև նվազեցնելու հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմը: Ներկայիս շեմը՝ 8 միլիոն դրամը, չափազանց բարձր է համարվում պետական ծառայողների միջին աշխատավարձի համեմատ⁶:

Այնուամենայնիվ, հանձնառությունը չի սահմանում այն շեմը, որը կներառվի առաջարկվող օրենսդրական փոփոխություններում: Հանդիպումների ընթացքում քննարկվել է 2-3 մլն դրամ գումարի շեմը⁷, սակայն գործողությունների վերջնական ծրագիրը կոնկրետ թվեր չի ներառում:

Վերջապես, հանձնառությամբ առաջարկում է նույնականացնել (բացահայտել կապը հայտարարատու անձի հետ) այն անձանց, որոնք գույք կամ գումար են նվիրաբերել հայտարարատու պաշտոնատար անձին: Ընթացիկ իրավական ակտերը սահմանում են, որ անշարժ, շարժական և թանկարժեք գույքի տեսքով, ինչպես նաև գումարի տեսքով ստացված նվերները ենթակա են հայտարարագրման: Մինչդեռ ժամանակ, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման համաձայն՝

նվիրատուների վերաբերյալ տվյալները ենթակա չեն հրապարակման, որը հիմնավորվում է անձնական տվյալների պաշտպանությամբ: Ներկայումս հրապարակվող տվյալները հնարավորություն չեն տալիս բացահայտելու նվիրատուի և հայտարարատուի միջև փոխհարաբերությունները և պարզելու, թե արդյոք նվերը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Միննույն ժամանակ, եթե նվիրատուի անունը, ինչպես նաև վերջինիս կապը հայտարարատուի հետ հասանելի լինեն հանրությանը, ապա շահերի բախման վերաբերյալ կասկածները կփարատվեն:

Բացի հայտարարատուների և հայտարարագրերում պարունակվող տեղեկությունների շրջանակի ընդլայնումից, հանձնառությունը նախատեսում է նաև գործողությունների երրորդ ծրագրի ստանձնած հանձնառության շարունակում, այն է՝ հայտարարագրերը ժամանակին չներկայացրած պաշտոնյաների ցուցակի հրապարակում և հայտարարագրերի ռեեստրի ներկայացում բաց տվյալների ձևաչափով: Ներկայումս հայտարարագրերի որոնումը կատարվում է ըստ պաշտոնյայի անվան և պաշտոնի, ինչպես նաև հայտարարագրման տարվա: Հանձնառությունը նախատեսում է ապահովել որոնողական հարթակ, որտեղ կարող են օգտագործվել որոնման այլ չափանիշներ, օրինակ՝ տարեկան եկամուտի մակարդակը կամ առկա սեփականության տեսակը: Ստացված տվյալները հնարավոր կլինի արտահանել համակարգչային ծրագրերի համար ընթերցելի ձևաչափով: Այս նպատակը սահմանվել էր Հայաստանի գործողությունների նախորդ ծրագրի 4-րդ հանձնառությամբ, սակայն մի շարք պատճառներով չի կատարվել: Ներկայիս հանձնառությունը նպատակ ունի նաև շարունակել հրապարակել այն պաշտոնյաների ցուցակները, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն տրամադրել իրենց հայտարարագրերը, ինչպես նաև կիրառված պատժամիջոցների մասին համապատասխան տեղեկությունները:

Այս հանձնառությունը կարող է բարելավել հանրային պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիությունը՝ հայտարարագրերում ներառված տեղեկությունների շրջանակն ընդլայնելու և տեխնոլոգիական միջոցներով տեղեկատվության մատչելիությունը բարելավելու շնորհիվ: Ժամանակին հայտարարագրերը չներկայացրած պաշտոնյաների ցուցակի և կիրառված պատժամիջոցների վերաբերյալ տեղեկության հրապարակումը կարող է օգնել ավելի հաշվետու դարձնել պաշտոնատար անձանց: Հայտարարագրման ենթակա պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնումը ևս բարելավում է պաշտոնյաների հաշվետվողականությունը: Լիարժեք իրականացման դեպքում այս ջանքերը կարող են բարելավել քաղաքացիական վերահսկողությունը հայտարարագրերի ներկայացման և Հանձնաժողովի կողմից իրականացված հետագա գործողությունների նկատմամբ: Հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվել է չափավոր:

Հետագա քայլերը

Պետական պաշտոնյաների կողմից գույքի, եկամուտների և շահերի բախման բացահայտումը կոռուպցիայի և տեղեկատվության մատչելիության ոլորտում գործող ՔՀԿ-ների համար մշտական ուշադրության առարկա է հանդիսացել: Պետական պաշտոնյաների կողմից ակտիվների բացահայտման և հնարավոր ապօրինի հարստացման ու շահերի բախման վերահսկողության ապահովման նպատակով իրականացված օրենսդրական նախաձեռնությունները հիմք են տվել արդյունավետ հակակոռուպցիոն միջոցառումների համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ միջոցառումները գործնականում իրականացնելու և ապահովելու համար, որ բոլոր համապատասխան կառույցները և հաստատությունները արդյունավետ աշխատեն կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ:

Հանձնառության կատարման խոչընդոտներից մեկը Կոռուպցիայի կանխարգելման նոր հանձնաժողովի ստեղծման գործընթացի ձգձգումն է: Ըստ օրենքի, այս հանձնաժողովը պետք է փոխարիներ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին և պատասխանատվության ու իրավասությունների ավելի մեծ շրջանակներ ունենար: Այս գործոնը կարող է ազդել հանձնառությունը ժամանակին իրականացնելու վրա:

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հետևյալ գործողությունները.

- Անհրաժեշտ է պետական և հանրային արդյունավետ վերահսկողություն, որպեսզի հանձնառության կատարումը նպաստի պաշտոնատար անձանց հաշվետվողականության բարելավմանը և չարաշահումների կանխմանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ապահովել, որ հակակոռուպցիոն համապատասխան մարմինը (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կամ որևէ այլ մարմին) ունենա անհրաժեշտ լիազորությունները և ունակ լինի վերահսկողության ու հաշվետվողականության գործնական մեխանիզմներ կիրառել:
- Շահագրգիռ կողմերը դրական են գնահատում հայտարարագրերում ավելի շատ տեղեկություններ հրապարակելու մտադրությունը: Միևնույն ժամանակ, նրանք առաջարկում են հետազայում է՝ ավելի ընդլայնել պաշտոնյաների հայտարարագրերում ընդգրկված տեղեկությունների շրջանակը՝ ներառելով անշարժ գույքի աշխարհագրական տեղակայումը, ինչպես նաև ոչ գույքային գնումները՝ օրինակ, ձեռք բերված թանկարժեք ծառայությունները (գրոսաշրջային փաթեթներ, ուսման վարձեր միջազգային համալսարաններում և այլն): Առաջարկվել է նաև հայտարարատուների ցանկում ներառել ընտանիքի այն անդամներին, որոնք առանձին են ապրում, թեև այդ դեպքում հարկ կլինի օրենքում վերանայել ընտանիքի անդամների սահմանումը¹⁰:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Հայտարարագրերի ռեեստր, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, <http://ethics.am/hy/declarations-registry/>

³ ՀՀ կառավարության թիվ 150-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» 19.02.2015; «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններ, 16.12.2016, 09.06.2017

⁴ ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 09.06.2017, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114359>

⁵ Լևոն Բարսեղյան (Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 28 փետրվարի 2019

⁶ Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, պետական հատվածի աշխատողների միջին աշխատավարձը 2017 թվականին 158155 դրամ էր, աղբյուր՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, Աշխատավարձ, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018, https://www.armstat.am/file/article/trud_18_14.pdf

⁷ Վարուժան Հոկոսյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

⁸ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

⁹ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ), Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/01/Armenia_End-Term_Report_2016-2018_ARM.pdf

¹⁰ Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգը (ճանապարհային քարտեզ), Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, Իրազեկ քաղաքացիների

միավորում, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2018 թ. դեկտեմբեր, <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/ArmRefConcept-9.12.2018.pdf>;
Մարիամ Զադոյան և Սյուզաննա Սողոմոնյան (Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա),
հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 փետրվարի 2019; Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ).
Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018,
https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային վստահության բարելավում, հանրային օրինավորության խթանում:

Հանձնառության կատարման չափանիշներ

2.1 Իրավաբանական անձանց ֆինանսական միջոցների տրամադրման արդեն իսկ կիրառվող գործիքների և ընթացակարգերի ուսումնասիրություն, առավելությունների և թերությունների սահմանում, գործող կարգերի բարելավում՝ սահմանելով դրամաշնորհների, նվիրաբերությունների տրամադրում միայն մրցութային եղանակով՝ բացառությամբ բացառիկության հանգամանքով պայմանավորված դեպքերի՝

2.2 Հայտերի ձևանմուշների, կից փաստաթղթերի և այլ անհրաժեշտ տեղեկատվության միասնական փաթեթի մշակում և ներդնում:

2.3 Լիազոր մարմինների պաշտոնական կայքերում մրցույթների արդյունքների, շահառու կազմակերպությունների հաշվետվությունների հրապարակում:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու- թյունը				Կատարման աստիճանը				Բերել է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ակնառու
2. Պետական դրամաշնորհ- ների թափանցիկու- թյուն		✓	✓	✓				✓			Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանում պետական բյուջեից դրամաշնորհների հատկացումները կարգավորվում են մի շարք օրենքներով³: Այնուամենայնիվ, ընդհանուր հանրային ընկալում կա, որ գումարները թափանցիկ կերպով չեն բաշխվում: Ինչպես նշվել է 2016-2018 թթ. ԱՀՄ առաջընթացի հաշվետվությունում, հետազոտությունները և շահագրգիռ կողմերը մատնանշում են պետական մարմինների մեծամասնության կողմից դրամաշնորհների

բաշխման մրցակցային մեխանիզմի պակասի մասին⁴: Ոչ պետական կազմակերպությունների դրամաշնորհների և սուբսիդիաների տարեկան բյուջետային հատկացումները 2018 թ. կազմել են մոտ 6,5 մլրդ դրամ: Այս գումարները պետական մարմինների կողմից տրամադրվել են սպորտի, մշակույթի, սոցիալական պաշտպանության, կրթության և այլ ոլորտներին⁵: Մակայն դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկությունները տեսանելի չեն հանրության համար, իսկ դրամաշնորհառու կազմակերպությունների ընտրության մեխանիզմները հայտնի չեն: Տեղեկատվության պակասը կասկածի տակ է դնում գումարի բաշխման թափանցիկությունը և հարցեր առաջացնում դրամաշնորհների հատկացման արդյունավետության վերաբերյալ:

Գործողությունների երրորդ ծրագիրը ներառում էր մի հանձնառություն (Հանձնառություն 2), որի նպատակն էր ապահովել մրցույթի միջոցով հատկացված դրամաշնորհների թափանցիկությունը և հրապարակել պետության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները: Թեև այս հանձնառությունն օգնեց դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ տրամադրել, այն չի անդրադարձել դրամաշնորհների բաշխման թափանցիկության ու մրցակցայնության խնդիրներին: Պետական մարմինների մեծ մասը որևէ դրամաշնորհային մրցույթ չի կազմակերպել: Դրամաշնորհները տրամադրվել են հայեցողական հիմունքներով, բյուջեի մասին օրենքում կամ ենթաօրենսդրական ակտերում անվանապես նշված կազմակերպություններին⁶: Դրամաշնորհների տրամադրման գործընթացում թափանցիկության բացակայությունը տարիներ շարունակ նշվել է տարբեր զեկույցներում, այդ թվում Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ՔՀԿ կայունության ինդեքսում⁷: Այս խնդիրը գործողությունների ծրագրի մշակման ընթացքում կարևորել են նաև խորհրդակցություններին մասնակցող շահագրգիռ կողմերը⁸: Գործադիր մարմինների կողմից պետական դրամաշնորհների և ծառայությունների պայմանագրերի տրամադրման մրցութային և թափանցիկ մեխանիզմների ստեղծումը ներառվել է «2016-2018թթ. ԱՀՄ առաջընթացի հաշվետվության» առանցքային առաջարկներում⁹:

Տվյալ հանձնառությունը նախատեսում է բարելավել կազմակերպություններին պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացը: Այն մասնավորապես ներառում է պարտադիր մրցութային կարգի, ներառյալ՝ դիմումների ընթացակարգի սահմանում, ինչպես նաև բոլոր մարմինների համար հաշվետվությունների միասնական մեխանիզմի մշակում: Թեև հանձնառությունն ընդհանուր առմամբ չափելի է, հստակ չէ, թե այն կազմակերպական որ տեսակներին է վերաբերում: Գործողությունների ծրագրի անգլերեն տարբերակում առավել հաճախ նշվում է՝ «քաղաքացիական հասարակության կազմակերպություններ» (ՔՀԿ-ներ), որոնք հիմնախնդիրը ներկայացնող բաժնում սահմանվում են որպես ոչ պետական կազմակերպություններ: Մակայն նույն բաժնի հայերեն տարբերակում ՔՀԿ-ները սահմանվում են որպես ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք, ըստ էության, ներառում են կազմակերպությունների լայն շրջանակ՝ սկսած կրոնական և հասարակական միավորումներից մինչև հիմնադրամներ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

Ենթադրելով, որ հանձնառությունն ընդգրկում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այն կարող է նպաստել ՔՀԿ-ների համար բարենպաստ միջավայրի բարելավմանը՝ դրամաշնորհների տրամադրման բաց և թափանցիկ մեխանիզմների շնորհիվ ավելի շատ ՔՀԿ-ների համար հասանելի դարձնելով պետական ֆինանսավորումը: Հանձնառությունը կարող է բարելավել պետական ֆինանսավորման բաշխման վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիությունը: Այս առումով շահագրգիռ կողմերը հանձնառությունը համարում են պետական բյուջեի

թափանցիկության և հանրային միջոցների ծախսի նկատմամբ հասարակության վստահության բարելավման անհրաժեշտ նախապայման: Եթե գործողությունների ծրագիրն ավելի հստակ սահմաններ հանձնառության մեջ ներառված կազմակերպությունների տեսակները, այն կարող էր ավելի մեծ պոտենցիալ ազդեցություն ունենալ:

Հետագա քայլերը

ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է տալիս բարելավել հանձնառության կոնկրետությունը՝ հստակ սահմանելով հանձնառության մեջ ներառված և ՔՀԿ անվանումը կրող կազմակերպությունների իրավական տեսակները:

Մյուս առաջարկությունները հետևյալն են.

- Հայտի ձևաչափի մշակմանը զուգահեռ անհրաժեշտ է հստակ սահմանել և հրապարակել ընտրության գործընթացի ընթացակարգը և չափանիշները: Հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերն առաջարկեցին դրամաշնորհների մրցութային հանձնաժողովներում ներգրավել ՔՀԿ ներկայացուցիչներին (պատշաճ ուշադրություն հատկացնելով շահերի բախման խնդրին), որը մասնակցային գործընթաց և արդար ընտրություն կապահովի: Միջոցներ պետք է ձեռնարկվեն ընտրության արդար և թափանցիկ գործընթաց ապահովելու և դրամաշնորհների հատկացման գործընթացում կողմնակալ վերաբերմունքը բացառելու համար:
- Ինչպես նշեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից մեկը, պետք է սահուն անցում ապահովել ֆինանսավորման ոչ մրցութային ընթացակարգից դեպի մրցութային¹⁰: Օրինակ, մի շարք ՔՀԿ-ներ պետական սուբսիդավորում են ստացել խոցելի խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելու համար, սակայն նրանց ֆինանսավորումը կտրուկ դադարեցվել է 2019 թվականին՝ մրցութային ընթացակարգեր ներդնելու հիմնավորմամբ: Արդյունքում, այդ կազմակերպությունները ստիպված էին դադարեցնել պետության կողմից ֆինանսավորվող աշխատանքը և խզել պայմանագրերը համապատասխան աշխատակազմի հետ¹¹: Այսինքն՝ մինչև նոր մեխանիզմների ստեղծումն ու մրցույթի հայտարարումը պետք է որոշակի անցումային շրջան նախատեսել, որպեսզի պետական ֆինանսավորումից կախված կազմակերպությունները կարողանան շարունակել իրենց ծառայություններն առանց ընդհատման, մինչև նոր մոտեցումները գործնականում աշխատեն: Սա նրանց հնարավորություն կտա մրցույթին մասնակցելու և հաջողության հասնելու դեպքում շարունակել իրենց գործունեությունը:
- ԱՀՄ հետազոտողն առաջարկում է գործողությունների հետագա ծրագրերում ուշադրություն դարձնել պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պատշաճ մոնիթորինգի և հաշվետվության անհրաժեշտությանը: Պետության կողմից ծրագրերի մոնիթորինգի մեխանիզմները թափանցիկ չեն, իսկ հաշվետվությունները պետական կառույցների կայքերում հրապարակվում են ոչ հետևողական կերպով և երբեմն ցածր որակով¹²: Թափանցիկությունը և ծախսված միջոցների արդյունավետությունը ապահովելու նպատակով կարելի է մշակել մոնիթորինգի և հաշվետվությունների միասնական չափորոշիչներ՝ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում՝ «ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների տրամադրման արդեն իսկ կիրառվող գործիքների և ընթացակարգերի ուսումնասիրություն, առավելությունների և թերությունների սահմանում, գործող կարգերի բարելավում՝ դրամաշնորհներ սահմանելու միջոցով, նվիրաբերությունների (դրամաշնորհների) տրամադրում միայն մրցութային եղանակով՝ բացառությամբ բացառիկության հանգամանքով պայմանավորված դեպքերի»։ Հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ ՀՀ օրենքը «Պետական բյուջեի մասին», ՀՀ օրենքը «Գնումների մասին», ՀՀ կառավարության 1937-Ն որոշումը ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին, 24.12.2003

⁴ Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

⁵ Հաշվարկվել է ըստ ինտերակտիվ բյուջեի հարթակից ստացած տվյալների, <http://budget.minfin.am:82/>

⁶ Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/01/Armenia_End-Term_Report_2016-2018_ARM.pdf

⁷ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2016 թ. ՔՀԿ կայունության ինդեքս, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/CSOSI_Report_7-28-17.pdf; Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017 թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018 թ. սեպտեմբեր, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CSO_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf

⁸ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

⁹ Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

¹⁰ Սուրեն Դեհերյան (Լրագրողներ հանուն ապագայի), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 մարտի 2019

¹¹ Ինչո՞ւ չի սուբսիդավորվելու «Ունիսոնը», 21.02.2019, Armradio.am, <https://armradio.am/hy/7017>

¹² Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2019/01/Armenia_End-Term_Report_2016-2018_ARM.pdf

3. Իրական սեփականատերերի գրանցամատյան

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

ՀՀ Կառավարությունը հանձնառում է իրականացնել բոլոր ոլորտներում գործող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման համընդհանուր մեխանիզմների ձևավորում՝ Ռեգիստրի շրջանակներում համապարփակ հանրային բաց գրանցամատյան ստեղծելու և գործարկելու միջոցով:

Հանձնառության կատարման չափանիշներ

3.1 I.Միջազգային փորձի (այդ թվում՝ բաց ստանդարտի վերաբերյալ) համապարփակ վերլուծության հիման վրա անհրաժեշտ օրենսդրական փաթեթի մշակում՝ դրանում ներառելով իրական սեփականատերերին առնչվող հասկացությունները, գրանցման մեխանիզմները, պահանջվող փաստաթղթերի շրջանակը: Ապահովել նախագծերի փաթեթի քննարկումը շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, փաթեթը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ:²

3.2 ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Ազգային ժողով:

3.3 Պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի բաց, հանրային գրանցամատյանի ծրագրային ապահովման մշակում (տեխնիկական առաջադրանքի մշակում, քննարկում ՔՀԿ-ների հետ և հաստատում)՝ տվյալների հրապարակայնության և որոնման հնարավորության մատչելիության ապահովմամբ:³

3.4 Որպես պիլոտ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի տվյալների մուտքագրում, հրապարակում, փորձառության ընթացքում ծագած համակարգային խնդիրների վերհանում և հասցեագրում:

3.5 Իրական սեփականատերերի բաց, հանրային ռեգիստրի գործարկում, զուգահեռաբար գրանցամատյանի վերաբերյալ համապարփակ հանրային իրազեկման ծրագրի իրականացում:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. դեկտեմբեր

Հանձնառու- թյունը	Զափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու-թյունը				Կատարման աստիճանը				Բերել է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականացած կոնկրետ չէ	Ստուգման համար բավականացած կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Զափավոր	Փոխակերպող	Զսկաված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Զի փոխվել	Մարզինալ	Զգալի	Ակնառու

3. Իրական սեփականատերերի գրանցամատյան		✓	✓	✓	✓				✓	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:
---------------------------------------	--	---	---	---	---	--	--	--	---	--	--

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանի օրենսդրությունը պետական պաշտոնյաներին արգելում է զբաղվել բիզնեսով⁴: Այնուամենայնիվ, բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պաշտոնյաներն ունեն իրենց պատկանող ընկերություններ, թեև սեփականության իրավունքը պաշտոնապես գրանցվում է այլ անձանց (օրինակ, նրանց հարազատների կամ ծանոթների) անունով: Օրենքի խախտումից զատ, պետական պաշտոնյաների կողմից խոշոր ընկերությունների սեփականությունը բիզնեսի վրա քաղաքական ազդեցության ռիսկ է ենթադրում և վնասում է գործարար միջավայրի մրցակցային սկզբունքին: Բացի այդ, ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը խոչընդոտում է մենաշնորհային ոլորտների և ընկերությունների բացահայտմանը: (Հնարավոր է, որ տարբեր հիմնադիրների անուններով գրանցված մի քանի ընկերություններ պատկանեն միևնույն անձին):

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը սահմանում է «իրական շահառու» հասկացությունը և որոշակի կարգավորումներ է տրամադրում իրական շահառուների բացահայտման և ներկայացման համար⁵: Բոլոր կազմակերպությունները պետական գրանցում ստանալիս և պետական գնումների մրցույթներին հայտ ներկայացնելիս պետք է հայտարարություն տրամադրեն իրենց իրական շահառուների վերաբերյալ: Պետական գնումների մասնակիցների դեպքում այս հայտարարությունները հասանելի են հանրությանը, քանի որ ներառված են Պետական գնումների համակարգի հաշվետվություններում և մասնակիցների հայտերի փաթեթներում⁶: Սակայն իրական շահառուների վերաբերյալ պետական ռեգիստրին ներկայացված տեղեկությունները հանրությանը հասանելի չեն:

Այս հանձնառությունը նպատակ ունի ստեղծելու իրական սեփականատերերի հանրային ռեգիստր, որտեղ պիլոտային փուլում կներառվեն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ընկերությունների իրական սեփականատերերի տվյալները: Հանձնառությունը կօգնի բացահայտել շահերի բախման այն դեպքերը, երբ ընկերությունը պատկանում է պաշտոնատար անձին, և օֆշորային սեփականությունը բացահայտելու միջոցով ապահովել հարկերի հավաքագրումը: Կառավարության ներկայացուցիչների հայտարարությունների համաձայն, բացի իրական սեփականատերերի մասին տեղեկությունների հրապարակումից, պետությունը նախատեսում է մեխանիզմներ մշակել՝ նախքան հրապարակումը տվյալների հավաստիությունը ստուգելու համար⁷: Այնուամենայնիվ, հանձնառությունը ուղղակիորեն չի պարտադրում իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակում, այլ նախատեսում է միայն իրական սեփականատերերի թափանցիկությունն ապահովող մեխանիզմներ ստեղծել: Ըստ հանձնառության, գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտին (2020թ. հոկտեմբեր) կգործարկվի բաց ռեգիստրը, որտեղ պիլոտային փուլում կներառվեն հանքարդյունաբերական ընկերությունների տվյալները: Ի հավելումն իրական սեփականատերերի մասին տեղեկությունների բացահայտման, հանձնառության կատարման 3.1 ցուցանիշով նախատեսվում է խորհրդակցություններ անցկացնել շահագրգիռ կողմերի հետ և այնուհետև իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման վերաբերյալ օրենսդրական փաթեթը ներկայացնել վարչապետի

աշխատակազմին, այսինքն՝ հանձնառությունը համապատասխանում է նաև քաղաքացիական մասնակցության ԲԿԳ արժեքին:

Այս հանձնառությունը սերտորեն կապված է «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) 2016 թ. ստանդարտներով սահմանված՝ նավթի, գազի և հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման պահանջի հետ⁸: Որպես ԱՃԹՆ թեկնածու երկիր, Հայաստանը պարտավորվել է մինչև 2020 թ. հունվարը կատարել այս պահանջը, և այս ստանդարտին համապատասխան, 2018 թ. հունվարին Հայաստանը հրապարակել է իրական սեփականատերերի մասին տեղեկատվության բացահայտման ճանապարհային քարտեզը՝ ներառելով կատարման ցուցանիշները և ժամկետները⁹:

Քաղաքացիական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ հարցազրույցների ընթացքում դրական գնահատեցին այս հանձնառությունը՝ ակնկալելով, որ այն ի վերջո կներառի բոլոր ընկերությունները: Այնուամենայնիվ, հանձնառությունն առաջարկված ՔՀԿ-ները կարծում են, որ այն լիարժեք չի արտացոլում իրենց մտադրությունները, քանի որ նրանք առաջարկել են իրական սեփականատերերի պարտադիր բացահայտում¹⁰: Հանձնառության նպատակը հավակնոտ է, սակայն առաջարկվող գործողությունները սահմանափակվում են ռեգիստրի համար ծրագրային ապահովման ստեղծման և հանքարդյունաբերական ընկերությունների տվյալների պիլոտային մուտքագրման գործողություններով: Որոշ շահագրգիռ կողմեր նշել են, որ հանձնառությունն ավելի մեծ ազդեցություն կունենար ընկերությունների ավելի լայն շրջանակի (օրինակ, որոշակի շեմը գերազանցող եկամուտ ունեցող ընկերությունների) կողմից իրական սեփականատերերի հրապարակման պահանջի դեպքում¹¹: Միննույն ժամանակ, հանձնառությամբ նախատեսված՝ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի պարտադիր բացահայտումը ևս կարևոր քայլ կլինի: Այս հատվածը 2017 թվականին կազմել է Հայաստանի համախառն ներքին արդյունքի 3,2 տոկոսը¹² և գտնվում է մի շարք բնապահպանական շարժումների ուշադրության կենտրոնում: Հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի խնդիրը կարևոր նշանակություն է ստացել Հայաստանում, հատկապես վերջին տարիներին, քանի որ այս ոլորտում մեծ թվով օտարերկրյա ներդրումներ կան՝ նախկին իշխանությունների կողմից տրված համապատասխան թույլտվություններով: Լուրեր են պտտվում պաշտոնյաների (կամ նախկին պաշտոնյաների)՝ գործարքներին ենթադրյալ առնչության և շահերի առկայության, ինչպես նաև երկրի բնական ռեսուրսներին հասցված վնասի հանդեպ նրանց անտարբերության մասին: Այս առումով առավել հայտնի է Ամուլսարի հանքարդյունաբերական նախագիծը, որն, ըստ բնապահպանների, վտանգում է Հայաստանի հանրաճանաչ առողջարանային քաղաքներից մեկը և մոտակա ջրային պաշարները¹³:

Հանձնառությունը իրական սեփականության թափանցիկության ոլորտում հետագա առաջընթացի հիմք է: Ուստի այն կարևոր (թեև նախնական) քայլ է ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումը կարգավորելու ուղղությամբ: Հետևաբար, հանձնառության պոտենցիալ ազդեցությունը գնահատվել է փոխակերպող: Հանձնառությամբ նախատեսված օրենսդրական դաշտի փոփոխությունները և ծրագրային ապահովումը հիմք կհանդիսանան իրական սեփականատերերի մասին տվյալների պարտադիր բացահայտման ենթակա ընկերությունների շրջանակի ընդլայնման համար:

Հետագա քայլերը

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է այս հանձնառությունը շարունակել գործողությունների հաջորդ ծրագրում: Կառավարությունը պետք է մեխանիզմներ

ստեղծի իրական սեփականատերերի ռեզիստրում ընկերությունների ավելի լայն շրջանակ ներառելու, ինչպես նաև մոնիթորինգ իրականացնելու և տվյալները ստուգելու համար:

Ըստ շահագրգիռ կողմերի, անհրաժեշտ է հավաստիանալ, որ հնարավոր կլինի ճշգրիտ տեղեկատվություն ստանալ ընկերությունների իրական սեփականատերերի մասին, մասնավորապես՝ արդյունահանող հատվածում աշխատող ընկերությունների դեպքում: Այդ ընկերություններն օֆշորային գրանցում և սեփականության բարդ շղթաներ են օգտագործում, և արդյունքում իրական սեփականությունը երբեմն հնարավոր չէ ստուգել¹⁴: Այդ իսկ պատճառով պետք է մեխանիզմներ նախատեսել ռեզիստրում ներկայացված տեղեկատվությունը ստուգելու համար, այլապես ռեզիստրի օգտակարությունը կոռուպցիայի կանխարգելման գործում կասկածելի կլինի¹⁵:

Վերահսկողության շրջանակը մշակելիս հարկավոր է հաշվի առնել միջազգային փորձը և առաջարկությունները, ներառյալ հետևյալը.

- Միջազգային համագործակցություն հաստատել օտարերկրյա և ներպետական ռեզիստրների միջև տեղեկատվություն փոխանակելու, բաժնետերերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու և իրավաբանական սեփականության շղթան արագ բացահայտելու համար¹⁶:
- Համապատասխան ռեսուրսներ, կարողություններ և լիազորություններ տրամադրել պետական ռեզիստրին կամ համապատասխան այլ լիազոր մարմնին անհրաժեշտ ստուգումներ անցկացնելու, տեղեկատվության բացահայտման և պատժամիջոցներ կիրառելու համար:
- Կեղծ տեղեկություն տրամադրելու համար ծանրակշիռ պատժամիջոցներ սահմանել, որպեսզի ընկերությունները ստիպված լինեն հրապարակման պահանջը կատարել, օրինակ՝ մեծ չափով տուգանքներ, գործունեության կասեցում և այլն¹⁷:

Հանրային վերահսկողությունը ևս անհրաժեշտ է՝ ապահովելու համար, որ ռեզիստրը ծառայի իր նպատակներին: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է, որ ՔՀԿ-ները հանրային իրազեկման միջոցառումներ նախաձեռնեն և իրականացնեն հրապարակված տեղեկությունների մոնիթորինգը և ստուգումը: Այդ առումով կարևոր է, որ ռեզիստրում գրանցված տեղեկատվությունը բոլորի համար լինի բաց և անվճար:

Գործողությունների ծրագրի մշակման, ինչպես նաև հարցազրույցների ընթացքում ՔՀԿ-ների որոշ ներկայացուցիչներ առաջարկել են սահմանել լրատվամիջոցների իրական սեփականատերերի պարտադիր հրապարակում¹⁸: Ինչպես նշվել է այս զեկույցի II բաժնում, շատ լրատվամիջոցներ որևէ քաղաքական ուժի են հարում կամ ընկալվում են որպես քաղաքականացված, և հաճախ խնդիրներ են բարձրաձայնվում լրատվամիջոցների կողմից կեղծ տեղեկությունների տարածման կամ թաքնված քաղաքական քարոզչության մասին: ՋԼՄ-ների իրական սեփականատերերի բացահայտումը կարող է բարելավել լրատվական դաշտի թափանցիկությունը և ավելի գիտակցված մոտեցում կիրառել լուրերի և լրատվամիջոցների հրապարակումների նկատմամբ:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում՝ «Օրենսդրական փաթեթի մշակում» իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների թափանցիկության նշանակալի բարելավման և իրական սեփականատերերի բաց

գրանցամատյանի ստեղծման համար անհրաժեշտ իրավական հիմքերը ապահովելու նպատակով:

Օրենսդրական փաթեթը հիմնված կլինի միջազգային փորձի համապարփակ վերլուծության վրա, այդ թվում՝ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների ստանդարտը, իրական սեփականատերերին առնչվող հասկացությունները, տվյալների գրանցման և ստուգման մեխանիզմները, պահանջվող փաստաթղթերի շրջանակը: Բացի այդ, օրենսդրական փաթեթի մշակման ընթացքում քննարկումներ կիրականացվեն շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, և ամբողջական փաթեթը կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմին»: Աղբյուր՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ Անգլերեն տարբերակում՝ «Հայաստանի բոլոր ընկերությունների իրական սեփականատերերի գրանցամատյանի ստեղծում (իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների ստանդարտի հիման վրա) Պետական ռեգիստրի կողմից, որը պատասխանատու կլինի տեխնիկական աշխատանքների և ՔՀԿ-ների ու մասնավոր հատվածի հետ քննարկումների համար: Գրանցամատյանը բաց և հանրության համար հեշտ հասանելի կլինի՝ տվյալների օգտագործման և որոնման հնարավորության ապահովմամբ»: Հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

⁴ ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», 23.03.2018, հոդված 31, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120832>

⁵ ՀՀ օրենքը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին, 26.05.2008, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126311>

⁶ Շահերի բախման բացակայության և իրական շահառուների տվյալների մասին հայտարարություններ, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ,

http://procurement.am/en/page/announcements_on_real_shareholder_of_the_participant/; Պետական գնումների էլեկտրոնային համակարգ, Հայտեր, <https://armeps.am/ppcm/public/bid-report>

⁷ Քննարկվել են մետաղական հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ նախատեսվող իրավակարգավորումները, Hetq.am, 31.01.2019, <https://hetq.am/en/article/100469>, Քննարկվել են իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ նախատեսվող իրավակարգավորումները, ՀՀ արդարադատության նախարարություն, 31.01.2019, <http://moj.am/article/2240>

⁸ ԱՃԹՆ ստանդարտ 2016, 2.5 Իրական սեփականատիրություն, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, <https://eiti.org/document/standard#r2-5>

⁹ Հայաստանի Հանրապետության իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, 2018 թ. հունվար, https://eiti.org/sites/default/files/documents/bo_roadmap_draft_arm_0.pdf

¹⁰ Մարիամ Զադոյան և Սյուզաննա Սողոմոնյան (Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 փետրվարի 2019; Շուշան Դոյդոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 28 փետրվարի 2019

¹¹ Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 1 մարտի 2019

¹² Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն Հայաստան, <https://eiti.org/armenia>

¹³ Տես, օրինակ՝ Հանքարդյունաբերական վեճը սպառնում է հետհեղափոխական քաղաքական համաձայնությանը Հայաստանում, Բրեդլի Ժարդին, Գրիգոր Աթանեսյան, Eurasianet, 24 հուլիսի 2018, <https://eurasianet.org/mining-dispute-threatens-armenias-post-revolutionary-political-consensus>

¹⁴ Քրիստինե Աղալարյան (Հետաքննող լրագրողներ ՀԿ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 11 մարտի 2019

¹⁵ Վարուժան Հոկտանյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

¹⁶ Տես, օրինակ, ՖԱԹՖ ուղեցույցը թափանցիկության և իրական սեփականատիրության վերաբերյալ, Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ (ՖԱԹՖ), 2014թ. հոկտեմբեր, <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/Guidance-transparency-beneficial-ownership.pdf>

¹⁷ Իրական սեփականատերերի կենսունակ գրանցամատյանների ստեղծում, Բաց կառավարման գործընկերություն, <https://www.opengovpartnership.org/theme/beneficial-ownership/establish-robust-registers-of-beneficial-ownership>

¹⁸ Այսպես, լրատվամիջոցների իրական սեփականատերերի հրապարակման պահանջը ներառված էր Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ներկայացված հանձնառության առաջարկում:

4. Համայնքային կայքերի արդիականացում

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Հանձնառության կատարման շրջանակներում նախատեսվում է քայլեր ձեռնարկել երկու ուղղությամբ՝ օրենսդրական փոփոխությունների իրականացում և համայնքային կայքերի գործառնական հնարավորությունների բարելավում:

Կատարվելիք օրենսդրական փոփոխություններով 3000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքները հանձնառություն կունենան հրապարակելու նաև՝

- համայնքում առկա կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ և այլն) և/կամ դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),
- համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների
- համայնքապետարանի կողմից տրված՝ գովազդի, առևտրի, շինարարության և այլ թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
- համայնքում հանրային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը,

Համայնքային կայքերի գործառնական հնարավորությունների ընդլայնման մասով նախատեսվում է.

- համայնքային գույքի կառավարման բաղադրիչի բարելավում, որը թույլ կտա համայնքային գույքի, դրա կառավարման վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ և մատչելի դարձնել բնակիչների համար՝ միևնույն ժամանակ ապահովելով ներդրողներին հետաքրքրող տեղեկատվությունների հասանելիությունը:

- մատուցվող ծառայությունների ընթացակարգերի նկարագրությունները պարունակող տեղեկատվական քարտերի բաղադրիչի մշակում, որը մատուցվող ծառայությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության տրամադրման հետ մեկտեղ, հնարավորություն կտա բնակիչներին ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ ՏԻՄ-երի կողմից քաղաքացիամետ ծառայությունների մատուցում ապահովելու նպատակով:

- 20000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման ապահովում Իրավական ակտերի նախագծերի e-draft.am միասնական կայքում:²

Հանձնառության կատարման չափանիշներ

4.1 «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթի կազմում:

4.2 Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպում:

4.3 «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Ազգային ժողով:

4.4 Համայնքների պաշտոնական կայքերի համապատասխանեցում օրենսդրական փոփոխություններին:

4.5 Տեղական ինքնակառավարման մարմիններին և ՔՀԿ-ներին ուղղված տեղեկատվական քարտզարշավ: Նոր գործիքների և կայքերի հնարավորությունների ներկայացում համայնքի օգտատերերին:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Զափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու-թյունը				Կատարման աստիճանը				Բերե՞լ է դա բաց կառավարմանը					
	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Զափավոր	Փոխանկռու	Զսկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Զի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ակնառու	
4. Համայնքային կայքերի արդիականացու մ		✓	✓	✓		✓				✓		Գնահատվում է գործողությունն երի ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանում 3000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքները, ըստ օրենքի, պետք է ունենան պաշտոնական կայք, որտեղ, համաձայն սահմանված ցանկի, առկա պետք է լինեն մի շարք ներբեռնվող փաստաթղթեր³: Այս ցանկը ներառում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև այլ փաստաթղթեր, ինչպիսիք են համայնքային զարգացման ծրագիրը և ծրագրի կատարման հաշվետվությունները, համայնքային բյուջեն և բյուջեի կատարողականի հաշվետվությունները⁴:

Հայաստանի համայնքների մեծ մասն ունի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), որը ստեղծվել է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» (ՏՀԶՎԿ) ՀԿ-ի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նախաձեռնությամբ: Այս համակարգի հիման վրա 250-ից ավելի համայնքներ վեբ կայքեր են գործարկել, որտեղ առկա են համայնքի ավագանու նիստերի և որոշումների, բյուջեի և համայնքային կառույցների, ծառայությունների մասին տեղեկատվություն և անհրաժեշտ ձևաթղթեր: Համակարգը

նաև հնարավորություն է տալիս առցանց հարցումներ ներկայացնել և տեղեկություններ գտնել հողատարածքի և շինության սեփականության մասին: Բացի այդ, համայնքի բնակիչները կարող են անհատական դիմումի միջոցով հաշվարկել իրենց հարկերը և տուրքերը: Բոլոր այցելուները կարող են կարծիք ներկայացնել կայքում տեղադրված ցանկացած տեղեկության վերաբերյալ⁵: Որպես թափանցիկության և մասնակցության օրինակելի գործիք՝ այս համակարգը («Մմարթ համայնքապետարան» անվանումով) 2015 թվականին ԲԿԳ կողմից արժանացել է «տարածաշրջանային չեմպիոնի» կոչմանը⁶:

ՔՀԿ-ների կարծիքով՝ համայնքային գույքի կառավարման, համայնքային կառույցների բյուջեների և թույլտվությունների տրամադրման թափանցիկության առումով դեռևս բարելավման կարիք կա: Այս տեղեկությունը ևս կարող է հրապարակվել համայնքային կայքերում: Այս հանձնառության հեղինակն առաջարկել էր նաև համայնքային իրավական ակտերի քննարկում նախատեսել համայնքային կայքերում՝ այնպես, ինչպես դա արվում է e-draft.am հարթակում պետական նորմատիվ ակտերի դեպքում:

Հանձնառությունը նպատակ ունի ընդլայնելու համայնքների կողմից տրամադրվող և հանրությանը հասանելի տեղեկությունների շրջանակը՝ տեղեկատվություն ներառելով ոչ միայն համայնքապետարանների, այլև համայնքային այլ հաստատությունների մասին, ինչպիսիք են մանկապարտեզները, երաժշտական դպրոցները և մշակութային կենտրոնները: Հանձնառությունը նախատեսում է տեղեկատվություն տրամադրել մատուցվող ծառայությունների և տրամադրված թույլտվությունների մասին:

Ինչպես նշեց ՔՀԿ ներկայացուցիչներից մեկը, եթե շինարարության թույլտվությունները հրապարակայնորեն հասանելի լինեն համայնքային կայքում, ապա հանրության համար ավելի հեշտ կլինի բացահայտել իրենց համայնքներում անօրինական շինարարության դեպքերը⁷: Այսինքն, տրամադրված թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը կնպաստի շինարարության օրինականության և նպատակների, ինչպես նաև չլիցենզավորված շինարարության, գովազդի և առևտրի նկատմամբ հանրային հսկողության բարելավմանը:

Շահագրգիռ կողմերը կարևորում են նաև գույքի կառավարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, քանի որ դա թույլ կտա բարելավել հանրային հսկողությունը գույքային գործարքների նկատմամբ, եթե հայտերը և տարեկան գույքի կառավարման պլանները նախապես տեղադրված լինեն⁸:

Ընդհանուր առմամբ, շահագրգիռ կողմերը կարծում են, որ իրականացվելու դեպքում հանձնառությունը կարող է բարելավել հանրային ծառայությունների մատուցումը և թափանցիկությունը: E-draft.am հարթակում նախագծերի հրապարակումը՝ քվեարկության, քննարկման և յուրաքանչյուր առաջարկի համար պարտադիր հետադարձ կապի տրամադրման հնարավորություններով, կարող է ընդլայնել խոշոր քաղաքային համայնքների բնակչության մասնակցության հնարավորությունը:

Այս հանձնառության ազդեցությունը մեծապես կախված է տրամադրված նոր հնարավորություններն օգտագործելու աստիճանից: Որոշ շահագրգիռ կողմեր թերահավատ են, որ համայնքային կայքերը կօգտագործեն համայնքների բնակիչների կողմից որպես տեղեկատվության կարևոր աղբյուր: Նրանք նշում են, որ փոքր համայնքներում մարդիկ հազվադեպ են օգտվում համայնքային կայքերից՝ նախընտրելով անձնական հանդիպումներն ու կենդանի քննարկումները: Բացի այդ, չնայած կայքերում տեղեկատվության հրապարակումը 3000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների համար պարտադիր է, ոչ բոլոր համայնքներն են լիարժեք և պարբերաբար թարմացվող տեղեկատվություն տրամադրում: Այսպիսով, ներկայումս անհրաժեշտ է, նախ և առաջ, որ համայնքային իշխանությունները ապահովեն թափանցիկության իրավական դրույթների իրագործումը և բնակչության շրջանում իրականացնեն իրազեկող միջոցառումներ՝

տեղեկատվության առցանց աղբյուրների օգտագործումն ապահովելու համար:
Իրազեկման բարձրացումը նախատեսված է հանձնառությունների իրականացման
ցուցանիշներում:

Ինչ վերաբերում է e-draft.am հարթակում իրավական նախագծերի տեղադրմանը, ապա
շահագրգիռ կողմերն առաջարկում են դրանք հրապարակել նաև համայնքային
կայքերում (ինչպես և նախատեսված է օրենքով) և տեխնիկական գործիքներ ապահովել
անմիջականորեն համայնքի կայքէջում քննարկելու համար⁹: Շահագրգիռ կողմերը
կարևորել են նաև մասնակցության ավելի արդյունավետ մեխանիզմների կիրառումը
համայնքներում, օրինակ՝ դեմ առ դեմ քննարկումները, քաղաքացիական խորհուրդները
և այլն¹⁰:

Լիարժեք իրականացվելու դեպքում հանձնառությունը կարող է նպաստել տեղական
ինքնակառավարման մարմինների թափանցիկության հարցում չափավոր առաջընթացին:
Այն հանրության համար մատչելի կդարձնի նախկինում անհասանելի տեղեկությունները:
Սակայն համայնքի բնակչության մասնակցության առումով այն փոքր առաջընթաց է
նախատեսում:

Հետագա քայլերը

Այս հանձնառությունը նախատեսում է հրապարակել տեղեկությունների նոր շրջանակ՝
բարելավելով թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը այն ոլորտներում,
որտեղ առկա են պոտենցիալ կոռուպցիոն ռիսկեր: Այն նաև նախատեսում է ընդլայնել
հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում 20000-ից ավելի
բնակչություն ունեցող համայնքներում: Ներկա օրենսդրության և այս հանձնառության
շրջանակներում առկա հնարավորություններն օգտագործելու նպատակով, ԱՀՄ
հետազոտողը խորհուրդ է տալիս ձեռնարկել հետևյալ գործողությունները.

- Համայնքային իշխանությունները պետք է ապահովեն կայքերում օրենքով
նախատեսված տեղեկությունների պատշաճ հրապարակումը և ժամանակին
թարմացումը: Նրանք պետք է նաև պատշաճ արձագանք տրամադրեն համայնքի
անդամների և այլ շահագրգիռ կողմերի բարձրացրած հարցերին և
առաջարկներին:
- Համայնքի բնակիչների վերապատրաստման և իրազեկման միջոցառումներ
կարող են իրականացվել թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛
այս ոլորտում գործող ՔՀԿ-ների կողմից: Դա կընդլայնի կայքերի օգտագործումն ու
տեղական ինքնակառավարման տարբեր ոլորտներում հանրային
վերահսկողությունը:
- Համայնքային օրինագծերի քննարկման նպատակով e-draft.am հարթակի
օգտագործումը բարելավելու համար առաջարկվում է, որ տեղական
իշխանությունները համապատասխան հայտարարություններ և հղումներ
հրապարակեն համայնքային կայքերում:
- Ըստ շահագրգիռ կողմերի, անհրաժեշտ է բարելավել կայքերի տեխնիկական
հնարավորությունները և օգտագործողների համար հարմար դիզայնը¹¹:
- Շահագրգիռ կողմերի առաջարկների հիման վրա ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է
տալիս նաև ընդլայնել կայքերում հրապարակվող տեղեկությունները և ներառել
համայնքապետարանի աշխատակիցների անուններն ու պաշտոնները, ինչպես
նաև կոնտակտային տվյալները, որը կհեշտացնի անմիջական
հաղորդակցությունը քաղաքացիների և ՔՀԿ-ների հետ¹²:

Գործողությունների հետագա ծրագրերի համար ԱՀՄ հետազոտողն առաջարկում է
բարելավել հանրային մասնակցության հնարավորությունները առցանց գործիքներից

զատ այլ միջոցներով, օրինակ՝ համայնքային ժողովների, քաղաքացիական ֆորումների և SMS քվեարկության օգտագործման միջոցով¹³:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում՝ «Հանձնառության կատարման շրջանակներում նախատեսվում է ընդլայնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված և համայնքների կայքերում տեղադրվող տեղեկությունների շրջանակը, ներառելով հետևյալը՝

- համայնքապետարանի ենթակայությամբ գործող կառույցների բյուջեն,
- համայնքում առկա կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (գործունեության տեսակ, կոնտակտային տվյալներ և այլն) և/կամ դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),
- համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների ընթացակարգերի նկարագրությունները պարունակող տեղեկատվական քարտեր, որոնք մանրամասն տեղեկատվություն կտրամադրեն մատուցվող ծառայությունների նորանց շահառուների անհրաժեշտ տվյալների վերաբերյալ՝ պահանջվող փաստաթղթերը, մատուցման պայմանները, իրավական հիմքերը, վճարները և այլն,
- համայնքապետարանի կողմից տրված՝ գովազդի, առևտրի, շինարարության և այլ թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
- տեղեկություններ այգիների, տեսարժան վայրերի, ինչպես նաև համայնքում տեղակայված պատմական և մշակութային վայրերի մասին (հասցե, նկարներ, հակիրճ նկարագրություն),
- համայնքում հանրային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը,
- խոշոր (20000 կամ ավելի բնակիչ ունեցող) համայնքներում e-draft մոդելի կիրառում, այն է՝ համայնքային կայքում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունման ենթակա նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում՝ բնակիչներին տեղեկացնելու և քննարկելու նպատակով»:

Հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն),

https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, հոդված 11.5

⁴ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125341>

⁵ Գրիշա Խաչատրյան (Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 05 մարտի 2019

⁶ Հայաստանը "Բաց կառավարման գործընկերություն" միջազգային մրցանակաբաշխությունում արժանացել է բարձր մրցանակի, ԲԿԳ Հայաստան, 28.10.2015, http://ogp.am/hy/news/item/2015/10/28/OGP_Award2015/

⁷ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

⁸ Սառա Պետրոսյան (Հետաքննող լրագրողներ ՀԿ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 մարտի 2019

⁹ Նարինե Մայիլյան (Արագա ՀԿ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 փետրվարի 2019; Լևոն Բարսեղյան (Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 28 փետրվարի 2019

¹⁰ Մարինա Մխիթարյան (ՄԱԶԾ Կոլբա լաբ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

¹¹ Լիանա Դոյոյան (Բնֆորմացիայի ազատության կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

¹² Սառա Պետրոսյան (Հետաքննող լրագրողներ ՀԿ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 մարտի 2019

¹³ Համայնքային միկրոհարցումները ներառվել են գործողությունների երկրորդ ծրագրում (Հանձնառություն 6): Մանրամասների համար տե՛ս՝ Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՀՄ) ամփոփիչ զեկույց 2014-2016, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/01/Armenia_EOTR_2014-2016.pdf

5. Ջրային ռեսուրսների պետական կադաստր

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը վարում է ջրային ռեսուրսների պետական կադաստրը, ինչն իրենից ներկայացնում է տեղեկատվական համակարգ: Ներկա դրությամբ, աշխատանքներ են տարվում ջրային ռեսուրսների պետական կադաստրի թարմացման ուղղությամբ, և թարմացումից հետո ջրային ռեսուրսների պետական կադաստրի ամբողջական տվյալները, բացառությամբ ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների կտեղադրվեն համապատասխան ինտերնետային կայքում, որից կարող են անվճար օգտվել բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք: Միաժամանակ, համապատասխան ծրագրի ապահովման դեպքում ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործառույթը ևս հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Հանձնառության կատարման չափանիշներ

5.1 Ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի թարմացման տեխնիկական առաջադրանքի վերանայում:

5.2 Ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի համապատասխանեցում ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 2-ի N 68-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

5.3 Ջրային ռեսուրսների պետական կադաստրի աղյուսակային և տարածական բաղադրիչների միջև կապերի ստեղծում:

5.4 Ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորում:

5.5 Ջրային ռեսուրսների պետական կադաստրի նոր տեղեկատվական բազայի գործարկում ապահովելով կապ ջրային պետական կադաստրի տեղեկատվական բազայի և շահագրգիռ գերատեսչությունների կողմից տրամադրվող տվյալների միջև:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու-թյունը				Կատարման աստիճանը				Բերել է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականացափ կունկետ չէ	Ստուգման համար բավականացափ կունկետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպով	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարզինալ	Զգալի	Ակնառու

5. Ջրային ռեսուրսների պետական կադաստր		✓	✓			✓			✓	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:
---------------------------------------	--	---	---	--	--	---	--	--	---	--	--

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

1980-ական թվականներից ի վեր Հայաստանում ստորերկրյա ջրերի մոնիթորինգ չի իրականացվել, և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը դժվարանում է գնահատել օգտագործման ենթակա ջրի ծավալը և տրամադրել ջրօգտագործման համապատասխան թույլտվություններ: Բացի այդ, ըստ գործակալության, մակերևութային ջրային ռեսուրսների գնահատման ճշգրիտ տվյալները ևս բացակայում են²: Ջրօգտագործման թույլտվությունների մասին տեղեկատվությունը հրապարակվում է Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կայքում³: Այնուամենայնիվ, ճշգրիտ տվյալների բացակայության պատճառով առկա ջրային ռեսուրսների մասին տեղեկատվությունը հանրությանը հասանելի չէ:

Տեղեկատվության պակասը խոչընդոտում է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման օրինականությունը ստուգելու հնարավորությանը և հանգեցնում ջրային ռեսուրսների կառավարման թափանցիկության բացակայությանը: Օրինակ, ըստ տարբեր գեկույցների, Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի արտահոսքը գերազանցում է ներհոսքը՝ չափից ավելի շատ ջրօգտագործման թույլտվություններ տրամադրելու պատճառով: Արդյունքում շատ համայնքներում խմելու և ոռոգման ջուրը մատչելի չէ⁴: Շահագրգիռ կողմերը նշում են նաև այլ խնդիրների մասին, ինչպիսիք են, օրինակ, ջրի օգտագործման անարդյունավետությունը, ջրատար համակարգում անհիմն կորուստները, ստորերկրյա ջրերի անօրինական օգտագործումը, հիդրոէլեկտրակայանների կողմից գետերի ջրի չափազանց շատ օգտագործումը⁵:

Այս հանձնառությունը նպատակ ունի ի մի բերելու երկրում առկա բոլոր ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները միասնական տեղեկատվական համակարգում: Համակարգը օգտվողներին հնարավորություն կտա քարտեզի միջոցով ստուգել կոնկրետ ջրային ռեսուրսների համար առկա ջրօգտագործման թույլտվությունները, ինչպես նաև տեսնել ջրի օգտագործման թույլատրելի նպատակը (խմելու, տնտեսական, արդյունաբերության, ոռոգման և այլն): Տվյալների բազան անվճար հիմունքներով հասանելի կլինի առցանց, բացառությամբ անձնական տվյալների և գաղտնի տեղեկությունների, ինչպիսիք են օրենքով սահմանված ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները⁶:

Կառավարությունը հետագայում պլանավորում է օգտվողներին հնարավորություն տալ ջրօգտագործման թույլտվության առցանց դիմում ներկայացնել հարթակում՝ քարտեզի վրա համապատասխան վայրը գտնելու միջոցով⁷: Ջրային ռեսուրսների կառավարման բարելավման հետ մեկտեղ, առկա ջրային ռեսուրսների վերաբերյալ համապարփակ և բաց տեղեկատվական համակարգը կնպաստի ջրօգտագործման նկատմամբ հանրային վերահսկողությանը և համապատասխան թույլտվությունների հիմնավորման ստուգմանը: Արդյունքում ակնկալվում է, որ ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը կբարելավվի, և ջրի թույլատրված ծավալից շատ կամ անհիմն օգտագործման հետ կապված էկոլոգիական ռիսկերը նվազագույնի կհասնեն: Այսպիսով, հանձնառությունը կարող է զգալիորեն բարելավել ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալների ճշգրտությունը և հասանելիությունը, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարումը Հայաստանում: Երկարաժամկետ հեռանկարում այս տվյալները կարող են բարելավել ջրօգտագործման հանրային վերահսկողությունը և խթանել խմելու և ոռոգման

ջրի հասանելիության բարելավումը այն համայնքներում, որտեղ այն մինչ այժմ դժվար հասանելի է եղել:

Հետագա քայլերը

Հանձնառության արդյունավետ իրականացման համար էական է, որ կառավարությունը հաջողությամբ ավարտի ջրային ռեսուրսների գույքագրումը, որը որը հիմք կծառայի ջրային ռեսուրսների օգտագործման, որակի և մոնիտորինգի տվյալների հետագա հավաքագրման համար: Դա կօգնի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել երկրի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մասին: Անհրաժեշտ է տվյալների բազայի շարունակական թարմացման մեխանիզմներ մշակել:

Որպեսզի տեղեկատվությունը ծառայի իր նպատակներին, կառավարությունը և շահագրգիռ կառույցները պետք է հանրային իրազեկման արշավներ իրականացնեն: Փորձագետները նշում են բնակչության շրջանում բնապահպանական խնդիրների վերաբերյալ գիտակցության ցածր մակարդակի մասին: Այսպիսով, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը զուգահեռ անհրաժեշտ է համակարգի օգտագործման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ իրականացնել նախաձեռնող խմբերի և տեղական ՔՀԿ-ների համար: Կառավարությունը կարող է նաև իրազեկման միջոցառումներ իրականացնել բնակչության շրջանում՝ հատկապես այն համայնքներում, որտեղ ջրային ռեսուրսների օգտագործման խախտումներ են արձանագրվել:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Հրանտ Զաքարյան (ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2019

³ Ջրօգտագործման թույլտվությունների տարեկան հաշվետվություններ, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն, http://wrma.am/4_1.php

⁴ Ջրային տնտեսությունը Արարատյան դաշտավայրում, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն, 20.07.2016, <https://am.usembassy.gov/water-stewardship-ararat-valley/>: Դեպի Հայաստանում ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում (անգլերեն): Զարգացման ուղղությունները՝ երկրներ և տարածաշրջաններ, Վաշինգտոն, Համաշխարհային բանկի խումբ, 2014, <http://documents.worldbank.org/curated/en/433731468218409267/pdf/916410PUB0REPL0UBLIC009781464803352.pdf>:

Հանուն Հայաստանի Հանրապետության ժողովրդի. Բնապահպանական հանրային դատարանի վճիռն Արարատյան դաշտի աղետի վերաբերյալ, ԷկոԼուր, 05.02.2019, <https://www.ecolur.org/en/news/sevan/--/10818/>

⁵ Արման Վերմիշյան (Շրջակա միջավայրի փորձագետ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2019: Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

⁶ ՀՀ կառավարության 68-Ն որոշում, 02.02.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=111392>

⁷ Հրանտ Զաքարյան (ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2019

6. ... Հողային կադաստր

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Ապահովել հողային բազայի, հողօգտագործման սխեմաների գոտիավորման փաստաթղթերի (տվյալների) ամբողջական հասանելիությունը հանրությանը՝ քարտեզի միջոցով, որոնման հնարավորությամբ՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանության ռեժիմը:

Հանձնառության կատարման չափանիշներ

6.1 Վերազինել և էլեկտրոնային եղանակով քարտեզագրել անշարժ գույքի կադաստրի տվյալների բազան՝ ապահովելով կապը հողօգտագործման սխեմաների և գոտիավորման նախագծերի հետ, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի հետ:

6.2 Հրապարակել և որոնման հնարավորությամբ հասանելի դարձնել կադաստրի տվյալները՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Մեկնարկ՝ 2019թ. հունվար

Ավարտ՝ 2022թ. դեկտեմբեր²

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու- թյունը				Կատարման աստիճանը				Բերել է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականաչափ կրնկրեստ չէ	Ստուգման համար բավականաչափ կրնկրեստ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ակնառու
6. Հողային կադաստր		✓	✓			✓			✓		Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն-ների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Ներկայումս Հայաստանի հողային բազան հանրության համար հասանելի չէ: Որևէ տարածքի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին կամ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համապատասխան տուրք վճարելով: Թեև հողօգտագործման

սխեմաները, գոտիավորման պլաններն ու տարածական պլանավորման այլ փաստաթղթերը օրենքով բաց փաստաթղթեր են, դրանք կամ հասանելի չեն, կամ առկա են այնպիսի ձևաչափերով, որոնք ընկալելի չեն քաղաքացիների համար: Արդյունքում, տարիներ շարունակ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն այդ տեղեկությունները տրամադրել է քաղաքացիներին դիմումի հիման վրա՝ միայն օրենքով սահմանված կարգով: Այսպիսով, համայնքների ղեկավարները հնարավորություն ունենին կամայականորեն տնօրինելու հողամասերը՝ առանց հանրային վերահսկողության⁴:

Հետաքննող լրագրողները և հարցազրույց տրամադրած այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ նշել են Հայաստանում հողային ռեսուրսների չարաշահումների հետ կապված մի շարք մարտահրավերների մասին: «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք» համացանցային թերթը 2018 թ. մի հոդված է հրապարակել, որը կոռուպցիոն սխեմաներ է բացահայտում Հրազդան համայնքում պետությանը պատկանող հատուկ պահպանվող անտառային տարածքներում մի շարք պաշտոնյաների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հողատարածքներ ձեռք բերելու վերաբերյալ⁵: Համանման սխեմաներ են լինում համայնքային մակարդակով: Համայնքի ղեկավարները փոխում են հողային գոտու կարգավիճակը, որպեսզի կարողանան այն վաճառել իրենց հետ փոխկապակցված անձանց կամ այլ ազդեցիկ անձանց՝ հաճախ ելնելով անձնական շահերից: Օրինակ, անտառային գոտիներն օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, գյուղատնտեսական հողերը վաճառվում են շինարարության համար և այլն⁶:

Այս հանձնառությունը նպատակ ունի հանրությանը հասանելի դարձնելու հողային կադաստրի տվյալների շտեմարանը՝ քարտեզի միջոցով հողամասի գտնվելու վայրը որոնելու հնարավորությամբ: Հետաքննող լրագրողները նշում են, որ ներկայումս երբեմն խնդրահարույց է անգամ արբանյակային լուսանկարներով հայտնաբերված հողամասի հասցեն և սեփականատիրոջը պարզելը⁷: Հողի սեփականության համապարփակ տվյալների բազան հետաքննող լրագրողներին հնարավորություն կտա հեշտությամբ գտնել հողի սեփականատիրոջը և բացահայտել հողային գոտիների սխալ նպատակային օգտագործումը: Հանրային տվյալների բազան կնպաստի նաև հանրային ծառայությունների մատչելիությանը և պետական կառավարման մարմիններին հարցում ներկայացնելու դեպքում փաստաթղթային աշխատանքի կրճատմանը:

Հանձնառության տեքստում նշված են որոշակի սահմանափակումներ՝ կապված անձնական տվյալների հրապարակման հետ: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք սահմանափակումները վերաբերում են սեփականատիրոջ անվանը թե սեփականատիրոջ այնպիսի անձնական տվյալներին, ինչպիսիք են անձնագրային կամ կոնտակտային տվյալները: Հանձնառության տեքստում հստակ չի նշված նաև, որ տվյալներն անվճար կլինեն հանրության համար: Ըստ օրենքի՝ անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության համար տուրք է գանձվում, թեև կան որոշ բացառություններ, օրինակ՝ պետական մարմինների համար տուրք չի սահմանվում⁸: Այսինքն, անվճար տեղեկություն տրամադրելու համար օրենսդրական փոփոխություններ են անհրաժեշտ, որոնք չեն ներառվել հանձնառության մեջ: Ըստ ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ ՔՀԿ ներկայացուցչի՝ քննարկումների ընթացքում նշվել է, որ գործողությունների չորրորդ ծրագրի իրականացման փուլում նախատեսվում է ստեղծել միայն հողային կադաստրի էլեկտրոնային քարտեզը⁹: Կադաստրի տվյալների հրապարակումը, որը նախատեսված է հանձնառության երկրորդ չափորոշիչով, պլանավորվում է ավարտել 2022 թվականին՝ գործողությունների հաջորդ ծրագրի շրջանակում¹⁰:

Եթե հողային բազայի տեղեկատվությունը հանրությանը մատչելի լինի անվճար հիմունքներով, ինչպես ջրային ռեսուրսների կադաստրի հանձնառության դեպքում, ապա այս հանձնառությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ երկրի հողային ռեսուրսների կառավարման պետական գործելակերպում: Քաղաքացիական

հասարակության կողմից վերահսկողության բարելավումը ևս կնպաստի այս նպատակին: Եթե հանձնառությունը հստակ հիշատակեր տեղեկատվության անվճար տրամադրման մասին՝ նախատեսելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, այն կարող էր գնահատվել փոխակերպող: Նման գնահատական տալու համար անհրաժեշտ է նաև, որ հանձնառության տեքստում ավելի կոնկրետ նշվեր, թե ինչ տեղեկություններ են հրապարակվելու հոդերի սեփականատերերի վերաբերյալ:

Հետագա քայլերը

Այս հանձնառությունը կարող է կարևոր առաջընթաց լինել հողային կադաստրի բաց տվյալների ապահովման ուղղությամբ: Սահմանված նպատակն առավելագույնս արդյունավետ իրականացնելու և զգալի ազդեցության հասնելու համար առաջարկվում է հետևյալը՝

- Ընդունել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ հողի սեփականության վերաբերյալ տեղեկություններն անվճար տրամադրելու համար:
- Օրենքով թույլատրված սահմաններում հնարավորինս ծավալուն տեղեկատվություն ապահովել հողամասերի սեփականատերերի մասին:
- Համապատասխան մեխանիզմներ ապահովել տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար:
- Իրազեկման միջոցառումներ իրականացնել տվյալների բազայի լայն օգտագործման համար:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում՝ 2019 թ. հունվար – 2020 թ. դեկտեմբեր, հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ ՀՀ օրենքը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», 14.04.1999, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121898>

⁴ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

⁵ Պաշտոնյաները Ծաղկաձորում 50 հեկտար անտառ են սեփականաշնորհել, Hetq.am, 28.09.2018, <https://hetq.am/hy/article/93475>

⁶ Մարինա Մխիթարյան (ՄԱԶԾ Կոլբա լաբ), Մարիամ Զադոյան և Սյուզաննա Սողոմոնյան (Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա), Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), Արփինե Հակոբյան (ՀԿ կենտրոն), հարցազրույցներ ԱՀՄ հետազոտողի հետ

⁷ Տիրայր Մուրադյան (Հետաքննող լրագրողներ ՀԿ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 07 մարտի 2019

⁸ ՀՀ օրենքը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», հոդված 71-75, 14.04.1999, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121898>

⁹ Այս մեկնաբանությունը տրամադրվել է Վարուժան Հոկտանյանի կողմից (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), զեկույցի հրապարակմանը նախորդող վերանայման փուլում:

¹⁰ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

«Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման և վերլուծության վրա հիմնված գործիքի ներդրում:

Հանձնառության կատարման չափանիշներ

7.1 1.Շահառուին՝ իր համար հասանելի սոցիալական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով <http://www.esocial.am> ինտեգրված սոցիալական ծառայությունների առգիծ տեղեկատվական համակարգում «Open&Social» գործիքի ներդրում, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների քարտեզագրում:

7.2 Հարթակի ստեղծում և առկա լուծումների զարգացում ու լրամշակում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշպանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային գործընթացների պարզեցում, ժամանակի կրճատում:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը		Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցու- թյունը				Կատարման աստիճանը				Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխանկետառու	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ակնառու
		✓	✓	✓		✓		✓			Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն-ների ծրագրի իրականացման ավարտին:				
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունն երի մատչելիությու ն		✓	✓	✓		✓		✓			Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն-ների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Այս հանձնառությունը շարունակում է գործողությունների երրորդ ծրագրի 7-րդ հանձնառությունը, որը լիարժեք չիրականացվեց՝ հիմնականում ֆինանսավորման

պակասի պատճառով: Հանձնառությունը նախատեսում է բարելավել սոցիալական պաշտպանության ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը՝ ստեղծելով առցանց համակարգ (Open&Social), որտեղ օգտագործողը կարող է տեղեկություն ստանալ այդ ծառայությունների չափորոշիչներին իր տվյալների համապատասխանության վերաբերյալ: Հայաստանում իրականացվում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 պետական ծրագրեր, որոնք ենթադրում են նաև բազմաբնույթ ծառայություններ, բազմաբնույթ նախապայմաններով և ընթացակարգերով²:

Այս հարթակի միջոցով օգտվողները հնարավորություն կունենան մուտքագրել իրենց ժողովրդագրական տվյալները, ինչպիսիք են տարիքը, ընտանեկան կարգավիճակը, զբաղվածության կարգավիճակը, առողջական վիճակը և գտնվելու վայրը, և տեղեկություն ստանալ իրենց համար հասանելի սոցիալական ծառայությունների մասին: Օգտվողները տեղեկություն կստանան նաև այդ ծառայությունները կամ աջակցությունը ստանալու ընթացակարգերի և իրենց տարածքում այլընտրանքային ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների մասին: Նշված ծառայությունները ներառում են զբաղվածության աջակցությունը, հաշմանդամության կարգի սահմանման համար բժշկասոցիալական փորձաքննությունը, սոցիալական նպաստների և կենսաթոշակների տրամադրումը, սոցիալական աշխատողի աջակցությունը:

Այսպիսով, ցանկացած անձ կարող է պարզել սոցիալական ծառայություններ ստանալու իր իրավասությունը, և սոցիալական ծառայությունների համակարգի աշխատակիցների հայեցողական մեկնաբանությունները և որոշումները նվազագույնի կհասցվեն:

Սոցիալական ծրագրերի և համապատասխանության չափանիշների վերաբերյալ իրազեկվածությունը ոչ միայն կօգնի անհատական կարիքները բավարարելու համար գտնել համապատասխան ծառայությունները, այլև կնպաստի հանրային իրազեկվածության ընդհանուր մակարդակի բարձրացմանը և սոցիալական ծառայությունների մատչելիությանը խոչընդոտող կոռուպցիոն գործարքների կանխարգելմանը: Հարթակի տրամադրած մյուս հնարավորությունը լինելու է առանձին ծառայությունների և ծառայություններ մատուցողների գնահատման համակարգը: Այս համակարգի միջոցով տրամադրված կարծիքները համապատասխան պետական կառույցներին կօգնեն բարելավել իրենց գործելակերպը:

Շահագրգիռ կողմերը կարևորում են այս հանձնառությունը, քանի որ այն ավելի մատչելի կդարձնի համապատասխան սոցիալական ծառայությունների և նպաստների վերաբերյալ տեղեկատվությունը: Եթե համակարգը ճշգրիտ տեղեկություն տրամադրի չափորոշիչներին համապատասխանելու մասին, ապա օգտվողները կկարողանան պահանջել որոշակի ծառայություններ ստանալու իրենց հայտերի վերանայումը (եթե նախկինում մերժվել են): Սոցիալական ծառայությունից մերժում ստանալու դեպքում նրանք կարող են նաև զանգահարել թեժ գծի ծառայություն կամ դիմել այլ լիազոր մարմինների³:

Որոշ շահագրգիռ կողմեր հարցականի տակ են դնում հարթակի կիրառելիությունը, քանի որ հանձնառության հիմնական թիրախային լսարանը սոցիալական խոցելի խմբերն են, որոնք կարող են համացանցի հասանելիություն չունենալ: Հարցազրույցների մասնակից ՔՀԿ-ները կարծում են, որ տվյալ հանձնառության ազդեցությունը կարող է ավելի բարձր լինել, եթե համապատասխան պետական ծառայողները (համայնքապետարանների աշխատակիցները, սոցիալական աշխատողները և այլն) քաղաքացիներին աջակցություն տրամադրեն իրենց տվյալների մուտքագրման և ծառայությունների հասանելիության բացահայտման գործում⁴: Տվյալ տարածքում հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները կարող են օգտակար լինել խոշոր քաղաքների բնակչության համար: Սակայն փոքր համայնքներում առկա ծառայությունների մասին մարդիկ իմանում են՝ միմյանց ասելով: Հանձնառությունն օգտվողներին հնարավորություն է տալիս նաև

գնահատելու ծառայությունները: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչպես են օգտվողներին առաջարկելու գնահատում կատարել. արդյո՞ք քաղաքացիներն իրենց նախաձեռնությամբ պետք է համակարգ մուտք գործեն և գնահատեն:

Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ հանձնառությունը կարող է առաջընթաց բերել սոցիալական ծառայությունների մատուցման գործելակերպի փոփոխության առումով: Սակայն հաշվի առնելով կայքի օգտագործելիության խնդիրը և գնահատման համակարգի անհստակությունը, հնարավոր ազդեցությունը գնահատվում է փոքր:

Հետագա քայլերը

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հստակեցնել գնահատման համակարգի հետ կապված մանրամասները: Դա կօգնի հստակ պատկերացում կազմել գնահատման չափանիշների և դրա կիրառելիության վերաբերյալ (արդյո՞ք դա քանակական գնահատական է, թե գնահատման ավելի մանրամասն չափանիշներ են տրամադրվելու): Կառավարությունը պետք է նաև հստակ սահմանի, թե տրված գնահատականներն ինչպես են հաշվի առնվելու սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքականության մշակման ու իրականացման գործում:

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է նաև հետևյալը.

- Կազմակերպել իրազեկման լայնածավալ քարոզարշավ՝ սոցիալական տարբեր խմբերի կողմից հարթակի կիրառումը ապահովելու համար, ներառյալ խոցելի խմբերը, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, տնտեսապես անապահով ընտանիքները և հեռավոր համայնքներում ապրող մարդիկ: Իրազեկման համար կարող են արդյունավետ լինել հեռուստատեսային արշավները և տեղական սոցիալական ծառայությունների ներգրավումը: Հարթակի օգտագործման հարցում քաղաքացիներին գործնական աջակցություն ցուցաբերելու համար հարկավոր է ներգրավել համայնքային սոցիալական աշխատողներին:
- Ապահովել հարթակի բարձր տեխնիկական հզորություն և պատշաճ աշխատանք: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը նշել է կայքի այնպիսի մասնագիտական դիզայնի և կառուցվածքի ապահովման անհրաժեշտության մասին, որը կոյուրինացնի կայքի օգտագործումը և նոր բաժիններ ավելացնելու հնարավորություն կապահովի⁵:
- Տեքստն ավելի մատչելի և դյուրընթեռնելի դարձնել սովորական օգտվողի համար: Տեղեկատվությունը մատչելի ներկայացնելու համար կարելի է դիտարկել գրաֆիկական ձևաչափով պատկերների և կարճ տեսանյութերի օգտագործումը:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

³ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

⁴ Գայանե Մարտիրոսյան (Վորլդ Վիժն Հայաստան), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 19 փետրվարի 2019

⁵ Սուրեն Դեհերյան (Լրագրողներ հանուն ապագայի), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 մարտի 2019

8. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Կրթության կառավարման տեղեկատվական (սովորողների հաշվառման, տեղափոխման, հերթագրման, ընդունելության և տեղափոխման) միասնական համակարգի զարգացում՝ ներառելով բոլոր կրթական մակարդակների՝ այդ թվում նախադպրոցական, բոլոր հաստատությունները՝ անկախ կազմակերպչական ձևերից և ենթակայությունից: Այն հնարավորություն կտա բազմաշերտ և համապարփակ տեղեկատվություն ստանալ կազմակերպության գործունեության, հաշվետվությունների, սովորողների հաճախելիության, տեղափոխումների, թափուր տեղերի, հեռացման, նախակրթական հաստատությունների երեխաների գրանցման և այլ հարցերի վերաբերյալ: Համակարգը կապահովի ծնողների հետադարձ կապի և բողոքների ներկայացման հնարավորություն, ինչպես նաև հետևելու դրանց լուծումների համար ձեռնարկված քայլերին:

Հանձնառության կատարման չափանիշներ

8.1 Կրթության ոլորտի կառավարման միասնական համակարգի ստեղծում. բոլոր ուսումնական հաստատությունների մասին տեղեկատվության մուտքագրման համակարգ:

8.2 «Կրթության մասին» ՀՀ օրենքում նման համակարգի համար օրենքի համապատասխան դրույթի ամրագրում: Օրենքի նախագծի փաթեթի ներկայացում Ազգային ժողով:

8.3 Մասնակից բոլոր կողմերին իրազեկում համակարգի, դրա նշանակության, գործունեության և արդյունավետության մասին:

8.4 Փորձնական փուլի ամփոփում, խնդիրների վերհանում, անհրաժեշտության դեպքում լրամշակում: Համակարգի փուլային ներդրում, գործընթացի ավարտ:

8.5 Համակարգի գործարկման և ներդրման մշտադիտարկում: Գործընթացի գնահատում:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառությունը	Չափելիությունը		Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարման աստիճանը				Բերել է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականացափ կոնկրետ չէ	Ստուգման համար բավականացափ կոնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխանկոտ	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարզինալ	Զգալի	Ակնառու

8. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ		✓	✓	✓	✓	✓	✓	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:	Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:
---	--	---	---	---	---	---	---	--	--

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանում հեշտ չէ ընդգրկվել նախադպրոցական կրթական համակարգում՝ մանկապարտեզներում տեղերի սահմանափակ լինելու պատճառով: «Մեյվ դը չիլդրեն Հայաստան» և «Մեդիա մոդել» կազմակերպությունների իրականացրած՝ նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտության համաձայն՝ մանկապարտեզների ընդունելության առավել տարածված խոչընդոտները կապված են հերթում երկար սպասելու և հաստատության կողմից բազմաթիվ փաստաթղթեր պահանջելու հետ: Հետազոտությունը բացահայտել է նաև ընդունելության գործընթացում կոռուպցիոն դեպքեր, այդ թվում՝ համայնքի ղեկավարության հատուկ թույլտվության կամ կաշառքի պահանջ, ինչպես նաև մի շարք ոչ ֆորմալ մեխանիզմների օգտագործում, ինչպես, օրինակ, միջնորդների ներգրավումը: Այս միտումներն առկա են հատկապես քաղաքային համայնքների պետական մանկապարտեզներում, որտեղ նախադպրոցական հաստատությունների սահմանափակ քանակի համեմատ պահանջարկը չափազանց մեծ է³: Նմանատիպ խնդիրներ են նկատվել նաև բարձր պահանջարկ և սահմանափակ տեղեր ունեցող միջնակարգ դպրոցների ընդունելության գործընթացում:

Այս հանձնառությունը նպատակ ունի հեշտացնելու ընդունելության գործընթացը՝ բոլոր ուսումնական հաստատությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրող միասնական հարթակի ստեղծման միջոցով, որտեղ տեղեկություններ կլինեն հաստատությունների լիցենզիաների, առկա տեղերի և ընդունելության հնարավորությունների մասին: Հարթակը հնարավորություն կտա նաև առցանց գրանցվել և ներկայացնել ընդունելության փաստաթղթերը: Այս պրակտիկան կարող է նվազեցնել ընդունելության ոչ ֆորմալ և կոռուպցիոն մեխանիզմների օգտագործման հնարավորությունը, քանի որ համակարգն ավտոմատ կերպով կգրանցի երեխաներին՝ ըստ դիմելու հերթականության:

Ընդունելության հավասար հնարավորությունների ապահովման հետ մեկտեղ համակարգը թույլ կտա բացառել միևնույն երեխայի կրկնակի գրանցումը մի քանի հաստատություններում: (Երեխաների համար տեղ ապահովելու համար ծնողները հաճախ միաժամանակ դիմում են մի քանի հաստատություն, խառնաշփոթություն ստեղծելով ընդունելության գործընթացում): Բացի այդ, համակարգը կարող է հեշտացնել սովորողի՝ մեկ ուսումնական հաստատությունից մյուսը տեղափոխելու գործընթացը՝ առանց լրացուցիչ վարչարարական ընթացակարգերի:

Ընդհանուր առմամբ, հարթակն օգտակար կլինի ոչ միայն ծնողների, այլև ՀՀ կրթության և գիտության նախարարության և այլ պատասխանատու մարմինների (համայնքապետարանների և մարզպետարանների) համար: Ավելի հեշտ կլինի հետևել ուսումնական հաստատություններում ընդունելության և տեղափոխման ընդհանուր գործընթացին և վերահսկել այն: Հանձնառությունը նաև կնվազեցնի ռեսուրսների ծախսը, քանի որ ընդունելության գործընթացը ներկայումս բազմաթիվ փաստաթղթեր և բազմակի հաղորդակցություն է պահանջում:

Ընդունելության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը մեկ հարթակում կարող է իշխանություններին օգնել նաև ավելի հեշտ գտնել կրթական համակարգից դուրս

մնացած երեխաներին՝ համայնքներում գրանցված և դպրոց ընդունված երեխաների մասին տվյալները համեմատելու միջոցով: Հանձնառության պատասխանատու Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը նշում է, որ նրանք կկարողանան ավելի հեշտությամբ բացահայտել այս տվյալները և դրանք փոխանցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն իր հերթին քայլեր կձեռնարկի կրթական համակարգից դուրս մնացած երեխաներին դպրոց ընդունելու ուղղությամբ⁴:

Եվ վերջինը՝ հանձնառությունը նախատեսում է հարթակում տեղ նախատեսել ծնողների հետադարձ կապի համար: Կրթության և գիտության նախարարությունը կհետևի ծնողների կարծիքներին: Հետադարձ կապի առկայությունը լրացուցիչ հնարավորություն կընձեռի (գործող թեժ գծից զատ) ուսումնական հաստատություններում առկա խնդիրները բացահայտելու և լուծելու, ինչպես նաև համապատասխան առաջարկներ հավաքագրելու համար: Այսպիսով, տեղեկատվության մատչելիությունից բացի, հանձնառությունը վերաբերում է նաև քաղաքացիական մասնակցությանը, քանի որ այն հնարավորություն է ընձեռում քաղաքացիների արձագանքների տրամադրման և, հետևաբար, լիազոր պետական մարմինների որոշումների կայացման գործում նրանց հնարավոր ներդրումն ունենալու համար:

Հանձնառությունը ներառում է ոչ միայն նախադպրոցական ուսումնական հաստատությունները և միջնակարգ դպրոցները, այլև մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները: Այնուամենայնիվ, հանձնառության տեքստում չի մանրամասնվում, թե բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ ինչ տեղեկատվություն կտրամադրվի և արդյոք հնարավոր կլինի գրանցվել բուհ ընդունվելու համար: Կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի խոսքով, հանձնառությունը ներառում է նաև մասնավոր հաստատությունները, սակայն դա ևս հստակ չի երևում հանձնառության տեքստից:

Հարցազրույցներին մասնակցած ՔՀԿ ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել՝ կապված բնակչության համար առցանց ծառայությունների հասանելիության հետ: Նրանք փորձում էին հասկանալ, թե արդյոք առցանց ընդունելության հնարավորությունը լիովին փոխարինելու է ընդունելության առկա տարբերակը: Եթե առցանց ընդունելությանը զուգահեռ հնարավորություն է տրվելու հաստատություն ընդունվել անմիջականորեն՝ անցանց եղանակով, կնշանակի, որ ուսումնական հաստատությունները նորից հնարավորություն կունենան ոչ ֆորմալ մեխանիզմներ օգտագործել իրենց նախընտրությամբ երեխաներին ընդունելու համար: Սակայն եթե ընդունելությունը հնարավոր լինի միայն առցանց հարթակի միջոցով, խոցելի խմբերը կամ մարզերում գտնվող ընտանիքները, որոնց համար համացանցի և համակարգիչների հասանելիությունը սահմանափակ է, իրենց երեխաներին գրանցելու համար կարող են ստիպված լինել դիմելու այլ եղանակների: Օրինակ՝ գրանցման գործընթացն իրականացնելու համար նրանք կարող են ստիպված լինել վճարել այլ անձանց կամ ծառայություններին կամ դիմել դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենին կամ այլ աշխատակիցներին⁵:

Լիարժեք իրականացվելու դեպքում այս հանձնառությունը կարող է զգալիորեն բարելավել Հայաստանում կրթական հաստատություններում ներառման քաղաքականությունը: Այն կարող է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և հաստատություն ընտրելու, դիմելու և ընդունվելու գործընթացներն ավելի դյուրին դարձնել: Հանձնառությունն ընդունելության միտումների մասին հստակ և համապարփակ պատկերացում կապահովի և հնարավորություն կտա վերլուծել տվյալները ոլորտում ավելի արդյունավետ քաղաքականություն մշակելու նպատակով: Այնուամենայնիվ, հանձնառությունը չի գնահատվել փոխակերպող, քանի որ հստակ չեն բարձրագույն

ուսումնական հաստատությունների վերաբերյալ մանրամասները և առցանց գրանցման հարթակով առկա անցանց տարբերակները փոխարինելու հարցը:

Հետագա քայլերը

Հետագա գործընթացում ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է տալիս հետևյալը.

- Ուսումնական հաստատությունների տրամադրած տեղեկատվության շարունակական թարմացում ապահովել:
- Մեխանիզմներ մշակել բոլոր ընտանիքների համար հարթակի հասանելիությունն ապահովելու համար և գրանցման գործընթացի կազմակերպման հնարավոր խախտումները կանխարգելող միջոցառումներ նախատեսել:
- Մահմանել որոշակի մեխանիզմներ հարթակում տեղ գտած բողոքներին, մեկնաբանություններին և առաջարկներին արձագանքելու համար: Մեխանիզմներ մշակել խնդիրներին համապատասխան լուծումներ տրամադրելու, իսկ խախտումների դեպքերում՝ ուսումնական հաստատություններին և աշխատակազմին պատասխանատվության ենթարկելու համար:
- Հստակեցնել ուսումնական հաստատությունների կողմից հրապարակվող տեղեկատվության շրջանակը և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության փաստաթղթերը հանձնելու հնարավորությունը:

Շահագրգիռ կողմերն առաջարկում են նաև լրացուցիչ տեղեկություններ տրամադրել կրթական հաստատություններ ընդունվողների և ավարտողների վիճակագրական տվյալների, ըստ մարզերի սովորողների թվի բաշխման, կոնկրետ դպրոցներից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության վիճակագրության և հնարավորության դեպքում՝ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ¹: Նման տեղեկատվությունը թույլ կտա պատասխանատու պետական կառույցներին, ոլորտի փորձագետներին և հետազոտողներին օգտվել բաց տվյալներից՝ դրանք վերլուծելու և քաղաքականության մշակման գործընթացում մասնակցելու նպատակներով, իսկ հաստատությունների հնարավոր դիմորդներին կօգնի հետևել որոշակի կրթական հաստատության տվյալներին և համապատասխան որոշումներ կայացնել:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում հանձնառության նկարագրությունը ներառում է նաև հետևյալը՝ «Այն կօգնի նաև կարգավորել կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և ներառելու գործընթացը: Համակարգի գործունեությունը կապահովի յուրաքանչյուր երեխայի կրթական իրավունքի իրացումը՝ կարգավորելով դպրոցականների հաշվառման գործընթացը, ապահովելով, որ իրականացվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և բոլոր այլ պատասխանատու հաստատությունների և շահագրգիռ կողմերի պարտականությունները երեխաներին կրթության ոլորտում ներգրավելու գործընթացում»: Հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտություն, Մեդիա մոդել, Մեյլ դը չիլդրեն, Երևան, 2017, https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf

⁴ Սյուզաննա Մակյան (ՀՀ կրթության և գիտության նախարարություն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 19 փետրվարի 2019

⁵ Սուրեն Դեհերյան (Լրագրողներ հանուն ապագայի), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 14 մարտի 2019

⁶ Մարինա Գալստյան (Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 15 փետրվարի 2019

9. Առողջապահական աջակցության ծրագիր

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Այս պահին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքների, առկա տեղերի և հերթագրումների մասին հանրությանը իրազեկելու և թափանցիկ դարձնելու համար ստեղծվել է <https://www.armed.am/govlimits/> կայքը, որտեղ երեք գույնով ցուցադրվում են վերը նշված տվյալները կարմիր (սպառված), դեղին (հերթագրված) և կանաչ (առկա) և ֆինանսական սահմանաչափերը: Սահմանաչափերի ցուցադրման աղբյուրը հանդիսանում է պետական պատվերի շրջանակում յուրաքանչյուր բժշկական կազմակերպության համար համակարգում մուտքագրվող տվյալները: Քաղաքացու համար ավելի կիստակեցվի և կպարզեցվի տվյալների աղբյուրը (այս ծառայությունները խմբավորված են, քանի որ դրանց նպատակը սահմանաչափն ու ֆինանսավորումն է բժշկական կազմակերպության համար):

Կստեղծվի նաև առցանց հերթագրումների հնարավորություն: Ուղեգիր տրամադրող բժիշկը համակարգում կմուտքագրի ուղեգրի համարը և անհրաժեշտության դեպքում կկցվի նաև դեպքի հետ առնչություն ունեցող հավելյալ փաստաթղթեր: Պացիենտը առկա համակարգի իր էջից կհերթագրվի՝ ընտրելով բժշկական կազմակերպությունը, կցելով ուղեգիրը: Ընտրած բժշկական կազմակերպությունում ըստ հայտի կիրականացվի հերթագրում և դրա մասին կտեղեկացվի պացիենտին: Հերթագրման ժամանակ համակարգը կիրականացնի ուղեգրի համարի ստուգում՝ կեղծումներից խուսափելու համար: Քաղաքացին կստանա տեղեկատվություն տվյալ բժշկական կազմակերպությունում բժշկական օգնություն ստանալու օրվա մասին և կունենա հնարավորություն գնահատելու տվյալ գործառույթը իր էջից:

Հանձնառության կատարման չափանիշներ

9.1 Հերթագրման համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում²:

9.2 Համակարգում սահմանաչափերի աղյուսակների և էլեկտրոնային ուղեգրերի տրամադրման տվյալների բլոկի բարելավում և հերթագրման բլոկի ստեղծում <https://armed.am> կայքի www.ehealth.am համակարգում:

9.3 Ստեղծված համակարգի պիլոտային փորձարկում մի քանի բժշկական կազմակերպությունում:

9.4 Պիլոտի ժամանակ վերհանված թերությունների շտկում համակարգում: Իրավական փաստաթղթերի վերանայում:

9.5 Հետադարձ կապի ներդրում և հանրային իրազեկում:

Մեկնարկ՝ 2019թ. փետրվար

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը	Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)	Պոտենցիալ ազդեցու-թյունը	Կատարման աստիճանը	Բերե՞լ է դա բաց կառավարմանը
----------------------	---------------------	--	-----------------------------	----------------------	--------------------------------

	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ չէ	Ստուգման համար բավականաչափ կոնկրետ	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարություններ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարզինալ	Զգալի	Ակնառու
9. Առողջապահական աջակցության ծրագիր		✓	✓			✓			✓		Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագրիչը և հանձնառության նպատակը

Հայաստանում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձինք (օրինակ, խոցելի սոցիալական խմբերը և որոշ հիվանդություններ ունեցողները)³ ներկայումս պետք է ժամանակատար գործընթաց անցնեն այդ օգնությունը ստանալու համար: Նախ, նրանք պետք է ուղեգիր ստանան առաջնային առողջապահական հաստատությունից, պետական բժշկական հանձնաժողովից կամ այլ լիազորված պետական մարմնից: Ապա նրանք պետք է գտնեն անհրաժեշտ ծառայությունը մատուցող բժշկական կազմակերպությունը (հիվանդանոցը): Քանի որ անվճար բժշկական ծառայությունների բյուջեն սահմանափակ է, քաղաքացիները հաճախ ստիպված են հերթագրվել հիվանդանոցում և սպասել իրենց հերթին: Ըստ ՔՀԿ-ների ուսումնասիրությունների, բժշկական օգնության համար հերթում սպասելու ժամկետը տատանվում է երկուսից տասը ամիս:

Բացի ժամանակատար լինելուց, հերթագրման կարգը, որպես կանոն, թափանցիկ չէ և առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր⁴: Օրինակ, հիվանդներին «հերթից դուրս» սպասարկելու համար կիրառվում են ոչ օրինական վճարումներ կամ այլ ոչ ֆորմալ մեխանիզմներ, կամ հիվանդներին առաջարկվում է ծառայությունները տրամադրել վճարովի հիմունքներով՝ ժամանակին և արդյունավետ բուժօգնություն ստանալու համար: Կոռուպցիոն ռիսկերից բացի, հերթագրման ընթացակարգը խոցելի խմբերի համար մի շարք դժվարություններ է ստեղծում: Հիվանդները պետք է գտնեն ֆինանսավորում ունեցող հիվանդանոցներ, բանակցություններ վարեն մի քանի բժշկական հաստատությունների հետ, երբեմն էլ բժշկական օգնություն ստանալու համար այլ մարզ կամ քաղաք մեկնեն:

Առողջապահության նախարարության www.armed.am ինտերնետային կայքում արդեն տեղադրված են տեղեկություններ բժշկական կազմակերպություններում ֆինանսական շեմերի և ֆինանսավորման մնացորդի մասին⁵: Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու այս տեղեկությունները և որևէ հաստատությունում պետության կողմից երաշխավորված բուժօգնության ծառայություններ ստանալու համար քաղաքացիներին առցանց հերթագրվելու հնարավորություն տալ: Այս հանձնառությունը ներառում է նաև հետադարձ կապի մեխանիզմի ներդրում օգտագործողների կողմից առկա խնդիրները բարձրաձայնելու համար, որպեսզի որոշումներ կայացնողները ստացած արձագանքների հիման վրա կարողանան նպատակային լուծումներ կիրառել:

ԱՀՄ հետազոտողը և հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերը այս հանձնառության հետ կապված մի շարք խնդիրներ են նկատել: Նախ, հանրային ծառայությունների համար համացանցի օգտագործման պրակտիկան դեռևս քիչ է

տարածված բնակչության շրջանում: Մա հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք, որ այս հանձնառությունը նպատակ ունի աջակցելու խոցելի խմբերին, որոնք նոր ծառայությունից օգտվելու համար կարող են անհրաժեշտ համակարգչային տեխնիկա կամ համացանցի հասանելիություն չունենալ⁶: Այնուհետև, համակարգում գրանցվելիս (որը պարտադիր է հերթագրվելու համար) պահանջվում է, որ օգտվողն ունենա նույնականացման քարտ⁷, իսկ բնակչության մեծամասնությունը այդ քարտը չունի⁸: Վերջապես, որոշ շահագրգիռ կողմեր կասկածում են, որ քաղաքացիները, հատկապես համացանցից չօգտվող տարեց մարդիկ, անձնային հաղորդակցությանը կնախընտրեն էլեկտրոնային համակարգը⁹: Այնուամենայնիվ, ինչպես նշված է հանձնառության մեջ, քաղաքացիները կարող են հերթագրվել նաև բժշկի աջակցությամբ: Դա այլընտրանքային լուծում կլինի այն դեպքերում, երբ հիվանդը չի ցանկանում կամ չի կարողանում ինքնուրույն օգտվել համակարգից:

Իրականացվելու դեպքում այս հանձնառությունը քաղաքացիներին որոշակի բժշկական հաստատությունում առցանց հերթագրվելու հնարավորություն կտրամադրի: Առցանց հերթագրումը թույլ կտա նվազեցնել կոռուպցիոն ռիսկեր պարունակող անձնային փոխհարաբերությունները: Այն կարող է նաև ավելի հեշտ դարձնել առողջապահական ծառայությունների համար հերթագրվելու գործընթացը: Բժշկական հաստատություններ անձամբ այցելելու փոխարեն քաղաքացիները կկարողանան օգտվել առցանց միջոցներից (իսկ նրանց, ովքեր առցանց ձևաթղթեր լրացնելու փորձ չունեն, գրանցման հարցում կարող են օգնել բժիշկները): Մինևս սա հաշվի առնելով վերոնշյալ սահմանափակումները և գործողությունների ծրագրի իրականացման փուլում միայն մի քանի բուժհաստատությունների ներառումը, այս հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվում է չափավոր:

Հետագա քայլերը

Հանձնառության արդյունավետ իրականացումը և հնարավորինս մեծ ազդեցությունն ապահովելու նպատակով ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Հստակ սահմանել հերթագրման համակարգը փորձարկելու համար նախատեսված բժշկական հաստատությունների ընտրության սկզբունքները:
- Հստակեցնել առանց նույնականացման քարտի՝ բժիշկների կամ բուժհաստատության այլ աշխատակիցների օգնությամբ հերթագրվելու հնարավորությունը: Հնարավորության դեպքում քաղաքացիներին պետք է թույլ տրվի համակարգում գրանցվել մուտքանվան (login) և գաղտնաբառի միջոցով, որոնք կարող են տրամադրվել առաջնային առողջապահական հաստատության կողմից: Հարթակից առանց նույնականացման քարտի օգտվելու հնարավորությունը չպետք է վնասի հարթակի վստահելիությանը և հասանելիությանը:

Հետադարձ կապի տրամադրման հնարավորությունը նույնպես պետք է հստակեցվի: Պետք է ստույգ նշվի, թե արդյոք հետադարձ կապը վերաբերում է միայն հերթագրման գործընթացին, թե բուժհաստատությունների մատուցած ծառայությունների վերաբերյալ ցանկացած կարծիքի: Հարկ է սահմանել նաև, թե ինչպես պետք է հաշվի առնվեն ստացված կարծիքները:

Հետագայում կառավարությունը կարող է հասցեագրել նաև առողջապահության համակարգի թափանցիկության և հաշվետվողականության այլ խնդիրներ: Հանձնառությունները կարող են ներառել ՔՀԿ զեկույցներում¹⁰ և հարցազրույցների մասնակիցների կողմից մատնանշված մի շարք հարցեր, ներառյալ.

- առողջապահության որակի վերահսկման հստակ և թափանցիկ ընթացակարգեր,
- առողջապահության մոնիթորինգի արդյունքների հրապարակում,
- պետության կողմից տրամադրվող դեղերի գների և ծավալների թափանցիկություն,
- պետության կողմից տրամադրվող հասանելի դեղերի ցուցակի հրապարակում բժշկական հաստատություններում,
- վճարովի բժշկական ծառայությունների գնացուցակների և գնագոյացման մեխանիզմների հրապարակում:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Անգլերեն տարբերակում՝ «Հերթագրման համակարգի մշակման աշխատանքային խմբի ստեղծում»: Հղում՝ ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագիր 2018-2020 (անգլերեն), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_EN.doc

³ ՀՀ կառավարության 318-Ն որոշումը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին, 04.03.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128068>

⁴ Կոռուպցիոն ռիսկերի գնահատում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ոլորտում, «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2016, <https://transparency.am/files/publications/1465990875-0-326756.pdf>

⁵ Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքները, առկա տեղերը և հերթագրումները, Armed.am, <https://www.armed.am/govlimits/>

⁶ Գայանե Մարտիրոսյան (Վորլդ Վիժն Հայաստան), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 19 փետրվարի 2019

⁷ Ծաղկանուշ Սարգսյան (Առողջապահության նախարարություն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 21 փետրվարի 2019

⁸ Ըստ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության, որը Հայաստանում էլեկտրոնային ստորագրություններ տրամադրող լիազորված ընկերությունն է, Հայաստանում մոտ մեկ միլիոն քաղաքացի նույնականացման քարտ ունի («ԷԿԵՆԳ» ՓԲԸ հետ ԱՀՄ հետազոտողի էլեկտրոնային հաղորդակցություն, 06 մարտի 2019)

⁹ Լիանա Դոյրոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

¹⁰ Կոռուպցիոն ռիսկերի գնահատում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ոլորտում, «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2016, <https://transparency.am/files/publications/1465990875-0-326756.pdf>

10. Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակ

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Կատեղծվի հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակ:

Հանձնառության կատարման չափանիշներ

10.1 Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա տեխնիկական առաջադրանքի մշակում՝ պետական շահագրգիռ կողմերի և քաղհասարակության կազմակերպությունների հետ համատեղ:

10.2 Հարթակի ներդրում և փորձարկում:

10.3 Հարթակի լիարժեք գործարկում:

Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառությունը	Չափելիությունը		Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարման աստիճանը				Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Ստուգման համար բավականաչափ կրնիքետ չէ	Ստուգման համար բավականաչափ կրնիքետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Անառտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարզինալ	Զգալի	Անհառու
10. Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակ	✓			✓		✓			✓		Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողությունների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանի փոփոխված Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք²: Այս հոդվածից բխող՝ 2017 թ. ընդունված «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է հանրագիր ներկայացրած անձի իրավունքները, հանրագրի ներկայացման, գրանցման և հրապարակման կարգը և մերժման օրինական հիմքերը³:

Ըստ օրենքի՝ հանրագրերը կարող են ներկայացվել թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային եղանակով: Հրապարակային հանրագիր ներկայացնելիս (սահմանված ձևաթուղթը

լրացնելու միջոցով), եթե դրա մերժման համար պատճառներ չկան, պատասխանատու պետական մարմինը այն հրապարակում է համապատասխան էլեկտրոնային հարթակում: Հրապարակվելուց հետո 30-օրյա ժամկետում, հանրագրին կարող են միանալ այլ անձինք: Հանրագիրը ստացած պետական մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է հանրագրին պատասխանել ստորագրման ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում⁴:

Այս հանձնառությունը հանրագրեր ներկայացնելու համար միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծելու նպատակ ունի: Հանրագրերի մասին օրենքը չի սահմանում ստորագրությունների նվազագույն քանակը՝ հանրագրի քննարկումը պարտադիր դարձնելու համար: Ցանկացած հանրագիր պետք է ուսումնասիրվի և պատասխան ներկայացվի, եթե չկա մերժման պատճառ⁵: Միևնույն ժամանակ Սահմանադրությունը քաղաքացիական նախաձեռնությունների մի շարք հնարավորություններ է սահմանում, ինչպիսիք են.

- ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք⁶,
- ընտրական իրավունք ունեցող առնվազն հարյուր հիսուն հազար քաղաքացի կարող է հանդես գալ սահմանադրական փոփոխությունների նախաձեռնությամբ⁷,
- եթե Ազգային ժողովը մերժում է հիսուն հազար քաղաքացիների կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող⁸:

Այսպիսով, հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային հարթակը կարող է հեշտացնել օրենսդրական նախագծերի համար ստորագրահավաքը կամ հանրաքվեի նախաձեռնությունը: Մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ ստորագրահավաքի են նախաձեռնում հանրագրերի միջազգային հարթակներում (օրինակ, change.org կամ gopetition.com կայքերում): Այս ստորագրահավաքները սովորաբար կազմակերպվում են իրավապաշտպան և բնապահպանական կազմակերպությունների կամ քաղաքական ակտիվիստների կողմից⁹: Նմանատիպ նախաձեռնությունները պետության կողմից կառավարվող հարթակում ներկայացնելու հնարավորությունը՝ համապատասխան պետական մարմինների կողմից պարտադիր պատասխանի պայմանով, կարող է բարելավել քաղաքացիների և պետական մարմինների միջև երկխոսությունը: Բացի այդ, այն կարող է խնդիրների արագ լուծում ապահովել:

Այս հանձնառությունը, ինչպես նաև հանրագրերի մասին օրենքը, հստակ չեն սահմանում, թե արդյոք հանրագրերին միանալու համար քաղաքացիները պետք է էլեկտրոնային ստորագրություն օգտագործեն, թե ոչ: Եթե էլեկտրոնային ստորագրությունները պարտադիր են, ապա դա կսահմանափակի պլատֆորմի օգտագործումը, քանի որ քաղաքացիների գերակշիռ մեծամասնությունը այս ստորագրությունը չունի¹⁰: Էլեկտրոնային ստորագրությունը ստանալու համար օգտվողները պետք է ձեռք բերեն նույնականացման քարտ, այդ քարտն ընթերցող սարք կամ USIM բջջային քարտ և տարեկան վճարեն 3000 դրամ: Էլեկտրոնային ստորագրությունը պարտադիր է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող առցանց ծառայություններից օգտվելու համար, օրինակ՝ հարկային հաշվետվություններ ներկայացնելու և վկայագրեր ստանալու համար:

Հարցազրույցների ընթացքում շահագրգիռ կողմերը հանձնառությունը հիմնականում կարևոր են համարել իմաստավոր հանրային մասնակցության և ուղիղ ժողովրդավարության համար հիմք ստեղծելու տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվում է չափավոր: Հանձնառությունը որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության նոր հնարավորություն է ստեղծում՝ պարտադիր արձագանքի պահանջով, և կարող է խթանել քաղաքացիների կողմից օրենսդրական նախաձեռնությունները ընդհուպ մինչև հանրաքվեի կազմակերպում:

Հետագա քայլերը

Հանձնառությունը կարող է լրացուցիչ գործիքներ տրամադրել հանրային մասնակցության և ուղիղ ժողովրդավարության համար: ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է տալիս հատակեցնել հրապարակային հանրագրերին միանալու համար անհրաժեշտ պայմանները (էլեկտրոնային ստորագրությունն անհրաժեշտ է, թե ոչ): Կառավարությունը կարող է քաղաքացիներին հնարավորություն տալ հանրագրերին միանալ միայն անունը և անձնագրային տվյալները տրամադրելով (որը տեսանելի չի լինի հանրության համար), ինչպես դա արվում է թղթային տարբերակով ստորագրություններ հավաքելու դեպքում: ՔՀԿ ներկայացուցիչներից մեկն առաջարկել է ստորագրությունների համար ողջամիտ շեմ սահմանել, որն անցնելու դեպքում հանրագրում ներկայացված խնդրի վերաբերյալ պարտադիր հանրային քննարկում կկազմակերպվի:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015, <https://www.president.am/en/constitution-2015/>, հոդված 53

³ ՀՀ օրենքը «Հանրագրերի մասին», 21.12.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119042>

⁴ ՀՀ օրենքը «Հանրագրերի մասին», 21.12.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119042>

⁵ Մերժման պատճառները ներառում են հանրագրի կրկնակի ներկայացումը, հանրագրով այնպիսի միջոցառումների իրականացման պահանջը, որոնք սպառնում են սահմանադրական կարգին, ուղղված են ատելություն բորբոքելուն և այլն, կամ եթե հանրագրով ներկայացված պահանջը ենթակա է լուծման դատական կարգով:

⁶ ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015, <https://www.president.am/en/constitution-2015/>, հոդված 109

⁷ Նույն տեղում, հոդված 202

⁸ Նույն տեղում, հոդված 204

⁹ Տե՛ս, օրինակ, «Զվարթոց» օդանավակայանի շենքի պահպանման վերաբերյալ հանրագիրը՝ <https://bit.ly/2ITfjdv>, «Ամուլսարում հանք չի՝ շահագործվելու» հանրագիրը՝ <https://bit.ly/2IXOKnx>

¹⁰ Ըստ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկության, որը Հայաստանում էլեկտրոնային ստորագրություններ տրամադրող լիազորված ընկերությունն է, Հայաստանում էլեկտրոնային ստորագրություն ունի մոտ 100 հազար քաղաքացի («ԷԿԵՆԳ» ՓԲԸ հետ ԱՀՄ հետազոտողի էլեկտրոնային հաղորդակցություն, 06 մարտի 2019), որը կազմում է երկրի բնակչության շուրջ 3 տոկոսը

II. Հանրային ծառայությունների հետադարձ կապ

Հանձնառության ձևակերպումն ըստ գործողությունների ծրագրի՝

Հակիրճ նկարագրությունը

Գործարկել հանրային ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապի առցանց հարթակ, որ թույլ կտա հավաքագրել, տեսակավորել և վերլուծել քաղաքացիների գնահատականները և առաջարկները:

Մշակել մարդակենտրոն և մատչելի հարթակ, որ կխրախուսի քաղաքացիների մասնակցությունը հանրային ծառայությունների մշակման և գնահատման գործընթացում: Միատեղել քանակական և որակական արձագանքի հավաքագրումը:

Գործող առցանց հարթակներից մեկում ինտեգրել/ստեղծել քաղաքացիների գնահատականների հավաքագրման, տեսակավորման և վերլուծության գործիք:

Հանձնառության կատարման չափանիշներ

II.1 Քաղաքացիների համար հանրային կառավարմանը մասնակցային գործընթացի ապահովման, համաստեղծման և քաղաքացիների կողմնորոշված հանրային կառավարման միջազգային օրինակների ուսումնասիրություն

II.2 Քաղաքացիներից ստացած գնահատականների օգտագործման հիման վրա հանրային ծառայությունների մատուցման որակի վերահսկման մեթոդաբանության վերաբերյալ մի շարք բարձր մակարդակի առաջարկներ (ներառյալ պատասխանատու հաստատությունները, հաճախականությունը, մոնիթորինգի հաճախականությունը, արդյունքների հիման վրա կատարողական համակարգը): Ապահովել քաղաքացու դիմումի ընթացքի թափանցիկություն և հսկելիություն (tracking): Ապահովել դիմումների արձագանքի վերահսկողության մեխանիզմ՝ բոլոր ծառայություն մատուցողների նկատմամբ:

II.3 Քաղաքացիների դիմում-բողոքների/գնահատականների հավաքագրման մեխանիզմի մոդելի ստեղծում, որը համատեղելի է գոյություն ունեցող տվյալների լուծումների հետ (e-gov.am, igov):

II.4 Մեխանիզմի գործարկում՝ հանրության ներգրավվմամբ և հանրային իրազեկման արշավ:

Մեկնարկ՝ 2019թ. հունվար

Ավարտ՝ 2020թ. օգոստոս

Հանձնառու- թյունը	Չափելիու- թյունը	Համապատասխա- նությունը ԲԿԳ արժեքներին (ըստ տեքստի)	Պոտենցիալ ազդեցու-թյունը	Կատարման աստիճանը	Բերե՞լ է դա բաց կառավարմանը
----------------------	---------------------	---	-----------------------------	----------------------	--------------------------------

	Մտուցման համար բավականաչափ կրնկրետ չէ	Մտուցման համար բավականաչափ կրնկրետ է	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարություններ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթաքացել է	Զի փոխվել	Մարզինալ	Զգալի	Ակնառու
II. Հանրային ծառայություն- ների հետադարձ կապ		✓		✓		✓		✓			Գնահատվում է գործողություն- ների ծրագրի իրականացման ավարտին:				Գնահատվում է գործողություն-ների ծրագրի իրականացման ավարտին:				

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Հայաստանում բոլոր նախարարություններն ու պետական մարմինների մեծ մասը հետադարձ կապի պատուհան ունեն իրենց կայքում: Այնուամենայնիվ, այդ պատուհանները հազվադեպ են օգտագործվում քաղաքացիների կողմից: Ավելին, հավաքագրված տեղեկությունը համակարգված մշակման չի ենթարկվում, որպեսզի փոխանցվի որոշում կայացնողներին՝ քաղաքականության մշակման ընթացքում հաշվի առնելու համար²:

Այս հանձնառությունը նպատակ ունի գործարկելու հանրային ծառայությունների գնահատման հարթակ, որտեղ հետադարձ կապի պարզեցված գործիքներ կօգտագործվեն: Հարթակում տեղադրված հետադարձ կապի մեխանիզմը քաղաքացիներին կօգնի մատնանշել որոշակի ծառայությունների հետ կապված խնդիրները: Այն կօգնի նաև կառավարությանը առաջարկություններ հավաքագրել հանրային ծառայությունների մատուցման և վարչարարության վերաբերյալ՝ համապատասխան քաղաքականություններն ու ընթացակարգերը բարելավելու համար: Ի տարբերություն պետական կառավարման մարմինների կայքերում գործող պատուհանների և թեժ գծերի, հանրային ծառայությունների հետադարձ կապի առաջարկվող հարթակը թույլ կտա բոլոր հրապարակային արձագանքները հավաքել մեկ տեղում: Հարթակը կառավարությանը որակական և քանակական ցուցանիշներ կտրամադրի: Այս հանձնառության համար պատասխանատու վարչապետի աշխատակազմի ներկայացուցչի խոսքով, քննարկվում է վարչապետի աշխատակազմում հատուկ վերլուծական բաժնի ստեղծման հնարավորությունը: Այս բաժինը կուսումնասիրի և կվերլուծի պետական ծառայությունների վերաբերյալ առկա բոլոր արձագանքները և վերլուծության հիման վրա քաղաքականության առաջարկներ կներկայացնի: Ակնկալվում է, որ տվյալների վերլուծության հիմնական արդյունքները հրապարակված կլինեն նույն հարթակում³:

Հանձնառությունը վերաբերում է քաղաքացիական մասնակցությանը, քանի որ այն կարող է բարելավել առկա ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների կողմից հետադարձ կապ տրամադրելու հնարավորությունները, իսկ արդյունքները կհասնեն որոշում կայացնողներին: Այն կարող է նաև ծառայել որպես հաշվետվողականության գործիք, եթե պատշաճ մշակված մեխանիզմներ լինեն խախտում կատարած գործակալությանը պատասխանատվության ենթարկելու համար:

Ծառայություններից օգտվողների կողմից հետադարձ կապի տրամադրման առաջարկվող գործիքները հանձնառության մեջ հստակ սահմանված չեն: Շահագրգիռ կողմերից մեկի ներկայացուցիչն առաջարկել է, որ հանձնառությունը տարբեր եղանակներ նախատեսի հետադարձ կապը հավաքագրելու համար, օրինակ SMS հարցում, կարծիքի տրամադրում ծառայություն ստանալուց անմիջապես հետո կամ վեբ հարթակի միջոցով⁴: Վարչապետի աշխատակազմի ներկայացուցչի խոսքով, օգտագործողները պետք է նույնականացման քարտով մուտք գործեն համակարգ և կարծիք տրամադրեն: Ընդհանրապես, հարթակի հիմնական թիրախային խումբը կառավարության կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայություններից օգտվողներն են⁵: Նրանք կազմում են բնակչության փոքր հատվածը, սակայն այս ծառայությունների օգտագործման մակարդակը գնալով ավելանում է:

Այս հանձնառությունը կարող է դրական ազդեցություն ունենալ կառավարության գործելակերպի վրա: Չնայած հետադարձ կապի հավաքագրման և ծառայությունների մոնիթորինգի և գնահատման աշխատանքները արդեն իսկ իրականացվում են պետական գերատեսչությունների կողմից, այս հարթակը նոր հնարավորություն կարող է ստեղծել հանրային կարծիքի համակարգված հավաքագրման և վերլուծության համար: Այնուամենայնիվ, հետադարձ կապի տրամադրման եղանակները հանձնառության մեջ հստակ նշված չեն, իսկ ակնկալվող թիրախային լսարանը կարող է սահմանափակվել էլեկտրոնային ծառայություններից օգտվողների շրջանակով: Հետևաբար, հնարավոր ազդեցությունը գնահատվել է փոքր:

Հետագա քայլերը

Հանձնառությունը կարող է միջոց դառնալ ծառայությունների մշակման և մատուցման հարցում հանրության մասնակցությունն ընդլայնելու և բողոքների դեպքում պետական ծառայողներին պատասխանատվության ենթարկելու համար: Հանրային ծառայությունների հետադարձ կապի հարթակի ազդեցությունը բարելավելու համար ԱՀՄ հետազոտողը առաջարկում է.

- Հետադարձ կապի հնարավորություն տալ ոչ միայն էլեկտրոնային, այլ հանրային ծառայությունների ողջ շրջանակի համար՝ թույլ տալով հետադարձ կապ ներկայացնել նաև անանուն եղանակով:
- Հստակ նշել քաղաքացիների հետադարձ կապի եղանակները և մեխանիզմները, դիտարկելով SMS հաղորդագրությունների, ինչպես նաև սոցիալական ցանցերի տարբերակը: (ԲԿԳ աշխատանքային խմբի 2019 թ. հուլիսի հանդիպմանը ԱՀՄ հետազոտողին հայտնի դարձավ, որ կառավարությունը փոխել է իր մոտեցումը և նախատեսում է համակարգում ներառել պետության կողմից մատուցվող տարատեսակ ծառայություններ: Քննարկվել են հետադարձ կապի տրամադրման այլընտրանքային միջոցները, ինչպես, օրինակ, հեռախոսը և էլեկտրոնային փոստը):⁶:
- Հստակ մեխանիզմ մշակել տվյալները հավաքագրելու և վերլուծելու, դրանք քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում օգտագործելու և պետական ծառայողներին պատասխանատվության ենթարկելու համար:
- Սահմանել քաղաքացիներին արձագանքելու մեխանիզմներ՝ տեղեկացնելով նրանց, թե ինչպես են օգտագործվել նրանց մեկնաբանությունները կամ առաջարկությունները: Հրապարակային եղանակով տեղեկացնել խախտումների դեպքում համապատասխան միջոցառումների կիրառման մասին:
- Ստացած հետադարձ կապի ամփոփ նկարագիրը և վիճակագրական տվյալները տրամադրել բաց տվյալների ձևաչափով՝ հետազոտողների և հետաքրքրված անձանց օգտագործման համար:

Քաղաքացիների հետադարձ կապի հավաքագրման հաջողված օրինակ է Ինդոնեզիայում գործող «LAPOR!» հարթակը: Այն քաղաքացիներին հնարավորություն է տալիս հանրային ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել մի շարք եղանակներով, ներառյալ LAPOR! կայքը, SMS հաղորդագրությունները և բջջային հավելվածը: Օգտվողները կարող են գրանցվել համակարգում՝ հասանելիությունը հեշտացնելու համար, բայց առկա է նաև անանուն ռեժիմի հնարավորությունը: Ի տարբերություն այս հանձնառության ծրագրած հարթակի, LAPOR!-ը օգտվողներին հնարավորություն է տալիս գրել հանրային ծառայությունների հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ, օրինակ՝ վնասված ճանապարհների կամ սուբսիդիաների տրամադրման փոփոխությունների և այլն: Ստացված տեղեկություններն անցնում են հավաստիության ստուգման գործընթացով և ուղարկվում պատասխանատու պետական մարմին: Հարցին ընթացք է տրվում և դիմողներին ծանուցում են ձեռնարկված գործողությունների մասին⁷: Այս համակարգը կարող է դժվարություններ ստեղծել բողոքների մեծ ծավալի և դիմումներով զբաղվող գործակալության աշխատանքի ծանրաբեռնվածության առումով: Սակայն այն կարող է ծառայել որպես պետության և քաղաքացիների միջև երկխոսության արդյունավետ գործիք, բարձրացնել հանրային ծառայությունների թափանցիկությունը և արդյունավետությունը և նպաստել պետական մարմինների հաշվետվողականությանը:

¹ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/12/Armenia_Action-Plan_2018-2020_ARM.doc

² Նույն տեղում

³ Լիանա Ղալթադյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 7 մարտի 2019

⁴ Մարինա Մխիթարյան (ՄԱԶԾ Կոլբա լաբ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

⁵ Լիանա Ղալթադյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 7 մարտի 2019

⁶ ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպում, 24 հուլիսի 2019

⁷ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Ինդոնեզիա՝ հանրային ծառայությունների մասին քաղաքացիների հետադարձ կապի հավաքագրում, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Indonesia_0.pdf, Քաղաքացիների ցանկությունների և բողոքների առցանց համակարգը (LAPOR) Ինդոնեզիայում՝ ինչպես երջանկություն պարզնել քաղաքացիներին, Վահյու Մահենդրա, Մեթյա Փրաթիվի և Ռիրին Փրավեսթի, http://blog.lapor.go.id/images/dasar_hukum/WahyuMahendra.pdf

V. Հիմնական առաջարկներ

Այս բաժնի նպատակն է ուղղություն տալ գործողությունների նոր ծրագրի մշակման և գործողությունների ընթացիկ ծրագրի իրագործման գործընթացներին: Այն բաղկացած է երկու մասից՝ 1) ԲԿԳ գործընթացը և գործողությունների ծրագրերը բարելավելու ուղղությամբ ԱՀՄ հիմնական առաջարկները և 2) կառավարության կողմից ԱՀՄ նախորդ զեկույցի առանցքային առաջարկների ներառման ուսումնասիրումը:

5.1 ԱՀՄ առաջարկները

Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը նախորդ ծրագրերի համեմատ ավելի հավակնոտ հանձնառություններ է ներառում: Կառավարության ներկայացուցիչների՝ քաղաքացիական հասարակության պահանջները լսելու պատրաստակամությունը, կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարելավման գործում քաղաքական կամքի դրսևորումը, ինչպես նաև աշխատանքային խմբի անդամների կուտակած փորձը և փորձագիտությունը նպաստեցին երկրի առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված ավելի հավակնոտ հանձնառությունների մշակմանը:

Այնուամենայնիվ, դեռևս աշխատանք կա կատարելու հանձնառությունների հավակնոտության և արդյունավետության բարելավման և քաղաքացիական հասարակության ավելի լայն շրջանակի ներառման ուղղությամբ: Շահագրգիռ կողմերը նշում են, որ գործողությունների ընթացիկ ծրագիրը քաղաքականության կարևոր ոլորտներ է հասցեագրում, սակայն այնքան հավակնոտ չէ, որքան կարող էր լինել՝ հաշվի առնելով իշխանափոխությունը և հետհեղափոխական բարձր ակնկալիքները: Բացի այդ, գործողությունների ներկա ծրագիրը հիմնականում կենտրոնացած է տեղեկատվության մատչելիության ապահովման վրա, մինչդեռ հանրային մասնակցության և կառավարության հաշվետվողականության մեխանիզմների ստեղծումը երկրորդական պլան է մղվել:

ԲԿԳ գործընթացի բարելավման հնարավոր ուղղությունները

Կառավարության փոփոխությունը և հետագա անցումային գործընթացները հնարավորություն են ստեղծել ստանձնելու ավելի հավակնոտ հանձնառություններ և ընդլայնելու մասնակցությունը գործողությունների ծրագրի մշակման գործընթացին:

ՔՀԿ-ների մասնակցությունը գործողությունների պլանի մշակման գործընթացին վճռորոշ էր հանրային իրազեկության բարելավման և հանձնառությունների խորքային քննարկման ապահովման գործում: Մինևույն ժամանակ, քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին և կառավարության թիմին առաջարկվում է բարելավել ջանքերի համակարգումը՝ համատեղ մշակման գործընթացն ավելի ծախսարդյունավետ, ներառական և համակողմանի դարձնելու համար: Ժամանակի սղության պատճառով որոշ առաջարկներ ԲԿԳ արժեքներին համապատասխանող հանձնառություն դարձնելու համար բավարար վերլուծության չեն ենթարկվել: Առաջարկներից մի քանիսն էլ քննարկվել են մի քանի հանդիպումների ընթացքում, բայց դրանց բովանդակության վերաբերյալ վերջնական համաձայնություն այդպես էլ ձեռք չէր բերվել:

Հանրային քննարկման համար

Շահագրգիռ կողմերից շատերը նշում են, որ գործողությունների ծրագրի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու գործընթացը հստակ չէր: Թեև նրանք ընդունում են, որ վերջին խոսքը պատկանում է կառավարությանը, շատերը դժվարանում են բացատրել, թե ինչու որոշակի հանձնառություններ, ի վերջո, ընդգրկվեցին ծրագրում, իսկ մյուսները՝ ոչ: Շահագրգիռ կողմերից մեկն առաջարկել է, որ հանձնառությունների առաջարկները չմերժվեն միայն վատ ձևակերպված լինելու պատճառով: Փոխարենը կարելի է տվյալ գաղափարը վերլուծել և վերածել լավ ձևակերպված հանձնառության: Մեկ այլ առաջարկ էր՝ ավելի երկար ժամանակ (օրինակ, մեկ տարի) տրամադրել ծրագրի մշակմանը՝ առավել համընդգրկուն գործընթաց ապահովելու համար: Այս ժամանակահատվածը կարող է ներառել քաղաքացիների կողմից տարատեսակ հարցեր վեր հանելու, հիմնախնդիրները և դրանց պատճառները խորքային վերլուծության ենթարկելու, հանրային քննարկումներ կազմակերպելու, փորձագետների կողմից գաղափարները վավերացնելու և հանձնառությունները վերջնական տեսքով ձևակերպելու փուլերը:

Ինչպես նշվեց այս զեկույցի III բաժնում ներկայացված առաջարկներում, անհրաժեշտ է մի շարք քայլեր ձեռնարկել, որպեսզի ԲԿԳ գործընթացները համապատասխանեն ԲԿԳ համատեղ մշակման և մասնակցության առաջատար չափորոշիչներին, ներառյալ.

- հստակեցնել ԲԿԳ աշխատանքային խմբի մանդատը և ընտրության գործընթացը՝ ԲԿԳ գործընթացին մասնակցելու հանրային հրավեր ուղղելով բոլոր շահագրգիռ կողմերին,
- գործողությունների ծրագրի քննարկումների և վերջնական մշակման ընթացքում ավելի համակարգված մոտեցում կիրառել. օրինակ՝ կազմակերպել նախնական գտում և քննարկում հեղինակների հետ, խմբավորել առաջարկներն ըստ թեմաների և առանձին թեմաների վերաբերյալ փորձագիտական քննարկումներ իրականացնել, սահմանել վերջնական ընտրության սկզբունքները,
- իրազեկման միջոցառումներ իրականացնել ավելի մեծ լսարանի համար ոչ միայն մշակման, այլև իրականացման փուլում,
- ԲԿԳ մասին պրոակտիվ տեղեկատվություն հրապարակել և ժամանակին արձագանքել շահագրգիռ կողմերի առաջարկներին՝ մերժման դեպքում յուրաքանչյուր առաջարկի համար առանձին բացատրություն տրամադրելով,
- ավելի շատ աշխատակիցներ ընդգրկել ԲԿԳ աշխատանքային թիմում, որոնք կիրականացնեն ԲԿԳ հետ կապված բոլոր գործառնությունները, օրինակ՝ արտաքին հաղորդակցությունը, մոնիթորինգը և հաշվետվությունների կազմումը, գործընթացի ընդհանուր համակարգումը,
- աշխատանքային խմբում ընդգրկել որոշումներ կայացնելու և կամ համակարգման ավելի մեծ լիազորություններ ունեցող պաշտոնյաների և ապահովել խորհրդարանի, մասնավոր հատվածի և ՋԼՄ-ների մասնակցությունը:

Հանրային քննարկման համար

Հետագայի համար կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի իրականացման գործընթացի ընթացքում հանձնառությունների լիարժեք կատարման և ավելի լայն հանրային մասնակցության ուղղությամբ:

- Հանրային մասնակցության և տեսանելիության առումով ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ակտիվորեն տեղեկատվություն տարածել յուրաքանչյուր հանձնառության ընթացքի վերաբերյալ՝ կազմակերպելով մամուլի ասուլիսներ, բաց քննարկումներ, օրինակ՝ յուրաքանչյուր կիսամյակ: Սա կապահովի գործողությունների ծրագրի իրականացման տեսանելիությունն ու ընթացիկ հաշվետվողականությունը և կընձեռի հանրային կարծիքի հավաքագրման հնարավորություն: Հայաստանի գործողությունների նախորդ ծրագրերի փորձի հիման վրա կարելի է ասել, որ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը իրականացման փուլում (բրիֆինգների, քննարկումների, հարթակների փորձարկումների միջոցով) շատ կարևոր է քաղաքացիական հասարակության սեփականության զգացումն ապահովելու և հանձնառություններն առավելագույնս արդյունավետ իրականացնելու համար:
- Հանձնառությունների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է, որ կառավարության ԲԿԳ աշխատանքային թիմը և աշխատանքային խումբը աշխատանքների իրականացման ավելի սերտ մշտադիտարկում իրականացնեն: Հանձնառությունը սահմանելիս պետք է անհրաժեշտ ֆինանսական ու մարդկային ռեսուրսներ ապահովել և իրատեսական ժամկետներ նախատեսել չափորոշիչների իրականացման համար: ԲԿԳ ծրագրի շրջանակներում ձեռքբերումների կայունությունը մտահոգության ևս մեկ խնդիր է, որի մասին նշվել է նաև նախորդ առաջընթացի զեկույցում: Անհրաժեշտ է ապահովել ստեղծված հարթակների գործառնությունն ու կիրառելիությունը՝ միջոցներ նախատեսելով դրանց պահպանման ու կառավարման համար և իրականացնելով իրազեկման միջոցառումներ: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է իրականացնել ԲԿԳ գործողությունների նախորդ ծրագրերի հանձնառությունների և ազդեցության գնահատում՝ իրական ազդեցությունն ու բացթողումները հասկանալու և քաղած դասերից օգտվելու նպատակով: Գնահատման արդյունքների հրապարակայնությունը կբարելավի ԲԿԳ նախաձեռնության տեսանելիությունը և հանրային վստահությունը դրա արդյունավետության նկատմամբ:

Քաղաքացիական մասնակցությանը և հանրային հաշվետվողականությանը վերաբերող ավելի շատ հանձնառություններ

2018 թ. գարնանը տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները հանրության շրջանում մեծ հետաքրքրություն ու մոտիվացիա առաջացրին երկրի քաղաքական կյանքին և քաղաքականությունների մշակմանը մասնակցելու նկատմամբ: Ըստ այդմ, գործողությունների հետագա ծրագրերը կարող են ավելի շատ կենտրոնանալ մասնակցության մեխանիզմների ընդլայնման և մասնակցության առկա գործիքների կատարելագործման վրա:

Հանրային քննարկման համար

Մասնավորապես, շահագրգիռ կողմերը շեշտել են մասնակցության անցանց գործիքների կարևորությունը, որոնք չպետք է լիովին փոխարինվեն առցանց գործիքներով: Իրավական նախագծերի միասնական էլեկտրոնային հարթակը ծառայում է որպես նոր իրավական նախագծերի վերաբերյալ իրազեկման և մեկնաբանությունների ու առաջարկությունների ներկայացման արդյունավետ գործիք՝ պետական մարմինների արձագանքման պարտադիր պահանջով: Այնուամենայնիվ, հարթակում նախագծի տեղադրումը պետական մարմինների կողմից հաճախ դիտարկվում է որպես պարտադիր հանրային քննարկման իրականացում՝ անկախ քննարկման ծավալից և առաջարկների ներառումից: ՔՀԿ-ները նշում են, որ առաջարկությունների ներկայացման գործընթացը երբեմն ձևական է լինում³: Այսինքն՝ հանրության կամ կոնկրետ սոցիալական խմբերի համար կարևոր նշանակություն ունեցող իրավական նախագծերի դեպքում անհրաժեշտ է ավելի հաճար կենդանի քննարկումներ կազմակերպել՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ:

2016 թ. կառավարության որոշմանը հետևելով՝ նախարարություններից շատերը ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությամբ հասարակական խորհուրդներ են ստեղծել⁴ (այս հանձնառությունը ներառված էր գործողությունների երկրորդ ծրագրում): Ըստ ՔՀԿ-ների զեկույցների՝ խորհուրդների ավելի արդյունավետ և թափանցիկ գործունեության համար մի շարք բարելավումներ են անհրաժեշտ: Այդ բարելավումները ներառում են ընտրության արդար և թափանցիկ մեխանիզմները, խորհրդի նիստերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկությունների շարունակական հրապարակումը, մասնակից ՔՀԿ-ներին քննարկվող փաստաթղթերի նախապես տրամադրումը⁵:

Միևնույն ժամանակ, առանձին քաղաքականություններ և նախագծեր մշակելիս պետական մարմինները պետք է լայն հանրային քննարկումներ հրավիրեն՝ առնչվող սոցիալական խմբերին և լայն հանրությանը մասնակցության հնարավորություն ընձեռելու համար:

Որոշ շահագրգիռ կողմեր մտահոգված են, որ պետական պաշտոնյաները դրսևորում են հանրային քննարկումների վերաբերյալ իրավական դրույթները շարունակաբար անտեսելու և առանց շահագրգիռ կողմերի հետ պատշաճ քննարկման որոշումներ կայացնելու գործելակերպ: Իրավական դրույթների խախտման մասին է նշվում նաև տեղեկատվության ազատության ոլորտում: Այստեղ բացեր են նկատվել պաշտոնական կայքերում տեղեկատվության ընթացիկ հրապարակման և հարցումների պատասխանները ժամանակին տրամադրելու առումով: ՔՀԿ-ները նշում են, որ այդ բացերի պատճառներից մեկը նորանշանակ պաշտոնյաների անբավարար գիտելիքն ու փորձն է: Հետևաբար՝ անհրաժեշտ է իրականացնել հանրային մասնակցության և տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնյաների իրազեկման և վերապատրաստման համապատասխան միջոցառումներ : Կառավարությունը պետք է նաև ընդգծի, որ թափանցիկությունն ու մասնակցությունը գերակա են:

Գործող օրենսդրության համաձայն՝ խորհրդարանական լսումները պարտադիր չեն օրենսդրական նախագծերի քննարկման համար և կազմակերպվում են հայեցողական հիմունքներով⁶: Խորհրդարանական հանձնաժողովները կարող են աշխատանքային խմբեր ստեղծել առանձին օրինագծերի շուրջ՝ ներգրավելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, սակայն այս

Հանրային քննարկման համար

գործընթացը հայեցողական է: Հետևաբար, անհրաժեշտ է ավելի շատ մեխանիզմներ և գործիքներ ներդնել խորհրդարանում քաղաքացիական մասնակցության խթանման համար: Օրինակ, խորհրդարանական հանձնաժողովները կարող են համագործակցային կապեր հաստատել քաղաքականության տվյալ ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների հետ և կանոնավոր հիմքով հանդիպումներ կազմակերպել շահագրգիռ կողմերի հետ: Անցյալում խորհրդարանում մի քանի անգամ «քաղաքացիական հասարակության օր» է նախաձեռնվել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Այս միջոցառումը խորհրդարան-քաղաքացիական հասարակություն երկխոսության գործիք է հանդիսացել և հետագա համագործակցության հիմք ստեղծել: Այս փորձը կարելի է ներառել խորհրդարանական կանոնակարգերում՝ որպես մասնակցության գործիքներից մեկը:

Քաղաքականության մշակման հետ մեկտեղ, ՔՀԿ-ների մասնակցությունը պետական քաղաքականությունների մոնիթորինգի և գնահատման գործընթացում ուշադրություն պահանջող ևս մեկ ոլորտ է: Հայաստանում գործող ՔՀԿ-ներից շատերը մոնիթորինգի և գնահատման բավարար փորձ ունեն, և նրանց ռեսուրսները կարող են օգտագործվել քաղաքականության ավելի արդյունավետ և նպատակային մոնիթորինգի նպատակով: Կառավարությունը կարող է պարբերաբար ՔՀԿ-ների հետ բաց հանդիպումներ կազմակերպել՝ լրատվամիջոցների ներկայությամբ: Այս հանդիպումներին պետական մարմինները կներկայացնեն իրենց աշխատանքի արդյունքներն ու համապատասխան արձագանքներ և առաջարկություններ կհավաքագրեն քաղաքացիական հասարակությունից:

ԲԿԳ-ում հաշվետվողականության հասկացությունը վերաբերում է «այն կանոններին, կանոնակարգերին և մեխանիզմներին, որոնք ուղղված են կառավարության դերակատարների կողմից իրենց գործողությունները բացատրելուն, քննադատությանը կամ առաջադրված պահանջներին արձագանքելուն և օրենքների կամ հանձնառությունների չկատարման դեպքում պատասխանատվություն կրելուն»⁸: Այնուամենայնիվ, հայերենում «հաշվետվողականություն» (accountability) բառը հաճախ մեկնաբանվում է որպես «հաշվետվության ներկայացում»: Օրինակ, կառավարության կամ պաշտոնատար անձանց կողմից հաշվետվությունների հրապարակումը մեկնաբանվում է որպես հաշվետվողականության բարելավում, սակայն նման գործողությունները հանրության կողմից պետությանը հաշվետու դարձնելու մեխանիզմներ չեն ներառում:

Պաշտոնյաների և պետական կառույցների հաշվետվողականությունը, մասնավորապես՝ պետական պաշտոնյաների կողմից չարաշահումների բացահայտումը, շարունակում է արդիական թեմա մնալ: Թափանցիկության բարելավման, նոր տեխնոլոգիաների և սոցիալական լրատվամիջոցների տարածման շնորհիվ պաշտոնական հետաքննությունների վերաբերյալ տեղեկությունը արագ տարածվում է հանրության շրջանում: Սակայն հարկավոր է ավելի տեսանելի դարձնել պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ինստիտուցիոնալ մեխանիզմները: Նախորդ տարվա ընթացքում մի շարք գործեր են հարուցվել նախկին պաշտոնյաների պատասխանատվության ենթարկելու համար, սակայն կիրառվող սկզբունքներն ու չափանիշները միշտ չէ,

Հանրային քննարկման համար

որ պարզ են: Երբեմն առկա է հանրային ընկալում, որ այդ գործերի հիմքում ընտրովի մոտեցում և (կամ) քաղաքական դրդապատճառներ կան: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է գործողությունների հետագա ծրագրերում հաշվետվողականության վերաբերյալ ավելի շատ հանձնառություններ ներառել: Դրանք կարող են ներառել, օրինակ, պատասխանատվության ենթարկված պաշտոնյաների նկատմամբ կիրառված պատժամիջոցների և պետական հիմնարկների աշխատանքի բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև դրանց հիմնավորումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը:

Այլ առաջարկներ գործողությունների հաջորդ ծրագրի թեմաների վերաբերյալ

Հաշվի առնելով շահագրգիռ կողմերի առաջարկություններն ու ՔՀԿ զեկույցներում բարձրացված հարցերը՝ ԱՀՄ հետազոտողը մի շարք միջոցառումներ է առաջարկում գործողությունների հետագա ծրագրերում ներառելու համար:

- Տեղեկատվության մատչելիության հետագա բարելավման համար առաջարկվում է գույքագրել կառավարության կողմից տրամադրված տեղեկատվության բաց աղբյուրները և հարթակները՝ օգտագործողների համար հարմար մի վայրում: Դա քաղաքացիներին հնարավորություն կտա հեշտությամբ ստանալ անհրաժեշտ տեղեկությունը: Վերջին տարիներին ստեղծվել են բազմաթիվ կայքեր, հարթակներ, բաց տվյալների ռեսուրսներ, սակայն դրանց վերաբերյալ իրազեկության և առկա ռեսուրսների օգտագործման մակարդակը դեռևս ցածր է: Թեև յուրաքանչյուր նախարարություն կամ պետական մարմին իր էջում բաներներ է տեղադրում, առկա ռեսուրսների վերաբերյալ համապարփակ և համակարգված տեղեկություններ չկան: Հետևապես դժվար է լինում անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել՝ առանց մի քանի կայքեր ուսումնասիրելու:
- Քաղաքացիական հասարակության զարգացման ոլորտում կարելի է միջոցներ ձեռնարկել ՔՀԿ-ների իրավական դաշտը բարելավելու համար: Մասնավորապես, գործող օրենսդրությամբ ՔՀԿ-ներին նվիրաբերելու համար բավարար հարկային արտոնություններ և խթաններ չեն սահմանված: Հնարավոր հանձնառությունները կարող են ուղղված լինել ՔՀԿ-ների ֆինանսական կայունության զարգացմանը՝ ընկերությունների և հանրության նվիրատվությունների համար խթաններ սահմանելու միջոցով, օրինակ, ներդնելով Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում կիրառվող մեխանիզմներ, երբ անհատները կարող են իրենց եկամտահարկի մեկ կամ երկու տոկոսը նվիրաբերել որևէ ՔՀԿ-ի: ՔՀԿ-ների կողմից հաճախ բարձրաձայնվող հարցերից է նաև քաղաքացիական հասարակության կողմից հանրային շահերը դատարանում ներկայացնելու հնարավորության բացակայությունը: Նրանք ցանկանում են դատարանում ներկայանալ ոչ միայն բնապահպանական գործերով (ինչպես նախատեսված է գործող օրենսդրությամբ), այլև իրենց գործունեության ոլորտում հանրային շահերի հետ կապված ցանկացած հարցով¹⁰:
- Հաշվի առնելով Հայաստանի դատական համակարգում առկա խնդիրները, որոնք նկարագրված են այս զեկույցի II բաժնում, ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ներառել դատական համակարգում թափանցիկության և

հաշվետվողականության բարելավմանն ուղղված հանձնառությունները: Այդ հանձնառությունները կարող են ուղղված լինել դատական խորհուրդների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության հնարավորությանը, ինչպես նաև դատավորների նշանակման և գործերի բաշխման թափանցիկության բարելավմանը: Հնարավոր այլ հանձնառություններ կարող են լինել դատավորների նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին տեղեկատվության հրապարակումը, դատական բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման արդյունքների հրապարակումը կամ դատավորների անարատության բարելավմանն ուղղված այլ գործողություններ, ինչպես նաև դատախազության նկատմամբ վստահության բարելավմանն ուղղված միջոցառումներ¹¹:

- ՔՀԿ-ների առաջարկներից է ստեղծել տեղեկատվության հարցումների մերժման դեպքերն ուսումնասիրող արտադատական մեխանիզմ¹²: Պետական մարմինների կողմից իրավական դրույթներին համապատասխան կերպով տեղեկատվություն չտրամադրելու դեպքում, ըստ օրենքի, կարելի է դատական հայց ներկայացնել: Սակայն ՔՀԿ-ները նշում են, որ դատական գործընթացը արդյունավետ չէ, քանի որ այն ժամանակատար է և ծախսատար: Դատավճիռը կարող է հրապարակվել մի քանի տարի հետո (սովորաբար հոգուտ հայցորդի), երբ վիճարկվող տեղեկատվությունը կարող է արդեն հնացած լինել¹³:
- Հակակոռուպցիոն գործողությունների շարքում կարևոր խնդիր է գողացված ակտիվների վերականգնումը՝ հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների բացահայտելու և հետաքննելու կառավարության ցանկությունը: Նման հանձնառություն էր առաջարկվել շահագրգիռ կողմերի ներկայացուցչի կողմից: Սակայն այն չընդգրկվեց գործողությունների ծրագրում, քանի որ կառավարության կարծիքով՝ այն պետք է ներառվի հակակոռուպցիոն ռազմավարության մեջ¹⁴:
- 2016-2018 թթ. ԱՀՄ առաջընթացի զեկույցում ընդգրկված և հետաքննող լրագրողների կողմից նորից ներկայացված մեկ այլ առաջարկություն է www.e-register.am կայքում տեղակայված՝ պետական ռեգիստրի տվյալների բազայի տեղեկությունների մատչելիությունը: Օրենքի համաձայն, այս կայքում անվճար կարելի է դիտել ցանկացած իրավաբանական անձի վերաբերյալ հիմնական տեղեկությունները: Այդ տեղեկությունները ներառում են կազմակերպության անունը և իրավական կարգավիճակը, գրանցման ամսաթիվը և համարը, հիմնադիրների անունները¹⁵: Սակայն բաժնետիրական ընկերությունների և հասարակական կազմակերպությունների հիմնադիրների մասին տեղեկությունը հասանելի չէ: Որևէ կազմակերպության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն (ներառյալ հիմնադիրների և ընթացիկ բաժնետերերի մասին տեղեկությունները, կանոնադրության փոփոխությունները և այլն) ստանալու համար անհրաժեշտ է հարցում ուղարկել պետական ռեգիստրին՝ յուրաքանչյուր տեղեկության համար պետական տուրք (3000 ՀՀ դրամ) վճարելով¹⁶: Պետական ռեգիստրի տեղեկատվության մատչելիության ապահովումը կարող է փոխակերպող ազդեցություն ունենալ լրագրողական և

Հանրային քննարկման համար

ՔՀԿ-ի հետաքննությունների համար, այդ թվում՝ իրական սեփականատերերի ստուգման տեսանկյունից:

- Կարելի է ընդլայնել իրական սեփականատերերի տվյալների հրապարակման հանձնառությունը՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահանջը տարածելով ընկերությունների ավելի լայն շրջանակի վրա: Հանձնառությունը կարող է ուղղված լինել նաև ներկայացված տեղեկատվության մոնիթորինգի և ստուգման մեխանիզմների ապահովմանը: Մասնավորապես, շահագրգիռ կողմերն առաջարկում են լրատվական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումը՝ որպես լրատվական ոլորտի թափանցիկության բարձրացման անհրաժեշտ միջոց:
- Գործողությունների ծրագրի մշակման փուլում իրականացված մարզային հանդիպումների ընթացքում շահագրգիռ կողմերը հաճախ բարձրաձայնում էին կրթական և առողջապահական բարեփոխումների կարիքի մասին¹⁷: Կրթության ոլորտում կան մի շարք խնդիրներ, որոնք առանձնացվել են ՔՀԿ-ների կողմից և արտացոլված են պետական ռազմավարություններում, օրինակ՝
 - միջնակարգ կրթության որակի բարելավում և ներառական կրթության համար անհրաժեշտ պայմանների ապահովում,
 - արդի ուսուցման մեթոդների ինտեգրում ուսուցիչների կարիքների գնահատման վրա հիմնված վերապատրաստման միջոցով,
 - դասագրքերի վերանայում և դասագրքերի ընտրության թափանցիկության բարելավում,
 - մասնագիտական կրթության համադրում աշխատաշուկայի պահանջների հետ,
 - բուհերի շրջանավարտների օժանդակում զբաղվածության հարցում և այլն¹⁸:

Ինչ վերաբերում է առողջապահության առաջնահերթություններին, ապա ինչպես նշված է IV բաժնի 9-րդ հանձնառության վերաբերյալ տեքստում, առաջարկվում է մշակել առողջապահության որակի մոնիթորինգի հստակ և թափանցիկ ընթացակարգեր, հրապարակել առողջապահության ոլորտի մոնիթորինգի արդյունքները, տեղեկատվություն տրամադրել պետության կողմից տրամադրվող դեղամիջոցների և դրանց բաշխման մասին, ապահովել դեղամիջոցների և բժշկական ծառայությունների գնագոյացման թափանցիկությունը:

Աղյուսակ 5.1: Հինգ առանցքային առաջարկ

I	Բարելավել բազմաշահառու աշխատանքային խմբի արդյունավետությունը. • մշակել աշխատանքային խմբի գրավոր ընթացակարգ, որը կկանոնակարգի խմբի կազմը և կապահովի քաղաքացիական
---	--

Հանրային քննարկման համար

	հասարակության ներկայացուցիչների արդար և թափանցիկ ընտրություն, • որպես պետական մարմինների ներկայացուցիչ ներգրավել համապատասխան որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող անձանց, • ԲԿԳ գործընթացներում խորհրդարանի մասնակցությունն ապահովելու նպատակով աշխատանքային խմբում ներառել խորհրդարանի ներկայացուցիչներին:
2	Բարելավել ծրագրի համատեղ մշակման գործընթացը՝ հանձնառությունների համար առաջարկների հավաքագրման, գտման, վերլուծության և ձևակերպման մեթոդներ մշակելով և հանրությանը հստակ հիմնավորումներ ներկայացնելով առաջարկված հանձնառությունների ներառման կամ մերժման վերաբերյալ:
3	Շարունակել ջանքեր գործադրել ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ընդլայնման, ինչպես նաև իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների մոնիթորինգի և ստուգման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:
4	Դատական համակարգում թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանն ուղղված հանձնառություններ նախատեսել, օրինակ՝ դատական բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման արդյունքների հրապարակում, դատավորների նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում, դատական խորհուրդների թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդում և այլն:
5	Շարունակել ջանքերը կրթության և առողջապահության ոլորտներում տեղեկատվության մատչելիության, հանրային կարծիքի հավաքագրման և մոնիթորինգի մեխանիզմների բարելավման ուղղությամբ:

5.2 ԱՀՄ նախորդ զեկույցի առաջարկների ներառումը

Աղյուսակ 5.2: ԱՀՄ նախորդ զեկույցի առանցքային առաջարկները

Առաջարկ	Արձագանք է տրամադրվել	Ներառվել է գործողությունների հաջորդ ծրագրում
ԲԿԳ նախաձեռնության և, մասնավորապես, գործողությունների ծրագիրը մշակելու, ինչպես նաև ձեռք բերված արդյունքների մասին իրազեկելու համար ավելի շատ ռեսուրսներ նախատեսել և օգտագործել լայն լսարան ունեցող հաղորդակցության միջոցներ, այդ	×	✓

Հանրային քննարկման համար

	թվում՝ սոցիալական գովազդ և հաղորդակցման այլ գործիքներ:		
2	Համագործակցել խորհրդարանի հետ՝ ընդգրկելով տեղեկատվության մատչելիության, հանրության առջև հաշվետվողականության և հանրային մասնակցության վերաբերյալ ավելի հավակնոտ հանձնառություններ, որոնք կարող են պահանջել օրենսդրական փոփոխություններ:	×	✓
3	Ընդլայնել բյուջեին վերաբերող հանձնառությունների շրջանակները՝ ուշադրություն դարձնելով պետական ծախսերի թափանցիկության և բյուջեի մշակման գործընթացում հանրության մասնակցության խնդիրներին: Գործադիր մարմինների կողմից պետական դրամաշնորհների և ծառայությունների պայմանագրերի տրամադրման մրցութային և թափանցիկ մեխանիզմների ստեղծումը նման հանձնառություններից մեկը կարող է լինել:	×	✓
4	Ընդգրկել հակակոռուպցիոն խնդիրներին ուղղված ավելի հավակնոտ հանձնառություններ, օրինակ, ընկերությունների հիմնադիրների և ներկայիս բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում:	×	✓
5	Հանձնառությունների իրական ազդեցության և բացերն ի հայտ բերելու նպատակով իրականացնել կատարված հանձնառությունների արդյունքների գնահատում և ազդեցության ուսումնասիրում՝ ստացած տեղեկություններն օգտագործելով կառավարության և քաղաքացիական հասարակության հետագա գործունեության ընթացքում, այդ թվում՝ գործողությունների հետագա ծրագրերի միջոցով:	×	×

Հանրային քննարկման համար

Գործողությունների չորրորդ ծրագրում կառավարությունը ներառել է ԱՀՄ 2016-2018 առաջընթացի զեկույցի հինգ առանցքային առաջարկներից չորսը: Այս զեկույցը գրելու պահի դրությամբ ինքնագնահատման հաշվետվություն չի ներկայացվել:

Գործողությունների չորրորդ ծրագրի մշակումը ներառում էր շահագրգիռ կողմերի լայն շրջանակի իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ մարզային բնակչության, պետական ծառայողների, լրագրողների և ուսանողների շրջանում: Սակայն գործողությունների երրորդ ծրագրի իրականացման վերաբերյալ իրազեկման միջոցառումները փոքրաթիվ էին և ընդգրկել են միայն համացանցային միջոցները: 2018 թվականի դեկտեմբերին Հայաստանի ԲԿԳ գործընթացի վերաբերյալ պատրաստվել է տեսահոլովակ: Այն ներկայացնում է ԲԿԳ գաղափարն ու արժեքները և քաղաքացիական մասնակցության, թափանցիկության և հաշվետվողականության բարելավման համար ընձեռնված հնարավորությունները¹⁹: Սակայն 2019 թվականի մարտի սկզբի դրությամբ տեսանյութը YouTube-ում ընդամենը 12 դիտում ուներ և մեկ կամ երկու անգամ հեռարձակվել էր հեռուստաալիքներից մեկով²⁰: ԲԿԳ գործընթացների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված ջանքերը, մասնավորապես իրականացման փուլում, անբավարար են և հետագա ուշադրության կարիք ունեն:

Երկրորդ առանցքային առաջարկի հետ կապված կարելի է ասել, որ գործողությունների չորրորդ ծրագրում ավելի հավակնոտ հանձնառություններ են ընդգրկվել՝ ներառելով օրենսդրական նախաձեռնություններ, ի տարբերություն գործողությունների նախորդ ծրագրի, որտեղ օրենսդրական փոփոխություններ չեն նախատեսվել: Կառավարության կոնտակտային անձի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ աշխատանքային խմբի նոր կազմի մեջ նախատեսվում է ներգրավել խորհրդարանի ներկայացուցիչ²¹:

Ինչ վերաբերում է երրորդ առանցքային առաջարկին (բյուջեի և ծախսերի թափանցիկության վերաբերյալ հանձնառությունների ստանձնում)՝ գործողությունների չորրորդ ծրագիրը ներառում է պետական բյուջեի դրամաշնորհների մրցութային մեխանիզմի ներդրում, ինչպես նաև առողջապահական հաստատություններում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության համար սահմանված բյուջեին հետևելու հնարավորություն:

Հետևելով չորրորդ առանցքային առաջարկին՝ գործողությունների ընթացիկ ծրագրում ընդգրկվել են հակակոռուպցիոն խնդիրներին ուղղված ավելի հավակնոտ հանձնառություններ: Դրանք են՝ պետական պաշտոնյաների կողմից հայտարարագրերի տեղեկությունների շրջանակի ընդլայնման 1-ին հանձնառությունը և իրական սեփականատերերի բաց ռեգիստր ստեղծելու 3-րդ հանձնառությունը:

Հինգերորդ առաջարկը գործողությունների չորրորդ ծրագրի մշակման ընթացքում չի քննարկվել: Կառավարության կոնտակտային անձի խոսքով՝ ԲԿԳ աշխատանքային թիմի մարդկային ռեսուրսները փոքրաթիվ են, իսկ ազդեցության գնահատումը զգալի ժամանակ և մասնագիտական աշխատանք է պահանջում²²: Ինչպես և նախորդ առաջընթացի զեկույցում էր, շահագրգիռ կողմերն այս անգամ էլ շեշտեցին հանձնառությունների իրականացման և ազդեցության գնահատման կարևորությունը: Նրանք ընդգծեցին նաև գործողությունների նախորդ ծրագրերում

Հանրային քննարկման համար

ստանձնած հանձնառությունների կատարման ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ դրանց արդյունավետությունը գնահատելու, բացթողումները բացահայտելու և հանրությանը համապատասխան տեղեկություններ և նորություններ ներկայացնելու համար:

¹ Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 24 հունվարի 2019

² Մարինա Մխիթարյան (ՄԱԶԾ Կոլբա լաբ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

³ ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻԶԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈ-ilovepdf-compressed.pdf>; Քաղաքացիական հասարակության նկատառումները դատական և քրեական օրենսգրքերի նախագծերի վերաբերյալ, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, 18.01.2018, <http://www.osf.am/2018/01/civil-society-remarks-on-the-draft-judicial-and-criminal-codes/?lang=am>

⁴ ՀՀ կառավարության N 337-Ն որոշումը ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>

⁵ Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի զեկույց, ՀԿ կենտրոն, Արագա ՀԿ, 2017, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/07/Հայաստանում-քաղաքականության-մշակման-միասնական-կառավարման-մոդելի-մոնիթորինգի-զեկույց.pdf>; ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻԶԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈ-ilovepdf-compressed.pdf>;

⁶ Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքը, 16.12.2016, հոդված 125, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119557>

⁷ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օր ՀՀ Ազգային ժողովում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 25.02.2014, [http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=6435&year=%7B\\$Year%7D&month=%7B\\$Month%7D&day=%7B\\$Day%7D&lang=arm&enc=utf8](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=6435&year=%7B$Year%7D&month=%7B$Month%7D&day=%7B$Day%7D&lang=arm&enc=utf8); ՀՀ Ազգային ժողովի նախաձեռնությամբ կիրականացվի «Քաղաքացիական հասարակության օրը ՀՀ Ազգային ժողովում» միջոցառումը՝ ի նպաստ առավել մասնակցային օրենսդրական գործընթացի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 10.06.2015, http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=10&month=06&year=2015&NewsID=7611&lang=arm&enc=utf8

⁸ ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ, ԲԿԳ, <https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual>

⁹ Տոկուսի հատկացման մասին օրենքներ, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, http://ecnl.org/category/percentage-laws/?post_type=publications

¹⁰ ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻԶԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈ-ilovepdf-compressed.pdf>; Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգը (ճանապարհային քարտեզ), Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2018 թ. դեկտեմբեր, <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/ArmRefConcept-9.12.2018.pdf>

¹¹ Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը ՀՀ-ում դատական իշխանության անկախության հաստատման վրա, Հասմիկ Հարությունյան, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 2018, <http://prwb.am/new/hy/2019/01/25/հետազոտություն-դատական-և-իրավական-ը>; Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգը (ճանապարհային քարտեզ), Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2018 թ. դեկտեմբեր, <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/ArmRefConcept-9.12.2018.pdf>

¹² Շուշան Դոյդոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 28 փետրվարի 2019

¹³ ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻՋԱՎԱՅՐԻ-ԱԶԳԱՅԻՆ-ՈՒՍՈ-ilo.pdf-compressed.pdf>

¹⁴ Մարիամ Զադոյան և Սյուզաննա Սողոմոնյան (Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 22 փետրվարի 2019

¹⁵ ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 61, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110864>

¹⁶ ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127240>

¹⁷ Անի Հարությունյան (Արմավիրի զարգացման կենտրոն), հեռախոսային հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 17 մայիսի 2019

¹⁸ Դպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում, հետազոտական ուսումնասիրություն, Թրփանճեան Հասարակական Հետազոտությունների Կենտրոն, Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Երևան, 2012, http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Access-to-School-Education-Report_Armenian.pdf; Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը առաջարկում է, <https://www.facebook.com/krtakan2017/posts/1253567038125098>;

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, https://www.arlis.am/Annexes/4/PT23.1_14page1-216.doc

¹⁹ ԲԿԳ Հայաստան տեսահոլովակ, ogp.am, 24.12.2019, http://ogp.am/en/news/item/2018/12/24/video_OGP/

²⁰ Լիանա Դոյդոյան (Ինֆորմացիայի ազատության կենտրոն), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 18 փետրվարի 2019

²¹ Լիլիա Աֆրիկյան (ՀՀ վարչապետի աշխատակազմ), հարցազրույց ԱՀՄ հետազոտողի հետ, 13 փետրվարի 2019

²² Նույնը

VI. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները

ԱՀՄ զեկույցները մշակվում են ԲԿԳ մասնակից յուրաքանչյուր երկրի կամ աշխարհագրական միավորի համապատասխան հետազոտողների կողմից: ԱՀՄ բոլոր զեկույցները որակի վերահսկման գործընթաց են անցնում՝ երաշխավորելու համար, որ պահպանվել են հետազոտական բոլոր ստանդարտները և հետազոտության ընթացքում ցուցաբերվել է պատշաճ մոտեցում:

ԲԿԳ գործողությունների ծրագրի առաջընթացի վերլուծությունը համադրում է հարցազրույցներից, առկա տեղեկատվության ուսումնասիրությունից, դիտարկումից և հասարակական կազմակերպությունների հետադարձ կապից ստացած տվյալները: ԱՀՄ զեկույցը հիմնվում է Հայաստանի ԲԿԳ շտեմարանի (կամ առցանց հղումների)¹, կայքի, կառավարության ինքնագնահատման զեկույցների և քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների մշակած զանազան այլ գնահատականների վրա:

Իրողությունները ճշգրիտ ներկայացնելու նպատակով ԱՀՄ հետազոտողները հարցազրույցներ են իրականացնում շահագրգիռ կողմերի հետ: Ֆինանսական սահմանափակումների և ժամանակի սղության պատճառով ԱՀՄ-ն չի կարող խորհրդակցել բոլոր շահագրգիռ կողմերի և ներգրավված անձանց հետ: Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում պահպանել տեղեկություն տրամադրող անձի անանունությունը, և ԱՀՄ-ն իրեն իրավունք է վերապահում չբացահայտել այդ անձանց տվյալները: Մեթոդաբանության անհրաժեշտ սահմանափակումներից ելնելով՝ ԱՀՄ-ն խրախուսում է զեկույցների նախագծերի վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացումը՝ նախքան հրապարակումը հատկացված ժամանակահատվածում:

Յուրաքանչյուր զեկույց որակի վերահսկման գործընթաց է անցնում, որը ներառում է ԱՀՄ աշխատակազմի և ԱՀՄ փորձագետների միջազգային խմբի (ՓՄԽ) կողմից վերանայում: Յուրաքանչյուր զեկույց անցնում է նաև արտաքին վերանայման փուլով, որի ընթացքում կառավարությանը և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հրավիրում են մեկնաբանություններ ներկայացնել ԱՀՄ զեկույցի նախագծի բովանդակության վերաբերյալ:

Վերանայման այս գործընթացը, ինչպես նաև ստացած մեկնաբանությունները ներառելու կարգը մանրամասն նկարագրված են ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկի երրորդ բաժնում²:

Հարցազրույցներ և շահագրգիռ կողմերի մասնակցությունը

Հարցազրույցներ են իրականացվել աշխատանքային խմբի անդամ այն ՔՀԿ-ների հետ, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել գործողությունների ծրագրի մշակման գործընթացին, ինչպես նաև գործողությունների չորրորդ ծրագրի հանձնառությունների թեմատիկ բնագավառներում մասնագիտացված այլ ՔՀԿ-ների, լրագրողների և փորձագետների հետ: Ընդհանուր առմամբ, ԱՀՄ հետազոտողի կողմից իրականացվել է 31 հարցազրույց, այդ թվում՝ ինը դեմ առ դեմ և 22 հեռախոսային հարցազրույց: ԱՀՄ հետազոտողն իր

Հանրային քննարկման համար

Երախտագիտությունն է հայտնում շահագրգիռ կողմերին՝ զեկույցի մշակման գործում իրենց ներդրումն ունենալու համար:

ԱՀՄ հետազոտողը մասնակցել է նաև գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացում իրականացված մի շարք հանդիպումների:

- 2018 թ. փետրվարի 19-ին կառավարության աշխատակազմի կողմից կազմակերպված աշխատանքային խմբի հանդիպում, որի նպատակն էր քննարկել գործողությունների երրորդ ծրագրի իրականացման ընթացքը և ներկայացնել գործողությունների չորրորդ ծրագրի մշակման ժամանակացույցը: 2018 թ. հունիսի 29-ի աշխատանքային խմբի հանդիպում, որը նվիրված էր գործողությունների չորրորդ ծրագրի մշակման հետագա քայլերի և ՔՀԿ-ների հնարավոր դերի քննարկմանը:
- Քաղաքացիական հասարակության քննարկում «ՔՀԿ-ի դերը ԲԿԳ նախաձեռնության մեջ» թեմայով, որը կազմակերպվել էր 2018 թ. հունիսի 22-ին Երևանում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից:
- Գործողությունների չորրորդ ծրագրի հանձնառությունների առաջարկների քննարկման նպատակով վալիդացիոն հանդիպումներ՝ կազմակերպված սեպտեմբերի 3-10-ին Երևանում «Արմավիրի զարգացման կենտրոնի» կողմից և ծրագրի համատեղ մշակման հանդիպում՝ կազմակերպված սեպտեմբերի 18-19-ին Ադվերանում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից:

Անկախ հաշվետվական մեխանիզմի մասին

Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) այն առանցքային գործիքն է, որի միջոցով բոլոր շահագրգիռ կողմերը կարող են հետևել մասնակից երկրի կամ աշխարհագրական միավորի ԲԿԳ գործընթացին: ԱՀՄ զեկույցների որակի վերահսկողությունն իրականացնում է փորձագետների միջազգային խումբը (ՓՄԽ): Այս խումբը բաղկացած է թափանցիկության, մասնակցության, հաշվետվողականության և սոցիալական գիտությունների հետազոտական մեթոդների ոլորտներում փորձառություն ունեցող մասնագետներից:

Ներկայումս փորձագետների միջազգային խմբում ընդգրկված են հետևյալ անձինք.

- Սիգար Կրուգ-Ռուբիո
- Մերի Ֆրանքոլի
- Բրենդն Հալլբրան
- Հիլ Հինսբերգ
- Ջեֆ Լովիթ
- Ֆրեդլայն Մ'Քորմաք-Հեյլ
- Շաուերս Մավովա
- Խուանիտա Օլայա
- Քվենթին Ռիդ
- Ռիք Սնել
- Ժան-Պատրիկ Վիլնրվ

ԱՀՄ զեկույցների պատրաստման գործընթացը վարում է Վաշինգտոնում տեղակայված փոքրաթիվ անձնակազմը՝ սերտ համագործակցելով

Հանրային քննարկման համար

հետազոտողների հետ: Այս զեկույցի վերաբերյալ հարցերն ու
մեկնաբանությունները կարող եք ուղարկել ԱՀՄ աշխատակազմին՝
irm@opengovpartnership.org հասցեով:

¹ Շտեմարանը մշակման ընթացքում է և դեռևս հասանելի չէ

² ԱՀՄ ընթացակարգերի ուղեցույց, V.3, <https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual>

Հավելված I. Գործողությունների ծրագրի մշակման գործընթացում Հայաստանի կատարողականի ամփոփ նկարագիր

Բանալի՝

Կանաչ= համապատասխանում է չափորոշիչներին

Դեղին= ընթացքում է (քայլեր են ձեռնարկվել չափորոշիչներին

համապատասխանելու ուղղությամբ, սակայն դեռևս չի համապատասխանում չափորոշիչներին)

Կարմիր= կատարված քայլերի մասին որևէ հիմնավոր ապացույց չկա

Բազմաշահառու խումբ	
I ա. Ֆորումի առկայություն. կա ֆորում, որը վերահսկում է ԲԿԳ գործընթացը:	Կանաչ
I բ. Կանոնավոր հանդիպումներ. ֆորումը հանդիպում է առնվազն յուրաքանչյուր եռամսյակ, անձամբ կամ հեռակա կարգով:	Դեղին
I գ. Մանդատի համագործակցային մշակում. ֆորումի անդամները համատեղ են մշակում ֆորումի առաքելությունը, անդամակցության կարգը և կառավարման կառուցվածքը:	Դեղին
I դ. Հրապարակային մանդատ. ֆորումի առաքելության, անդամակցության կարգի և ղեկավարման կառուցվածքի մասին տեղեկատվությունը հասանելի է ԲԿԳ կայքում կամ էջում:	Կարմիր
2 ա. Բազմաշահառու կազմ. ֆորումը ներառում է ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ:	Կանաչ
2 բ. Հավասարություն. ֆորումում ընդգրկված են պետական և ոչ պետական կազմակերպությունների հավասար թվով ներկայացուցիչներ:	Դեղին
2 գ. Թափանցիկ ընտրություն. ոչ պետական կազմակերպություններ ներկայացնող անդամները ընտրվում են արդար և թափանցիկ գործընթացի միջոցով:	Կարմիր
2 դ. Կառավարության բարձր մակարդակի ներկայացուցչություն. ֆորումում ներգրավված են բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք որոշումների կայացման լիազորություն ունեն:	Դեղին
3 ա. Բաց ձևաչափ. ֆորումից դուրս գտնվող քաղաքացիական հասարակության կամ այլ շահագրգիռ կողմերի բոլոր	Կանաչ

Հանրային քննարկման համար

ներկայացուցիչներին գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկների և մասնակցության հնարավորություն է տրվում:	
3բ. Հեռակա մասնակցություն. առնվազն որոշ հանդիպումների և միջոցառումների դեպքում հեռակա մասնակցության հնարավորություններ են տրամադրվում:	Դեղին
3գ. Արձանագրություններ. ԲԿԳ ֆորումը պետական մարմինների ավելի լայն շրջանակին և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին ակտիվորեն տեղեկացնում և զեկուցում է իր որոշումների, գործողությունների և աշխատանքի արդյունքների մասին:	Կանաչ

Բանալի՝

Կանաչ= համապատասխանում է չափորոշիչներին

Դեղին= ընթացքում է (քայլեր են ձեռնարկվել չափորոշիչներին

համապատասխանելու ուղղությամբ, սակայն դեռևս չի համապատասխանում չափորոշիչներին)

Կարմիր= կատարված քայլերի մասին որևէ հիմնավոր ապացույց չկա

Գործողությունների ծրագրի մշակում	
4ա. Գործընթացի թափանցիկություն. առկա է ազգային ԲԿԳ կայք (կամ կառավարության կայքում ԲԿԳ կայքէջ), որտեղ տեղեկատվություն է տեղադրված երկրում ԲԿԳ-ի գործընթացի բոլոր ասպեկտների վերաբերյալ:	Դեղին
4բ. Փաստաթղթերի նախապես տրամադրում. ֆորումը ԲԿԳ մասին տեղեկությունները նախապես ներկայացնում է շահագրգիռ կողմերին, որպեսզի նրանք իրազեկված լինեն և պատրաստ մասնակցելու գործընթացի բոլոր փուլերին:	Դեղին
4գ. Իրազեկման աշխատանքներ. ֆորումը իրազեկման և հանրայնացման աշխատանքներ է իրականացնում համապատասխան շահագրգիռ կողմերի շրջանում՝ նրանց ԲԿԳ գործընթացի մասին տեղեկացնելու նպատակով:	Կանաչ
4դ. Հաղորդակցության միջոցներ. կառավարությունը շահագրգիռ կողմերի հետ անմիջական հաղորդակցության հնարավորություն է ստեղծում՝ գործողությունների ծրագրի վերաբերյալ հարցերին պատասխանելու համար, հատկապես ԲԿԳ գործընթացի ծանրաբեռնված փուլերում:	Դեղին
4ե. Հիմնավորման ներկայացում. բազմաշահառու ֆորումը հրապարակում է իր որոշումների հիմնավորումները և արձագանքում հանրության հիմնական մեկնաբանություններին:	Դեղին

5ա. Շտեմարան. կառավարությունը փաստաթղթերի շտեմարան է հավաքագրում և հրապարակում ազգային ԲԿԳ կայքում կամ կայքէջում՝ ժամանակագրական տվյալները ֆիքսող փաստաթղթային արխիվ պահելու և ԲԿԳ ազգային գործընթացի հետ կապված բոլոր փաստաթղթերի հասանելիությունը ապահովելու նպատակով: Այս շտեմարանում ներառվում են (և ոչ միայն) քննարկումների վերաբերյալ փաստաթղթերը, գործողությունների ազգային ծրագրերը, կառավարության ինքնագնահատման հաշվետվությունները, ԱՀՄ հաշվետվությունները և հանձնառությունների կատարման հետ կապված փաստաթղթերը (օրինակ, տվյալների շտեմարանների հղումներ, հանդիպումների փաստաթղթավորում, հրապարակումներ)	Դեղին
--	---------------------

***Խմբագրական.** եթե երկիրը համապատասխանում է ընդգծված վեց չափորոշիչներին, ապա ԱՀՄ-ը այդ երկրի գործընթացները գնահատում է որպես «աստղանշված գործընթաց»:*